

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈՒՆ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
թողարկողի անվանումը և կազմակերպահրավական ձևը

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Հ. Հակոբյան 32., 3հ., 301, 302, 318ս,

Հեռ՝(+37455) 110607

Էլ.-փոստ՝ info@uate.org,

Կայք՝ <https://uate.org/>

«ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

գլխավոր տեղաբաշխողի անվանումը և կազմակերպահրավական ձևը

Հասցե՝ Երևան 0010, Վ. Սարգսյան փող. 26/1, Էրեբունի Պլազա, տարածք 812

Հեռ՝ (+ 374 12) 300 900

Էլ.-փոստ՝ requests@siriuscapital.am

Կայք՝ www.siriuscapital.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Արժեթղթերի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը	Համապատասխան թողարկման ծավալի ու անվանական արժեքի
Արժեթղթերի անվանական արժեքը՝	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝	1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի թողարկման ծավալը	Ենթակա է որոշման Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Արժեկտրոնը՝	Ենթակա է որոշման Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին 1.	ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 4	
Բաժին 2.	ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	26
Բաժին 3.	ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	54
Բաժին 4.	ԵՐԱՇԽԱՎՈՐԻ և ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	75
Բաժին 5.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	96
<u>ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (իրավաբանական անձանց համար).....</u>		<u>96</u>
<u>ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար).....</u>		<u>98</u>
<u>ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԲԱՆԱԶԱՆԵՐԸ.....</u>		<u>101</u>
<u>ՀԱՎԵԼՎԱԾ 4: ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ</u>		<u>102</u>
ՀԱՎԵԼՎԱԾ 5: ԹՈՂԱՐԿՈՂԻ 2023Թ և 2024Թ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		110
ՀԱՎԵԼՎԱԾ 6: «ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ		182

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք Ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել Ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Անուն Ազգանուն	Պաշտոն	Ստորագրություն	Ամսաթիվ
Ալեքսանդր Եսայան	Տնօրենների խորհրդի նախագահ		29.12.2025
Սարգիս Կարապետյան	Տնօրենների խորհրդի անդամ		29.12.2025
Կարեն Վարդանյան	Տնօրենների խորհրդի անդամ		29.12.2025
Ստորագրությունները հաստատում եմ՝			
Խաչատուր Հակոբյան	Տնօրեն		29.12.2025
«Սիրիուս Կապիտալ» ՓԲԸ՝ ի դեմս տնօրեն Արարատ Մկրտչյանի	Տեղաբաշխող		29.12.2025

Բաժին 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Թողարկող» կամ «Ընկերություն») պարտատոմսերի ազդագրի (այսուհետ՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա: Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ «Սիրիուս կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տեղաբաշխող) գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ <https://uate.org/>, www.siriuscapital.am: 2023-2024 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրը Թողարկողի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվություններն են: Մնացած տվյալների ներկայացման աղբյուրն է Ընկերության ներքին տեղեկատվական համակարգը, ինչպես նաև պետական մարմինների և այլ կազմակերպությունների կողմից պաշտոնապես հրապարակված տեղեկատվությունը:

1.1 Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1.1. Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Ռուսերեն՝ “ Ю Ай Ти И Экспо ” Общество с Ограниченной Ответственностью

Անգլերեն՝ “UITExpo” Limited Liability Company

Թողարկողի կարճ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ

Ռուսերեն՝ “Ю Ай Ти И Экспо” ООО

Անգլերեն՝ “UITExpo” LLC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Հ.Հակոբյան 32. 3 հ, 301, 302, 318 ս.,

Թողարկողի պետական գրանցման համարն է՝ 286.110.05729

Թողարկողի գրասենյակների գտնվելու վայրերն են՝ ՀՀ, ք. Երևան, Հ.Հակոբյան 32. 3 հ, 301, 302, 318 ս.,

Կապի միջոցներ՝ Հեռ՝(+37455) 110607

Էլ.-փոստ՝ info@uate.org,

Կայք՝ https://uate.org/

Թողարկողին առնչվող հարցերի դեպքում ներդրողները կարող են դիմել «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈՆ» ՍՊԸ տնօրեն Խաչատուր Նվերի Հակոբյանին (հեռ. +374 94 464771), էլեկտրոնային հասցե՝ info@uate.org

1.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈՆ» ՍՊԸ-ն գրանցվել է 2005 թ.-ի հունիսի 06-ին, Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում: Ներկայումս Ընկերության ունի 1 գրասենյակ Երևանում: Ընկերությունը զբաղվում է միջոցառումների՝ մասնավորապես «Դիջիթեք» ցուցահանդեսի կազմակերպմամբ:

1.1.3. Թողարկողի կանոնադրական կապիտալը և նշանակալից մասնակիցները

Ընկերության կանոնադրական կապիտալը, 2005 թվականի հունիսի 06-ին գրանցված և 2025 թվականի դեկտեմբերի 09-ին փոփոխված կանոնադրության համաձայն՝ սահմանված է **50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ** և բաժանված է **1 (մեկ) բաժնեմասի**, որը պատկանում է հետևյալ մասնակցին.

ՄԱՆԱԿԻՑ	ՄԱՆԱԿՑԻ ՆԵՐԴՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ՉԱՓ	ԲԱԺՆԵՄԱՍԻ ՉԱՓԸ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ (%)	ԲԱԺՆԵՄԱՍԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ	50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ	100%	50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

Ընկերության բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են ու լրիվ վճարված: Ընկերության բաժնեմասերը գրավադրված չեն:

Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Թողարկողի ներքին կազմակերպական կառուցվածքը ներկայացված է ստորև՝

Մասնակիցների ընդհանուր ժողով
Տնօրենների Խորհուրդ
Տնօրեն

1.1.4. Թողարկողի բիզնես նկարագիրը

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈՆ» ՍՊԸ-ն գործում է իվենթենեյնմենթի, քրեսսայթինգի և հաղորդակցության ոլորտներում՝ իր ծառայությունները կենտրոնացնելով միջոցառումների կազմակերպման, խորհրդատվության և հաղորդակցական լուծումների վրա. միջոցառումների ուղղության առանցքային նախագիծը DigiTec-ն է՝ Հայաստանի և տարածաշրջանի խոշորագույն տեխնոլոգիական իրադարձություններից ու երկրում ամենամասսայական միջոցառումներից մեկը, որն ամեն տարի անցկացվում է ցուցահանդես-կոնֆերանս-փառատոն ձևաչափով և ընդունում է տասնյակ հազարավոր այցելուներ ու մասնակիցներ: 2026-2028 թթ. նախատեսվում է խորհրդատվական ծառայությունները փուլային կերպով զարգացնել դեպի բովանդակային ծառայություններ, իսկ հաղորդակցության ուղղությամբ նախատեսվում է ընդլայնում՝ միջազգային առաջատար մեդիաներում մեդիաարշավների կազմակերպմամբ:

1.1.5. Ակտիվների որակ

Թողարկողի ակտիվների ընդհանուր գումարը 2025 թվականի հունիսի 30-ի, 2024 թվականի դեկտեմբերի 31-ի և 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է համապատասխանաբար 190,574 հազ. ՀՀ դրամ, 89,735 հազ. ՀՀ դրամ և 90,640 հազ. ՀՀ դրամ, որից համապատասխանաբար 186,972 հազ ՀՀ դրամ, 88,486 հազ. ՀՀ դրամ և 88,596 հազ. ՀՀ դրամ կազմում են տրամադրված փոխառությունները:

«ԱՏՁՄ» ՀԿ-ին տրամադրված փոխառությունների չափը 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 178,506 հազ. ՀՀ դրամ:

Թողարկողի ընթացիկ ակտիվները 2025 թվականի հունիսի 30-ի, 2024 թվականի դեկտեմբերի 31-ի և 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են

համապատասխանաբար 3,602 հազ. ՀՀ դրամ, 1,250 հազ. ՀՀ դրամ և 2,044 հազ. ՀՀ դրամ: Ընթացիկ ակտիվները հիմնականում ներկայացված են դեբիտորական պարտքերով և դրամական միջոցներով:

2023 թվականի, 2024 թվականի և 2025 թվականի առաջին կիսամյակի միջանկյալ հաշվետվությունների արդյունքներով «ԱՏՁՄ» խմբի («ԱՏՁՄ» ՀԿ, «Յու Այ Թի Ի Էքսպո» ՍՊԸ) ակտիվների շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը ընդհանուր ակտիվների միջին մեծությանը) կազմել է համապատասխանաբար՝ -50.38%, -35.98% և -42.24%:

2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ «ԱՏՁՄ» խմբի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 295,537,000 ՀՀ դրամ, իսկ կապիտալի համարժեքության գործակիցը (սեփական կապիտալի հարաբերությունը ընդհանուր ակտիվներին) կազմել է -1.8:

1.2. Թողարկողին և թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկերը

Պարտատոմսերում ներդրում կատարելու մասին ցանկացած որոշման պետք է նախորդի դրա հետ կապված ռիսկերի վերլուծությունը: Այս առումով անհրաժեշտ է հստակ տարանջատում մտցնել Թողարկողին, և պարտատոմսերին առնչվող ռիսկերի միջև: Թողարկողի հետ կապված ռիսկերը պայմանավորված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Այս դեպքում, Թողարկողին առնչվող հիմնական ռիսկերը ներկայացված են ստորև:

1.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկ: Պայմանավորված է օրենսդրության այնպիսի փոփոխություններով, որոնք կազդեն ինչպես Ընկերության գործունեության, այնպես էլ ՏՏ շուկայում տիրող իրավիճակի վրա:

Մրցակցային ռիսկ: Առնչվում է ՏՏ ոլորտում առկա մրցակցության բավականին բարձր մակարդակի հետ՝ պայմանավորված շուկայական մեծ պահանջարկով և առաջարկով, որի հետևանքով ՏՏ ոլորտում գործող ընկերությունների թիվը կարող է նվազել, ինչը որոշակի վտանգներ է ստեղծում Ընկերության հաջող ֆինանսատնտեսական գործունեության ապահովման տեսանկյունից, քանի որ Թողարկողի կողմից կազմակերպվող Դիջիթալ ցուցահանդեսի հիմնական մասը կազմում են հենց ՏՏ ոլորտում գործող ընկերությունները:

Վարկային ռիսկ/դեֆոլտի ռիսկ: Առնչվում է Ընկերության կողմից իր վարկային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելուն կամ չկատարելուն:

Իրացվելիության ռիսկ: Պայմանավորված է Ընկերության ազատ դրամական միջոցների անբավարարությամբ, ինչը վտանգում է պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարումը: Այս տիպի ռիսկի ծագման սկզբնաղբյուրների թվում են մակրոտնտեսական վիճակի վատթարացումը:

Տոկոսադրույքի ռիսկ: Կապված է շուկայում տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի անսպասելի և կտրուկ փոփոխությունների հետ, որոնք կարող են անդրադառնալ ֆինանսական գործիքների գների և եկամտաբերության վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է զգալի բացասական ազդեցություն թողնել Ընկերության ինչպես տոկոսային եկամուտների, այնպես էլ տոկոսային ծախսերի վրա՝ հանգեցնելով ֆինանսական ցուցանիշների վատթարացման ու շահույթի կրճատման:

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունն է ընկերության գործունեության վրա, որը կարող է արտահայտվել մի քանի ուղղություններով: ՀՀ-ում SS ոլորտի եկամուտների մեծ մասը արտարժույթով են ձևավորվում, ուստի դրամի արժևորումը կնպաստի SS ոլորտում ֆինանսական վիճակի վատթարացման, ինչն էլ իր հերթին կհանգեցնի «USՁՄ» խմբի ընկերությունների ֆինանսական հոսքերի պակասեցման, մասնավորապես՝ «Դիջիտեքին» մասնակցության նվազեցման:

Ֆինանսական բեռի ռիսկ: Ընկերության հաշվեկշռում առկա են պարտավորություններ թե՛ վարկային միջոցների, թե՛ փոխառությունների և թե՛ այլ պարտավորությունների տեսքով: Պարտատոմսերի թողարկումը ևս կնպաստի պարտավորությունների ավելացմանը: Այս պարտավորությունների սպասարկումը պահանջում է կայուն դրամական հոսքեր: Եկամուտների կամ դրամական հոսքերի անբարենպաստ փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Ընկերության պարտավորությունների ժամանակին և ամբողջական կատարման վրա:

Գործառնական ռիսկեր: Ընկերության բնականոն գործունեությունը զգալիորեն առնչվում է տարատեսակ գործառնական ռիսկերի, որոնց թվում է, մասնավորապես, մատակարար գործընկերների կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը, ինչը կարող է հանգեցնել Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների դանդաղեցման՝ առաջացնելով լրացուցիչ ֆինանսական խնդիրներ: Բացի այդ, նման խնդիրներ կարող են առաջանալ նաև աշխատուժի պակասուրդի մասով՝ պայմանավորված շուկայում առկա աշխատուժի պահանջարկով: Այսօրինակ գործառնական ռիսկերը կարող են վտանգել ոչ միայն Ընկերության ֆինանսական ցուցանիշները, այլ նաև գործարար համբավը:

1.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկը: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ

եկամտաբերության ցուցանիշի վերանայման: Ընդ որում, որ այլ հավասար պայմաններում պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների բարձրացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկը: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշներով և դրանց փոփոխություններով պայմանավորված: Ներդրողը պետք է հաշվի առնվի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժույթային ռիսկ: Թողարկվող պարտատոմսերն արտահայտված են ՀՀ դրամով և ներդրումների ստացումը իրականացվելու են ՀՀ դրամով: Ուստի, այս առումով արտարժույթային ռիսկն առկա է միայն այն ներդրողների համար, ովքեր իրենց արտարժույթային միջոցները պետք է փոխանակեն ՀՀ դրամի՝ պարտատոմսերում ներդնելու համար:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով և/կամ ծավալով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր:

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

2023 թվականին Ընկերության հիմնական եկամուտը ձևավորվել է «Դիջիթեք Էքսպո» ցուցահանդեսի կազմակերպումից և կազմել է շուրջ 103 մլն ՀՀ դրամ, իսկ հաշվետու տարվա շահույթը՝ շուրջ 53.6 մլն ՀՀ դրամ:

2024 թվականին Ընկերության կողմից գեներացված եկամուտը կազմել է ընդամենը շուրջ 7 մլն ՀՀ դրամ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Դիջիթեք» ցուցահանդեսի իրականացումն այդ տարի կատարվել է «ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ», հասարակական կազմակերպության (այսուհետ նաև՝ «**Երաշխավոր**» կամ «**ԱՏՁՄ**») կողմից, որը հանդիսանում է Ընկերության միակ մասնակիցը և պարտատոմսերի թողարկման նպատակով տրամադրում է երաշխավորություն:

Միևնույն ժամանակ, «Դիջիթեք» ցուցահանդեսից ստացված եկամուտները 2024 թվականին կազմել են շուրջ 311 մլն ՀՀ դրամ, իսկ 2025 թվականին՝ շուրջ 334 մլն ՀՀ դրամ: Ընկերության գործունեությունը գտնվում է ընկերության մասնակիցների և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք մշտապես հետևում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով գործունեությունը և զարգացման ծրագիրը շուկայի և նորագույն մոտեցումների պահանջներին:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ

Թողարկողի 2023-2024թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ «**Աուդիտորական կազմակերպություն**»): «Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (նախկինում՝ «Մեխքյանս ընդ. Բո» ՍՊԸ) ստեղծվել է 1999թ. հուլիսի 20-ին՝ ք. Երևան, Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ն. Գոգոլի փ., 12-14 շենք, 78 գրասենյակ: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Չեյլուսկինցիների 62: Աուդիտորական կազմակերպություն աուդիտորական ծառայությունների մատուցման լիցենզիա է ստացել՝ անդամակցելով Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատին՝ համաձայն ՀԱՊ խորհրդի 2021թ.-ի փետրվարի 17-ի 30-Ա որոշման (ՀԳԳՀ՝ 1 21 0489) և ծառայություններ է մատուցում առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև ֆինանսական ոլորտի կազմակերպություններին: Աուդիտորական կազմակերպությունն աուդիտորական, հարկային և խորհրդատվական ծառայություններ է մատուցում տնտեսվարող սուբյեկտների, որոնք գործունեություն են իրականացնում տնտեսության տարբեր ոլորտներում: Աուդիտորական կազմակերպությունն առաջարկում է ծառայությունները տարբեր փաթեթներ՝ կախված ընկերության պահանջներից, գործունեության ոլորտից և

առանձնահատկությունից: Աուդիտորական կազմակերպությունն ունի ներքին հսկողության արդյունավետ համակարգ, որը երաշխավորում է մատուցվող ծառայությունների բարձր որակի ապահովում: «Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մատուցում է արտաքին աուդիտի, հաշվապահական հաշվառման, ֆինանսական, հարկային խորհրդատվական և այլ մասնագիտացված ծառայություններ Հայաստանում և արտերկրում: Աուդիտորական կազմակերպության տնօրենն է Ռոբերտ Մելիքյանը: Ընկերությունը գործում է ՀՀ, ք. Երևան, Ն. Գոգոլի փ., 12-14 շենք, 78 գրասենյակ հասցեում: Հեռ.՝ +(374) 95 90 19 49:

Կայք՝ <https://www.moore-armenia.am/hy/> էլ. հասցե՝ info@moore-armenia.am

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են [Հավելված 5-ում](#):

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, խոշոր մասնակիցներ

Ընկերության կառավարման մարմիններն են ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, Տնօրենների խորհուրդը և գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է:

1.5.1 Թողարկողի մասնակիցներն են.

Մասնակից	Ներդրման արդյունքում բաժնեմասի չափը (%)	Բաժնեմասի չափը
«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ	100%	50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

1.5.2 Թողարկողի խորհուրդի կազմը

Խորհուրդի անդամը	Պաշտոնը	Փորձառությունը
Ալեքսանդր Հովիկի Եսայան	Խորհրդի նախագահ	16 տարի
Սարգիս Համլետի Կարապետյան	Խորհրդի անդամ	20 տարի
Կարեն Սուրենի Վարդանյան	Խորհրդի անդամ	21 տարի

1.5.3 Թողարկողի Տնօրեն

Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
Խաչատուր Նվերի Հակոբյան	Տնօրեն	10 տարի, 2025թ. ընկերության տնօրենն է

1.5.4 Աշխատակիցներ

Թողարկողի կազմում աշխատակիցների թիվը 2025թ. -ի նոյեմբերի 30-ի դրությամբ կազմում է 4 մարդ: Ազդագրի կազմման դրությամբ Թողարկողի և թողարկողի հետ փոխկապակցված բոլոր ընկերությունների աշխատակիցների թիվը կազմում է 20 մարդ:

1.6 Առաջարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող պարտատոմսերը անվանական են, ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն:

Պարտատոմսերի դիմաց տոկոսային եկամուտը վճարվելու է արժեկտրոնների տեսքով:

Թողարկման (առաջարկի) ծրագրային ընդհանուր ծավալը կազմում է 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

Թողարկման արժույթը՝ ՀՀ դրամ:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են այն արժույթով, որով թողարկվել են:

Դրամային պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

Տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) հատ:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի (միակ մասնակցի) կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնի մեծությունը և արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի (միակ մասնակցի) կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի թողարկման արդյունքում ներգրավվող միջոցները նախատեսվում է ուղղել Թողարկողի և «ԱՏՁՄ» խմբի ֆինանսական կայունության ամրապնդման, գործունեության ընդլայնման և եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացման նպատակներին՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

450 մլն. ՀՀ դրամ՝ գործող պարտավորությունների/ֆինանսական միջոցների վերաֆինանսավորում (ֆինանսական բեռի օպտիմալացում և վճարունակության ապահովում),

Վերաֆինանսավորվելու են շուրջ 80 մլն ՀՀ դրամ վարկային միջոցներ, որոնք գտնվում են թողարկողի հաշվեկշռում, իսկ մնացած պարտավորությունները՝ Երաշխավորի հաշվեկշռում՝ շուրջ 240 մլն ՀՀ դրամ գործընկերների կողմից տրված փոխառություններ, շուրջ 100 մլն ՀՀ դրամ գնումների գծով կրեդիտորական պարտավորություններ և շուրջ 30 մլն ՀՀ դրամի այլ պարտավորություններ:

50 մլն. ՀՀ դրամ՝ ներդրում DigiTec վաճառքների զարգացման միջոցառումներում (վաճառքների խթանում, վաճառքի ալիքների/գործիքների ուժեղացում),

50 մլն. ՀՀ դրամ՝ ներդրում անդամակցության աճի ուղղությամբ (անդամների ներգրավման և պահպանումը խթանող ծրագրեր),

50 մլն. ՀՀ դրամ՝ ներդրում այլ պարբերական եկամուտների զարգացման և դիվերսիֆիկացման ուղղությամբ (նոր եկամտային հոսքերի ձևավորում),

800 մլն. ՀՀ դրամ՝ ներդրում UATE PowerHouse նախագծում (co-working և գրասենյակային տարածքներ)

100 մլն. ՀՀ դրամ՝ ռեզերվային ֆոնդ (լիկվիդայնության պահուստ/անհապաղ ծախսերի ծածկույթ):

Նշված բաշխումն արտացոլում է Թողարկողի ընթացիկ նպատակները և կարող է ճշգրտվել՝ հաշվի առնելով շուկայական պայմանները, բանակցությունների արդյունքները և նախագծերի իրականացման ժամանակացույցը՝ առանց ներգրավվող միջոցների օգտագործման ընդհանուր նպատակի խախտման:

1.7 Պարտատոմսերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտվելու օրը, ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են որոշման Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի (միակ մասնակցի) կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը մանրամասն նկարագրությունը ներդրողը կարող է ծանոթանալ սույն Ազդագրի Բաժին 2-րդում:

1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի (միակ մասնակցի) կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները հրապարակելու է առնվազն Թողարկողի <https://uate.org/> և Տեղաբաշխողի www.siriuscapital.am ինտերնետային կայքերում:

1.9 Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալներ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ			
Ցուցանիշի անվանումը	2025 I Կիսամյակ (հազ.)	2024 (հազ. ՀՀ դրամ) Աուդիտ անցած	2023 (հազ. (հազ. ՀՀ դրամ) Աուդիտ անցած
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	955	6,847	103,038
Ծրագրերի գծով ծախսեր	-11,907	-1,908	-40,510
Համախառն շահույթ (վնաս)	-10,953	4,939	62,528
Իրացման ծախսեր	0		
Վարչական ծախսեր	-1,733	-2,115	-7,231
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	-12,686	2,824	55,297
Գործառնական այլ եկամուտներ			
Գործառնական այլ ծախսեր			
Գործառնական շահույթ (վնաս)	-12,686	2,824	55,297
Ֆինանսական եկամուտներ (ծախսեր)	-11,414	-3,664	-2,093
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)			
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)			
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)		0	-1.00
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	-24,101	840	53,203

Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)			
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը			
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)			
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-24,101	840	53,203
ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ			
Ցուցանիշի անվանումը	2025 Հունիսի 30 (հազ.)	2024 (հազ. ՀՀ դրամ) Աուդիտ անցած	2023 (հազ. ՀՀ դրամ) Աուդիտ անցած
Հիմնական միջոցներ			
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ			
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ			
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	186,972	88,486	88,596
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	186,972	88,486	88,596
Պաշարներ			
Տրված ընթացիկ կանխավճարներ			
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով			
Այլ դեբիտորական պարտքեր	1,118	1,118	1,118
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,485	132	926
Այլ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	3,602	1,250	2,044
Ընդամենը ակտիվներ	190,574	89,736	90,640
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	50	50	50
Էմիսիոն եկամուտ			
Կուտակված շահույթ (վնաս)	15,381	39,482	40,322

Պահուստային կապիտալ			
Սեփական կապիտալի այլ տարրեր			
Ընդամենը սեփական կապիտալ	15,431	39,532	40,372
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ			
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	0	0	0
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	167,603	50,000	50,000
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	6,950	100	100
Ստացված ընթացիկ կանխավճարներ			
Այլ կրեդիտորական պարտքեր	591	104	168
Այլ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	175,144	50,204	50,268
Ընդամենը պարտավորություններ	175,144	50,204	50,268
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	190,574	89,736	90,640
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏԿՅԱԼՆԵՐ			
Ցուցանիշի անվանումը	2025 I կիսամյակ (հազ.)	2024 (հազ. ՀՀ դրամ) Աուդիտ անցած	2023 (հազ.ՀՀ դրամ) Աուդիտ անցած
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	131	926	171
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-16,764	-905	10,104
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	0	0	0
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	19,114	110	-9,349
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	2,485	131	926
ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ			
Ցուցանիշի անվանումը	2025 Հունիսի 30	2024 (հազ.)	2023 (հազ.)

	(հազ.)		
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-24,101	-840	53,202
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-87.70%	-2.1%%	386.35%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-17.20%	0.93%%	82.57%
Զուտ շահույթի մարժա (NPM)	-2524.67%	-12.28%	51.63%
Կապիտալի համարժեքության գործակից	0.08	0.44	0.45
Ֆինանսական կախվածության գործակից	11.35	1.27	1.25
Բացարձակ իրացվելիության գործակից	0.01	0.003	0.02
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.02	0.02	0.04
Ընդհանուր իրացվելիության գործակից	0.02	0.02	0.04
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.85	6.13	25.26
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	427.32	59.58	14.45
Պաշարների շրջանառելիության գործակից			94.72
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով			3.85
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	34.27	13.43	95.14
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	10.65	27.19	3.84

1.10 Տեղեկատվություն երաշխավորության մասին

Պարտատոմսերից բխող Թողարկողի պարտավորությունների կատարումը՝ ներառյալ պարտքի հիմնական գումարի (մայր գումարի) վերադարձը և կուպոնային եկամտի վճարումը պարտատոմսերի սեփականատիրոջը (ներդրողին), երաշխավորվում է «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության կողմից:

Երաշխավորությունը տրամադրվում է Թողարկողի և Երաշխավորի միջև կնքված Պարտատոմսերից բխող պարտավորությունների երաշխավորման պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ «**Երաշխավորության պայմանագիր**»): Երաշխավորության պայմանագրով Երաշխավորը ստանձնում է պարտավորություն՝ Թողարկողի հետ համապարտ պատասխանատվություն կրել Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերով ստանձնված պարտավորությունների կատարման համար՝ սույն ծրագրային ազդագրով և պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված շրջանակում:

1.10.1. Երաշխավորի անվանումը և կազմակերպատիրական ձևը

Երաշխավորի անվանումն է՝

	Լրիվ ֆիրմային անվանումը	Կրճատ անվանումը
հայերեն՝	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն	«ԱՏՁՄ» ՀԿ
ռուսերեն՝	Общественная организация «Союз компаний передовых технологий»	ОО «СКПТ»
անգլերեն՝	Non-Governmental Organization “Union of Advanced Technology Enterprises”	NGO “UATE”

Երաշխավորը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված և գործող հասարակական կազմարպություն:

ԱՏՁՄ-ն հանդես է գալիս որպես Հայաստանի տեխնոլոգիական ասոցիացիա՝ միավորելով տեխնոլոգիական ոլորտում գործունեություն իրականացնող ընկերություններին և հանդես գալով որպես ոլորտային համագործակցության հարթակ:

1.10.2. Հիմնական գործունեությունը

ԱՏՁՄ-ի կողմից իրականացվող ծրագրերը և նախաձեռնությունները հիմնականում կրում են հանրային-մասնավոր համագործակցության, կրթական, էկոհամակարգային զարգացման, ինչպես նաև քաղաքականությունների մշակման և շահերի պաշտպանության բնույթ և իրականացվում են պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, դոնորների, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և այլ գործընկերների հետ համագործակցությամբ: Սույն բաժնում ներկայացված ծրագրերը չեն հանդիսանում առևտրային ծառայությունների մատուցում և ուղղված չեն եկամուտ ստանալուն, այլ արտացոլում են ԱՏՁՄ-ի ծրագրային և համակարգող գործունեությունը:

Գործարար էկոհամակարգի զարգացում

Քաղաքականությունների մշակում և շահերի պաշտպանություն

2022–2025 թվականներին ԱՏՁՄ-ն շարունակել է մասնակցել պետական քաղաքականությունների մշակման և բարելավման գործընթացներին՝ ներկայացնելով տեխնոլոգիական համայնքի դիրքորոշումները ինչպես պետություն-մասնավոր

փոխգործակցությունն ապահովող մասնագիտացված հարթակների, այնպես էլ պատասխանատու մարմինների հետ ուղղակի և անմիջական աշխատանքի շրջանակում:

«ԱՏՁՄ կարողությունների զարգացում՝ նախաձեռնողական և արդյունավետ շահերի պաշտպանության ռազմավարություն մշակելու համար» ծրագիր

2025 թվականից ԱՏՁՄ-ն Ռազմավարական զարգացման գործակալության հետ համատեղ՝ Reconomy ծրագրի շրջանակում, գործարկել է «ԱՏՁՄ կարողությունների զարգացում՝ ավելի նախաձեռնողական և արդյունավետ շահերի պաշտպանության ռազմավարություն մշակելու համար» ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել քաղաքականության այնպիսի փոփոխությունների նախաձեռնմանն ու խթանմանը, որոնք նպաստում են ՏՏ ծառայություններ մատուցող ընկերությունների համար առավել բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմանը:

ICT Leaders Meeting / «Առանց փողկապների հանդիպում»

2023 թվականին ԱՏՁՄ-ն GIZ-ի հետ համագործակցությամբ իրականացրել է պետություն-մասնավոր փոխգործակցության ծրագրերի, ինչպես նաև բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված պետական քաղաքականությունների գույքագրում և վերլուծություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով պետական գնումների համակարգում առկա խնդիրներին և դրանց լուծման հնարավոր մեխանիզմներին:

Կրթության և աշխատուժի զարգացում

«Արմաթ» ճարտարագիտական կրթության ազգային ծրագիր

2022–2025 թվականներին ԱՏՁՄ-ն շարունակել է իրականացնել և զարգացնել «Արմաթը»՝ ճարտարագիտական կրթության հայկական ազգային ծրագիրը: Ծրագիրն այսօր հասանելի է ՀՀ յուրաքանչյուր երկրորդ դպրոցում, ներառում է ավելի քան 630 ճարտարագիտական աշխատանոց, որտեղ շուրջ 17,000 դպրոցական ստանում է առաջնային տեխնոլոգիական կրթություն: «Արմաթ»-ն ունի շուրջ 9,000 շրջանավարտ, որոնցից 51%-ը շարունակում է կրթությունը ԲՈՒՀ-երի տեխնոլոգիական ֆակուլտետներում:

«Իննոհջևան» հանգույց

«Իննոհջևան հանգույցը» ԱՏՁՄ-ի կողմից իրականացված և ներկայում շարունակվող նախաձեռնություն է, որը գործարկվել է Իջևանի համայնքապետարանի և COWO կազմակերպության հետ համատեղ՝ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի նպատակն է Իջևանի տարածաշրջանի տնտեսական զարգացման խթանումը՝ հանրային-մասնավոր փոխգործակցության ընդլայնման և տեղական նորարարական էկոհամակարգի ձևավորման միջոցով:

ArmRobotics, DigiCode և Armath TechnoCamp

2022–2025 թվականներին ԱՏՁՄ-ն շարունակել է իրականացնել և զարգացնել ArmRobotics ռոբոտաշինական առաջնությունը, DigiCode կիրառական ծրագրավորման առաջնությունը,

ինչպես նաև «Արմաթ Տեխնոճամբար» ամառային տեխնոլոգիական ճամբարը՝ ուղղված դպրոցականների տեխնոլոգիական կարողությունների զարգացմանը:

ATF, Armenian Technological Future

2022–2023 թվականներին ԱՏՁՄ-ն իրականացրել է «Հայկական տեխնոլոգիական ապագա» (ATF) նախաձեռնությունը՝ համագործակցելով Երևանի պետական համալսարանի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Ռուս-հայկական համալսարանի և Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ:

TechWeek

2025 թվականից ԱՏՁՄ-ն հանդիսանում է TechWeek միջոցառման համակազմակերպիչ: TechWeek-ը իրականացվում է որպես Երևանից դուրս անցկացվող եռօրյա տեխնոլոգիական միջոցառում՝ ներառելով կոնֆերանս, հեքթեռններ, փիթչինգ սեսիաներ, ցուցահանդեսային և մշակութային ծրագրեր:

Միջազգային շուկաների զարգացում

2022–2025 թվականների ընթացքում ԱՏՁՄ-ն աջակցել է տեխնոլոգիական համայնքի ընկերությունների միջազգային ներգրավվածությանը՝ կազմակերպելով մասնակցություն արտասահմանյան մասնագիտացված ցուցահանդեսների, ֆորումների և ճանաչողական այցերի (օր.՝ VivaTech, Japan IT Week և այլն):

Տեխնոլոգիաների կիրառում

2025 թվականին ԱՏՁՄ-ն Ռազմավարական զարգացման գործակալության հետ համատեղ՝ Reconomy ծրագրի շրջանակում, մեկնարկել է «Թվայնացվող ոլորտներ՝ մրցունակության համար» նախագիծը, որը կենտրոնացած է Հայաստանի զբոսաշրջության ոլորտի ՓՄՁ-ների թվային փոխակերպման վրա:

1.10.3. Զարգացման վերջին միտումները

«ԱՏՁՄ» խմբի հասույթը հաշվետու ժամանակահատվածներում ունեցել է դրական դինամակա՝ 2023թ-ին այն կազմել է 1,741,854 հազ ՀՀ դրամ, 2024թ-ին՝ 1,805,486 հազ. ՀՀ դրամ, իսկ 2025թ-ին, ըստ նախնական տվյալների, կազմելու է 1,680,000 հազ. ՀՀ դրամ: Հասույթի դինամիկային վրա էական ազդեցություն է ունեցել 2024թ.-ին իրականացված WCIT համաժողովը:

Խմբի ծախսերի մեջ էական մեծություն են կազմում աշխատավարձային ծախսերը և միջոցառումների կազմակերպման հետ կապված ծախսերը, որոնց մանրամասները ներկայացված են ընկերության աուդիտորական հաշվետվությունում:

Հարկ է նշել, որ ընկերությունների խումբը բոլոր հաշվետու ժամանակահատվածներում ունեցել է վնաս 2025թ.-ի առաջին եռամսյակում՝ -132,296 հազ. ՀՀ դրամ, 2024թ.-ին՝ -102,946 հազ. ՀՀ դրամ, իսկ 2023թ.ին՝ -144,253 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության գործունեության ցուցանիշների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար պտտենցիալ ներդրողները կարող են ծանոթանալ Կազմակերպության տարեկան և կիսամյակային հաշվետվություններին:

ԱՏՁՄ խումբը վերջին երեք տարիների ընթացքում զգալիորեն ուժեղացրել և բարելավել է իր ցուցանիշները աճելով թե՛ անդամների քանակով, թե՛ կայուն եկամուտներով և թե՛ ոլորտում իր ներգրավվածությանմբ:

ԱՏՁՄ ՀԿ-ի անդամների թիվը աճել է շուրջ 170%-ով՝ մոտ 100-ից հասնելով 270-ի: Միաժամանակ, անդամակցության վճարներից ստացվող եկամուտները ավելացել են ավելի քան 400%-ով՝ տարեկան մոտ 60 մլն դրամից հասնելով 245 մլն ՀՀ դրամի:

Դիջիթալ ցուցահանդեսը նույնպես շարունակում է աճել:

2023 թվականին Digitec-ին մասնակցել է 120 ընկերություն, այցելուների թիվը կազմել է շուրջ 15,000:

2024 թվականին մասնակից ընկերությունների թիվը աճել է մինչև 180, իսկ այցելուները՝ մինչև 22,000:

2025 թվականին ցուցահանդեսին արդեն մասնակցել է 200 ընկերություն, իսկ այցելուների թիվը հասել է շուրջ 30,000-ի:

Այսպիսով ցուցահանդեսի ցուցանիշները աճել են 100%-ով:

1.11 Երաշխավորի ամփոփ ֆինանսական տվյալներ

2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ			
Ցուցանիշի անվանումը	2025 I կիսամյակ (հազ. ՀՀ դրամ)	2024 (հազ. ՀՀ դրամ) Աուդիտ անցած	2023 (հազ. ՀՀ դրամ) Աուդիտ անցած
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	621,866	1,805,486	1,741,854
Ծրագրերի գծով ծախսեր	-690,579	-1,588,018	-1,589,890
Համախառն շահույթ (վնաս)	-68,713	217,468	151,964
Իրացման ծախսեր			
Վարչական ծախսեր	-54,185	-353,372	-251,834
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	-122,898	-135,904	-99,870
Գործառնական այլ եկամուտներ			
Գործառնական այլ ծախսեր			
Գործառնական շահույթ (վնաս)	-122,898	-135,904	-99,870

Ֆինանսական եկամուտներ (ծախսեր)	-11,414	20,212	-50,248
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)			
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)			
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	2,016	12,746	5,865
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	-132,296	-102,946	-144,253
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)			
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը			
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)			
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-132,296	-102,946	-144,253
ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ			
Ցուցանիշի անվանումը	2025 Հունիսի 30 (հազ. թթ դրամ)	2024 (հազ. թթ դրամ) Աուդիտ անցած	2023 (հազ. թթ դրամ) Աուդիտ անցած
Հիմնական միջոցներ	5,464	1,458	6,479
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	235		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ			
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	205,080	185,187	154,744
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	210,779	186,645	161,223
Պաշարներ,	22,369	19,487	19,844
Տրված ընթացիկ կանխավճարներ	6,859		
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով			
Այլ դեբիտորական պարտքեր	51,854	38,510	27,308
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,676	81,254	27,166

Այլ ընթացիկ ակտիվներ		5,000	5,835
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	84,758	144,251	80,153
Ընդամենը ակտիվներ	295,537	330,896	241,376
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար			
Էմիսիոն եկամուտ			
Կուտակված շահույթ (Վնաս)	-533,270	-435,370	-332,424
Պահուստային կապիտալ			
Սեփական կապիտալի այլ տարրեր			
Ընդամենը սեփական կապիտալ	-533,270	-435,370	-332,424
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ		33,000	
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	90	108,869	867
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	90	141,869	867
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	421,218	284,882	287,697
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	92,311		
Ստացված ընթացիկ կանխավճարներ	11,320		
Այլ կրեդիտորական պարտքեր	303,867	339,515	285,236
Այլ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	828,717	624,397	572,933
Ընդամենը պարտավորություններ	828,807	766,266	573,800
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	295,537	330,896	241,376
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ			
Ցուցանիշի անվանումը	2025 I կիսամյակ (հազ.)	2024 (հազ.)	2023 (հազ.)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	81,254	27,166	66,261
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-42,349	27,555	-93,411
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	0	-449	-1,307

Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	123,603	28,064	54,565
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	3,676	81,254	27,166
ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ			
Ցուցանիշի անվանումը	2025 I կիսամյակ (հազ.)	2024 (հազ.)	2023 (հազ.)
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)			
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	27.32%	26.82%	55.42%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-42.24%	-35.98%	-50.38%
Զուտ շահույթի մարժա (NPM)	-21.27%	-5.70%	-8.28%
Կապիտալի համարժեքության գործակից	-1.80	-1.32	-1.38
Ֆինանսական կախվածության գործակից	-1.55	-1.76	-1.73
Բացարձակ իրացվելիության գործակից	0.004	0.13	0.05
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.07	0.19	0.10
Ընդհանուր իրացվելիության գործակից	0.10	0.23	0.14
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	13.76	54.86	49.15
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	26.52	6.65	7.43
Պաշարների շրջանառելիության գործակից	33.00	80.75	84.02
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	11.06	4.52	4.34
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2.15	5.08	5.59
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	170.03	71.80	65.29

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են [Հավելված 3](#)-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓՈԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ
ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ
ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆԱՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ
ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ
ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ
Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ
ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԱԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ
ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

Բաժին 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Ռիսկային գործոններ

Պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ծրագրային ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ծրագրային ազդագրում ներկայացված է հնարավոր ռիսկերի ոչ ամբողջական ցանկը, և հավանական է նաև անկանախատեսելի բնույթի որոշակի այլ ռիսկերի առաջացումը: Հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու սպասումներով:

Ստորև ներկայացվում են Թողարկողի կողմից բացահայտված այն հիմնական ռիսկերը, որոնք ներդրողը պետք է կարևորի պարտատոմսերում ներդրումներ կատարելիս.

Տոկոսադրույքի ռիսկը: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության ցուցանիշի վերանայման: Ընդ որում, երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների բարձրացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկը: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակահատվածում) նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշներով և դրանց սպասվող փոփոխություններով պայմանավորված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ: Միևնույն ժամանակ ներդրողը պետք է հաշվի առնի, որ, անկախ շուկայում գների փոփոխությունից և դրանց սպասումներից, Թողարկողի կողմից վճարվող արժեկտրոնների և պարտատոմսերի մարման գումարային մեծություններն, արտահայտված թողարկման արժույթով, չեն փոփոխվում:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողներն, ովքեր Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենք են կրելու վերաներդրման ռիսկը, որը պայմանավորված է Թողարկողի

պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների՝ ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությանը համարժեք եկամտաբերությամբ ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ: Այլ կերպ ասած, եթե պարտատոմսի շրջանառության ընթացքում շուկայական տոկոսադրույքները նվազեն, հնարավոր է, որ ներդրողները չկարողանան վերաներդնել արժեկտրոնային եկամուտներն ի սկզբանե ակնկալվող եկամտաբերությամբ, ինչը կարող է նվազեցնել նրանց ընդհանուր եկամուտները:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և Թողարկողի հավանական սնանկացման հետ:

Թողարկողն իր պատմության ընթացքում ունեցել է 3 վարկ, որոնցից 2-ը մարված են, 1-ը՝ գործող: Գործող վարկի մնացորդը կազմում է 85,523,036 (ութսունհինգ միլիոն հինգ հարյուր քսաներեք հազար երեսունվեց) ՀՀ դրամ:

Արտարժույթային ռիսկ: Թողարկվող պարտատոմսերն արտահայտված են ՀՀ դրամով և ներդրումների ստացումը իրականացվելու են ՀՀ դրամով: Ուստի, այս առումով արտարժույթային ռիսկն առկա է միայն այն ներդրողների համար, ովքեր իրենց արտարժույթային միջոցները պետք է փոխանակեն ՀՀ դրամի՝ պարտատոմսերում ներդնելու համար:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերը ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու նպատակով դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, ինչպես նաև երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու համար ներգրավելու է շուկա ստեղծող/ներ: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով և/կամ նախընտրելի ծավալով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր:

2.2. Հիմնական տեղկատվություն

Պարտատոմսերի թողարկման արդյունքում ներգրավվող միջոցները նախատեսվում է օգտագործել Թողարկողի և Երաշխավորի կողմից ձևավորվող խմբի գործունեության ֆինանսական կայունության ապահովման, պարտքային բեռի օպտիմալացման, ինչպես նաև եկամուտների աղբյուրների առաջանցիկ ընդլայնման և դիվերսիֆիկացման նպատակով:

Միջոցների օգտագործումը նպատակաուղղված է ինչպես գործող գործունեության արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ՝ նոր ներդրումային ուղղությունների զարգացմանը՝ հաշվի առնելով շուկայական պայմանները և «ԱՏՁՄ» խմբի ռազմավարական առաջնահերթությունները:

Մասնավորապես, ներգրավվող միջոցները նախատեսվում է ուղղել հետևյալ հիմնական ուղղություններով.

Վերաֆինանսավորում՝ 450 մլն. ՀՀ դրամ

Նշված միջոցները նախատեսվում է օգտագործել Թողարկողի և/կամ «ԱՏՁՄ» խմբի կողմից առկա պարտավորությունների վերաֆինանսավորման նպատակով՝ այդ թվում վարկային կամ այլ ֆինանսական պարտավորությունների մարման կամ փոխարինման միջոցով:

Վերաֆինանսավորվելու են շուրջ 80 մլն ՀՀ դրամ վարկային միջոցներ, որոնք գտնվում են թողարկողի հաշվեկշռում, իսկ մնացած պարտավորությունները՝ Երաշխավորի հաշվեկշռում՝ շուրջ 240 մլն ՀՀ դրամ գործընկերների կողմից տրված փոխառություններ, շուրջ 100 մլն ՀՀ դրամ գնումների գծով կրեդիտորական պարտավորություններ և շուրջ 30 մլն ՀՀ դրամի այլ պարտավորություններ:

Վերաֆինանսավորումը միտված է պարտքային բեռի կառուցվածքի բարելավմանը, ֆինանսական հոսքերի կանխատեսելիության բարձրացմանը և ընթացիկ վճարունակության ապահովմանը:

Ներդրում DigiTec-ի վաճառքների զարգացման մեջ՝ 50 մլն ՀՀ դրամ

Նշված միջոցները նախատեսվում է ուղղել DigiTec ցուցահանդեսի վաճառքների զարգացմանն ուղղված միջոցառումներին, ներառյալ՝ վաճառքի ռազմավարության վերանայումը, վաճառքի թիմի կարողությունների ամրապնդումը, նոր վաճառքի ալիքների և գործընկերային ձևաչափերի ներդրումը, ինչպես նաև մարքեթինգային և գովազդային նախաձեռնությունները: Ներդրման նպատակը DigiTec նախագծից ստացվող եկամուտների աճն ու կայունացումն է:

Ներդրում անդամակցության աճի ուղղությամբ՝ 50 մլն ՀՀ դրամ

Նշված միջոցները նախատեսվում է ուղղել «ԱՏՁՄ» ՀԿ-ի անդամակցության աճի խթանմանը՝ այդ թվում նոր անդամների ներգրավման, գործող անդամների ֆինանսական և բովանդակային ներգրավվածությանը խթանող ծրագրերի մշակման և իրականացման

միջոցով: Նպատակն է ուժեղացնել և մեծացնել կայուն և կանխատեսելի պարբերական եկամուտների ծավալը:

Ներդրում այլ պարբերական եկամուտների զարգացման և դիվերսիֆիկացման մեջ՝ 50 մլն ՀՀ դրամ

Նշված միջոցները նախատեսվում է օգտագործել DigiTec ցուցահանդեսից և անդամակցությունից բացի այլ պարբերական եկամուտների աղբյուրների զարգացման համար, ներառյալ նոր ծառայությունների, նախագծերի կամ բիզնես մոդելների ներդրումը: Ներդրման նպատակն է նվազեցնել եկամուտների կենտրոնացումը առանձին նախագծերի վրա և ապահովել ֆինանսական հոսքերի ավելի հավասարակշռված կառուցվածք:

Ներդրում «UATE PowerHouse» նախագծում՝ 800 մլն ՀՀ դրամ

Նշված միջոցները նախատեսվում է ուղղել «UATE PowerHouse» նախագծի իրականացմանը, որը ենթադրում է co-working և գրասենյակային տարածքների ստեղծում և շահագործում: Ներդրման նպատակն է ձևավորել երկարաժամկետ և համեմատաբար կայուն եկամտային աղբյուր՝ անշարժ գույքի շահագործման և հարակից ծառայությունների միջոցով: Նշված ներդրման իրականացումը կախված է իրավական, ֆինանսական և շուկայական պայմանների վերջնական ձևավորումից:

UATE Powerhouse-ը գրասենյակային ենթակառուցվածքների զարգացման ռազմավարական նախագիծ է, որն ուղղված է փոքր և միջին տեխնոլոգիական ընկերությունների համար ժամանակակից, արդյունավետ և համագործակցային աշխատանքային միջավայրի ստեղծմանը: Նախագիծը նախատեսում է Երևան քաղաքում մոտ **3 000 քմ** նախկին արտադրական տարածքի երկարաժամկետ վարձակալություն, դրա ամբողջական վերափոխում և շահագործում՝ որպես տեխնոլոգիական գրասենյակային կլաստեր:

Տարածքը վերանորոգվելու և կահավորվելու է՝ համապատասխանեցվելով տեխնոլոգիական ընկերությունների պահանջներին և բաժանվելու է հետևյալ գոտիների.

- անհատական գրասենյակներ,
- օֆեն-սֆեյս աշխատանքային տարածքներ,
- քովորքինգ գոտիներ:

Բացի հիմնական աշխատանքային տարածքներից, UATE Powerhouse-ը ներառելու է նաև՝

- ընդհանուր օգտագործման կոնֆերանս-դահլիճներ,
- ներթվորքինգային և համայնքային շփման գոտիներ,
- առանձնացված սրահներ փակ հանդիպումների, բանակցությունների և մասնավոր միջոցառումների համար:

Նախագիծը առաջարկում է ոչ միայն տարածքի վարձակալություն, այլ նաև համալիր օպերացիոն ծառայություններ, որոնք ապահովում են վարձակալների անխափան գործունեությունը, մասնավորապես՝

- մաքրման (քլինինգ) ծառայություններ,
- 24/7 անվտանգություն,
- բարձր արագության և անխափան լայնաշերտ ինտերնետ կապ,
- սերվերային հզորություններ և տեխնիկական աջակցություն:

Այս մոտեցումը թույլ է տալիս ընկերություններին կենտրոնանալ իրենց հիմնական գործունեության վրա՝ նվազեցնելով ադմինիստրատիվ և ենթակառուցվածքային բեռը:

UATE PowerHouse-ը տրամադրելու է հետևյալ ծառայությունները

1. Աշխատանքային սեղան ընդհանուր տարածքում ճկուն գրաֆիկով (co-working)
2. Աշխատանքային սեղան ընդհանուր տարածքում ֆիկսված 24/7 հասանելությամբ
3. Միկրո գրասենյակ, մինչև 10 հոգանոց թիմերի համար՝ աշխատանքային սեղանների խումբ առանձնացված սենյակում 24/7 հասանելությամբ
4. Գրասենյակ մինչև 10-30 հոգանոց թիմերի համար՝ աշխատանքային սեղանների խումբ առանձնացված սենյակում 24/7 հասանելությամբ
5. Միջոցառումների սրահի վարձակալություն, օրական/ժամային
6. Հանդիպումների սենյակի վարձակալություն օրական/ժամային
7. Հիբրիդային (հեռավար և առկա մասնակիցներով) հանդիպումների համար նախատեսված հատուկ հանդիպումների սենյակի վարձակալություն օրական/ժամային

Ներդրումային ծավալ և ծախսերի կառուցվածք

Նախագծի առաջին փուլի իրականացման համար նախատեսվում է շուրջ **800 մլն ՀՀ դրամի** ներդրում, որի բաշխումն է՝

- մոտ **300 մլն դրամ**՝ տարածքի երկարաժամկետ վարձակալության համար,
- մոտ **400 մլն դրամ**՝ վերանորոգման և կահավորման աշխատանքների համար,
- մոտ **100 մլն դրամ**՝ անվտանգության, տեխնիկական և հարակից ծառայությունների գործարկման համար:

Գրասենյակային տարածքները վարձակալությամբ կհանձնվեն՝ միջինում սկսած 15 000 դրամից 1 քմ-ի համար, ինչը կապահովի տարեկան շուրջ 540 մլն ՀՀ դրամ եկամուտ ամբողջական զբաղվածության դեպքում:

Ռեզերվային միջոցներ՝ 100 մլն ՀՀ դրամ

Նշված միջոցները նախատեսվում է պահել որպես ռեզերվ՝ խմբի լիկվիդայնության պահպանման, անսպասելի ծախսերի կամ շուկայական փոփոխություններից բխող ժամանակավոր ֆինանսական ճնշումների մեղմման նպատակով: Ռեզերվային միջոցները կարող են օգտագործվել նաև վերոնշյալ ուղղություններով՝ անհրաժեշտության դեպքում:

Վերոնշյալ բաշխումը արտացոլում է Թողարկողի ներկայիս նպատակադրությունները և ռազմավարական ծրագրերը: Միջոցների օգտագործման կոնկրետ ժամկետները, ծավալները և ուղղությունները կարող են փոփոխվել՝ կախված շուկայական պայմաններից, նախագծերի իրականացման ընթացքից և խմբի ֆինանսական կարիքներից՝ առանց ներգրավվող միջոցների օգտագործման ընդհանուր նպատակի էական փոփոխության:

2.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

2.3.1. Արժեթղթի տեսակը և դասը

Թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային պարտատոմսեր են, անբաժանելի են, փոխարկելի չեն: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր: Պարտատոմսերի վերադասակարգում հնարավոր չէ:

2.3.2. Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

2.3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկված պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը (ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1 հեռ.՝ +374 60 615555) ըստ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ «Դեպոզիտարիա») համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

2.3.4. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Մեկ դրամային պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ: Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը կհաշվարկվի Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

2.3.5. Թողարկման արժույթը

Թողարկման արժույթը՝ ՀՀ դրամ:

2.3.6. Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- 1) Առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորությունների մասով պարտատերերի պահանջները,
- 2) Երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով,
- 3) Երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը,
- 4) Չորրորդ հերթին մարվում է պետական բյուջե, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող պարտադիր վճարների պարտքը ,
- 5) Հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի,
- 6) Վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պարտատերերի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Թողարկողի կողմից առաջարկվող Պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին:

Եթե լուծարումը պայմանավորված է Թողարկողի սնանկությամբ, ապա համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- 1) Առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորությունների մասով պարտատերերի պահանջները,
- 2) Երկրորդ հերթին վճարվում են կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը,
- 3) Երրորդ հերթին բավարարվում են քաղաքացիների՝ կյանքի կամ առողջության հետ կապված պահանջները,
- 4) Չորրորդ հերթին բավարարվում են աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները, և կատարվում են հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումները,
- 5) Հինգերորդ հերթին կատարվում են դատական ծախսերը,
- 6) Վերցերորդ հերթին բավարարվում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները,

7) Յոթերորդ հերթին բավարարվում են այն չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանի կողմից ստանձնած պարտավորությունների նկատմամբ՝ թույլատրված դատարանի կողմից մինչև պարտատերերի պահանջների վերջնական ցուցակի հաստատումը,

8) Ութերորդ հերթին բավարարվում են այն չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված գործառնությունների հետևանքով,

9) Իններորդ հերթին բավարարվում են չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ պարտադիր սոցիալական վճարները, հարկային պարտավորությունները և դատական ծախսերի գումարը, բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների,

10) Տասներորդ հերթին բավարարվում են ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ պարտապանին իր հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) կողմից տրամադրված վարկերից, փոխառություններից կամ այլ ներդրումներից առաջացած չապահովված պահանջները, պարտապանի կողմից տեղաբաշխված տասը տարի և ավելի ժամկետ ունեցող պարտատոմսերով, ինչպես նաև արտոնյալ արժեթղթերով ներկայացված պահանջները և ստորադաս փոխառություններից բխող պահանջները,

11) Այնուհետև բավարարվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված մյուս պահանջները:

Յուրաքանչյուր հերթի պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պարտատերերի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Թողարկողի կողմից առաջարկվող Պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են իններորդ հերթին:

2.3.7. Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքներն են.

1)Ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ծրագրային ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին համաձայն Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի հետ կնքվելիք Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ

պայմանագրի (այսուհետ՝ եռակողմ Պայմանագիր, որի կողմերն են Թողարկողը, ՀԿԴ և Տեղաբաշխողը, որը այս դեպքում հանդես է գալիս որպես Հաշվի օպերատոր), ինչպես նաև ներդրողի և իր արժեթղթերի պահառուի միջև կնքված համապատասխան պայմանագրի,

2) Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,

3) Գրավադրել պարտատոմսերը օրենսդրությամբ սահմանված կարգով,

4) Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ-ում (այսուհետ՝ «Բորսա») (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ տեքստում՝ «Օրենք») սահմանված կարգով: Ընդ որում, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր:

5) Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

2.3.8. Անվանական տոկոսադրույքը և այդ տոկոսների վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային անվանական եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

ՀՀ դրամով պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ՀՀ դրամով:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը պարտավոր է, համաձայն եռակողմ Պայմանագրի, մինչև պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրը մինչև ժամը 12:00 Հաշվի օպերատորի Դեպոզիտարիայում վարվող դրամական հաշվի վրա ապահովել հերթական արժեկտրոնների վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվում են մինչև 0.1 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում, կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոնների համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնորդական թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտները/Պարտատոմսի մարման գումարը փոխանցվելու են ներդրողի բանկային հաշվին համաձայն Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի հետ կնքվելիք Պարտատոմսերի գծով եկամուտների փախանցման եռակողմ պայմանագրի (այսուհետ՝ Եռակողմ պայմանագիր):

Թողարկողը արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ համաձայն Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ պայմանագրի: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում նշված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ Հաշվի օպերատորի կողմից կվերադարձվի Թողարկողի

համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործարդի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն եռակողմ Պայմանագրի, Դեպոզիտարիան՝ արժեկտրոնի գումարների վճարման հիմքով, մինչև արժեկտրոնների վճարման օրվա 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն պարտատոմսերի արժեկտրոնների վճարման փաստի մասին:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

$$ԱԳ = (FV \times C) / k,$$

որտեղ՝

- ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,
- FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
- C - տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=1)

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC},$$

որտեղ՝

- AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
- FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
- C - տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,
- (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=1),
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համարվում է Actual/Actual-ը (փաստացի/փաստացի), ընդ որում՝
 - DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],

- DCC - արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],
- D1M1Y1 - գործարքի կատարման օրվա նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
- D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է,
- D3M3Y3 - գործարքի կատարման օրվա հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

2.3.9. Արժեթղթերի մարման ժամկետը և արժեքը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվա նախորդող օրը ժամը 16:29:59: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Թողարկողը պարտավոր է, համաձայն եռակողմ Պայմանագրի, մինչև մարման գումարների վճարման օրվա ժամը 12:00 Հաշվի օպերատորի Դեպոզիտարիայում վարվող դրամական հաշվի վրա ապահովել վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Թողարկողը մարման գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ համաձայն Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ պայմանագրի: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում նշված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ Հաշվի օպերատորի կողմից կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը

վճարելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն եռակողմ Պայմանագրի, Դեպոզիտարիան՝ արժեկտրոնի գումարների վճարման հիմքով, մինչև արժեկտրոնների վճարման օրվա 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն պարտատոմսերի արժեկտրոնների վճարման փաստի մասին:

ՀՀ դրամով թողարկված Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու ՀՀ դրամով:

Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը ՀՀ դրամն է, պարտատոմսերի արժեկտրոնների և մայր գումարների մարման հետ կապված միջբանկային փոխանցումների ժամանակ միջնորդավճարներ չեն լինի:

Պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում՝ բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու հայտի՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բորսա) կողմից մերժման դեպքի, որի պարագայում տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:

2.3.10. Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսի տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվելու է հետևյալ կերպ՝

$$\text{ՊՏԵ}=(1+S/\text{Հ})^{\text{Հ}}-1,$$

Որտեղ՝

ՊՏԵ - տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունն է:

S - տարեկան արժեկտրոնների տոկոսադրույքն է:

Հ - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների վճարման հաճախականությունն է:

2.3.11. Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի միակ մասնակից «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության Վարչության 2025 թվականի դեկտեմբերի թիվ 3/25 որոշմամբ: Որոշմամբ ամրագրվել է այն առավելագույն ծավալը, որի շրջանակներում Թողարկողի

առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացվել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ): Պարտատոմսերի տեղաբաշխումներին վերաբերող վերջնական պայմանները հաստատված են համարվում համաձայն պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ կայացված Թողարկողի որոշման (որոշումների), այնքանով, որքանով վերջիններս չեն հակասում օրենսդրությանը: Տեղաբաշխումն իրականացնող «ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ հետ կնքվելու է պարտատոմսերի չերաշխավորված տեղաբաշխման պայմանագիր:

2.3.12. Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման/տեղաբաշխման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Ֆոնդային բորսա կամ Բորսա) պարտատոմսերը ցուցակելու համար, և համաձայն գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս շրջանառությունը կարող է իրականացվել միայն Բորսայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը Բորսայում (ցուցակված և/կամ առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ Օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր: Սույն պահանջի ներքո ՀՀ ԿԲ-ն կարող է բացառություններ սահմանել ներքոնշյալ գործարքների համար.

- Մասնավոր գործարքների համար, այն է՝ գործարքներ, որոնց կողմերը նախապես հայտնի են,
- Արժեթղթերի տեղաբաշխման նպատակով տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքներ,

- Կարգավորովող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերի՝ այլ կարգավորովող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքում:

2.3.13. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

Կարևոր ծանուցում. Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար): Ոչ ռեզիդենտ և ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի մասով) և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի մասով) հարկային գործակալը Թողարկողն է: ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ԿԲ-ի: ՀՀ «Հարկային օրենսգրքով» (այսուհետ՝ **Հարկային օրենսգիրք**) ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ **Ռեզիդենտ կազմակերպություն**) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը հանդիսանում է ՀՀ-ն:

- **Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը**

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ 18 (տասնութ) տոկոս դրույքաչափով:

• Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 10 (տասը) տոկոս դրույքաչափով:

ՀՀ հարկային օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով ոչ ռեզիդենտ կազմակերպությունները ազատվում են շահութահարկի վճարումից:

2020թ.-ի մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձիք «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ մինչև 2027թ դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից տոկոսի, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում է շահութահարկի վճարումից:

Պարտատոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկման կարգը և նկարագիրը

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում, Հարկային օրենսգրքի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է «ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես «տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի

կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե Հայաստանի Հանրապետությունում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը:

- **Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում**

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Տոկոսագումարների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսագումարների յուրաքանչյուր վճարման դեպքում: 2020թ.-ի մարտի 1-ից ուժի մեջ մտած «Հարկային օրենսգրքի» փոփոխությունների արդյունքում ռեզիդենտ ֆիզիկական անձինք ազատվում են մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը Բորսայում ցուցակված պարտատոմսերից ստացված եկամուտներից եկամտային հարկ վճարելու պարտավորությունից (բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց):

- **Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկումն**

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Պարտատոմսերի տեղաբաշխման պայմանները (օրը, ժամկետը, տոկոսադրույքը և այլ էական պայմաններ) ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկողի որոշմամբ պարտատոմսերը տեղաբաշխվելու են բորսայից դուրս ազատ վաճառքի միջոցով:

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով, ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման օրվա 16:30-ը: Եթե համապատասխան գումարները վճարվում են պարտատոմսերի ձեռքբերման օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված այդ նպատակով բացված բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարականները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ բանկային (նաև՝ բրոքերային) հաշվի վրա մնալը մինչև պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = P \times Q,$$

որտեղ՝

- V-ն պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է,
- P-ն պարտատոմսերի ձեռք բերման հայտի ներկայացման օրվա դրությամբ պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է Ազդագրի 2.4.3. բաժնի համաձայն,
- Q-ն պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:

2.4.1.1 Առաջարկի առավելագույն ծավալը

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) առավելագույն ծավալը կարող է կազմել 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

Միևնույն սերիայի շրջանակներում թողարկված պարտատոմսերի (միևնույն ԱՄՏԾ-ով պարտատոմսերը) կարող են տեղաբաշխվել նաև մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով՝ համաձայն Թողարկողի որոշման:

Մաս-մաս տեղաբաշխման դեպքում թողարկման հերթական վերաբացման ծավալն ամբողջությամբ չտեղաբաշխվելու դեպքում չտեղաբաշխված պարտատոմսերի ծավալը գումարվում է տվյալ սերիայի՝ հետագա վերաբացումներով տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալին:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ծավալը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.4.1.2 Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է Տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 10 (տասը) աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Եթե առկա են հետ վերադարձման ենթակա դրամական միջոցներ, ապա դրանք վերադարձվում են Տեղաբաշխողի կողմից հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար: ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.1.3 Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրում կատարելու համար պետք է կատարել հետևյալ քայլերը.

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Տեղաբաշխողին առաքումից հետո, սակայն ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց՝ վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Տեղաբաշխողը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր, որով արժեթղթերը հաշվեգրվում են ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ

վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարակաները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Տեղաբաշխողի կողմից ստացման ժամկետից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Տեղաբաշխողի գրասենյակ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում:

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

- հասցե՝ Երևան 0010, Վ. Սարգսյան փող.26/1, Էրեբունի Պլազա, տարածք 812 «ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ,
- Էլեկտրոնային փոստ: requests@siriuscapital.am,
- Հեռ. (+ 374 12) 300 900,
- CBANet հասցե՝ Siriuscapital/CBANet@CBANet:

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է [Հավելված 1](#)-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է [Հավելված 2](#)-ում:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտ-հանձնարարականի վավերականությունն ապահովելու համար:

Հայտ-հանձնարարականում նշված «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը» դաշտում ներդրողները պետք է նշեն «Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ» դաշտում ամրագրված թվի և «Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը» դաշտում ամրագրված թվի արտադրյալը:

2.4.1.4 Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն չի նախատեսվում:

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման կարգով պայմանավորված՝ հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ հայտ-հանձնարարականում նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակը գերազանցում է հայտ-հանձնարարականը ներկայացնելու պահին առկա տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը:

Միաժամանակ ներկայացված հայտ-հանձնարարականների դեպքում, եթե հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ հայտ-հանձնարարականները բավարարվում են համամասնորեն՝ ըստ հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր հայտ-հանձնարարականով նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

2.4.1.5 Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Տեղաբաշխողի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող հետ կանչել:

2.4.1.6 Նվազագույն և առավելագույն գումարները

Յուրաքանչյուր տրանշի թողարկման ընթացքում կարող են լինել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ, նման որոշում կայացվի Թողարկողի կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.4.1.7 Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները

Կարգավորվող շուկայից դուրս տեղաբաշխման դեպքում, Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք

վճարումը կատարում են թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարին (1570089148871400 - «Ամերիաբանկ» ՓԲԸ): Վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված համապատասխան բանակային հաշվին դրամային միջոցների մուտքագրման պահից:

Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Տեղաբաշխողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձինք պետք է նախապես կատարեն դրամական միջոցների դեպոզիտացում՝ համաձայն Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

2.4.1.8 Առաջարկի արդյունքների հրապարակման ձևը և ժամկետները

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Թողարկողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով: Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն տեղաբաշխման ավարտից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական կայքում:

2.4.1.9 Նախապատվության իրավունքի իրականացման կարգը

«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ դուրս տեղաբաշխման դեպքում պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն՝ առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

2.4.2 Տեղաբաշխման պլանը

2.4.2.1 Ներդրողների խմբերը

Առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի:

2.4.2.2 Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրողները Տեղաբաշխողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը:

2.4.3 Առաջարկի գինը

2.4.3.1 Արժեթղթերի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

- $\tau = \frac{DSN}{DCC}$
- DP - Պարտատոմսի գինն է,
- DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
- DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
- F - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,
- N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,
- C - տարեկան արժեկտրոնը մեկ պարտատոմսի անվանական արժեքի դիմաց,
- Y - մինչև մարում եկամտաբերություն:

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կիրառարակվի առնվազն Տեղաբաշխողի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

2.4.4 Տեղաբաշխումը

2.4.4.1 Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Ազդագրի հրապարակման պահին երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու մասին պայմանագիր որևէ տեղաբաշխողի հետ կնքված չէ: Սակայն պետք է հաշվի առնել, որ առանձին սերիաների վերջնական պայմաններով կարող է նախատեսվել Տեղաբաշխողի կողմից թողարկված պարտատոմսերի ամբողջական կամ մասնակի երաշխավորված տեղաբաշխում:

2.4.4.2 Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲ ընկերության հետ (ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան փող. 26/1, Էրեբունի Պլազա, տարածք 812):

Համաձայն կնքված պայմանագրի՝ «ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն պարտավորվել է լավագույն ջանքերի գործադրմամբ, սակայն չերաշխավորված եղանակով տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկվող անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային մինչև 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

Տեղաբաշխման առանձին տրանշերի համար «ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն կարող է ներգրավել համատեղաբաշխող(ներ) կամ տեղաբաշխմանն աջակցող անձ(ինք)՝ վերջիններիս հետ կնքված համապատասխան պայմանագրերի հիման վրա:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ՝

- Չերաշխավորված տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման ավարտին պարտատոմսերի՝ հայտարարված տեղաբաշխման ծավալը կարող է ամբողջությամբ չտեղաբաշխվել, այսինքն կարող է տեղի ունենալ թերտեղաբաշխում,
- Անկախ տեղաբաշխման ավարտին պարտատոմսերի փաստացի տեղաբաշխված ծավալից՝ տեղաբաշխումը համարվում է կայացած:

2.4.4.3 Տեղաբաշխման պայմանները

Համաձայն «ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հետ կնքած «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել՝

- Ծառայությունների մատուցման վճար, որը կազմում է տեղաբաշխման ծավալի 2.5%-ը:

2.4.4.4 Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը

Ազդագրի հրապարակման պահին երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու մասին պայմանագիր որևէ տեղաբաշխողի հետ կնքված չէ:

2.4.4.5 Վճարումներ ընդունող բանկերը և պահառուները

Բորսայից դուրս տեղաբաշխում իրականացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով Տեղաբաշխողի՝ «ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի կողմից բացված տարանցիկ հաշվեհամարին: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում ներդրողներն արժեթղթերի դիմաց վճարումներ կատարում են գումարների նախնական դեպոնացմամբ: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ կոնտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 615 555, +374 10 543 321):

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

2.5. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.5.1 Առևտրին թույլտվությունը

Պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո 5 (հինգ) Աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը մտադիր է դիմել Բորսային՝ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար: Ընդ որում պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու դիմումը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ և պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների հիման վրա դրանց դիմաց կատարված վճարումները կվերադարձվեն 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.5.2 Շուկաները

Թողարկողի կողմից սույն ազդագրով գրանցվող պարտատոմսերը տեղաբաշխումից հետո պլանավորվում է ներկայացնել ցուցակման «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունում:

2.5.3 Շուկա ստեղծողները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Բորսայի կողմից տեղաբաշխված պարտատոմսերը ցուցակելու և առևտրին թույլատրելու դեպքում Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

2.6.1 Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստումն իրականացվել է Տեղաբաշխողի կողմից՝ Թողարկողի աշխատակիցների ներգրավվմամբ և տրամադրված տեղեկատվության հիման վրա:

Թողարկողը Ազդագրի պատրաստման ընթացքում չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

2.6.2 Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2023-2024թթ. համար), որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են [հավելված](#) 5-ում:

2.6.3 Թողարկողի վարկանիշը

Թողարկողը և թողարկվող պարտատոմսերը չեն ստացել վարկանիշ որևէ վարկանշող Ընկերության կողմից:

Բաժին 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Անկախ աուդիտորները

Թողարկողի 2023-2024թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: «Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (նախկինում՝ «Մելիքյանս ընդ. Քո» ՍՊԸ) ստեղծվել է 1999թ. հուլիսի 20-ին՝ ք. Երևան, Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ն. Գոգոլի., 12-14 շենք, 78 գրասենյակ: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Չեյլուսկինցիների 62: Ընկերությունը աուդիտորական ծառայությունների մատուցման լիցենզիա է ստացել՝ անդամակցելով Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատին համաձայն ՀԱՊ խորհրդի 2021թ.-ի փետրվարի 17-ի 30-Ա որոշման (ՀԳԳՀ՝ 1 21 0489) և ծառայություններ է մատուցում առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև ֆինանսական ոլորտի կազմակերպություններին: Ընկերությունը աուդիտորական, հարկային և խորհրդատվական ծառայություններ է մատուցում տնտեսվարող սուբյեկտների, որոնք գործունեություն են իրականացնում տնտեսության տարբեր ոլորտներում: Ընկերությունն առաջարկում է ծառայությունները տարբեր փաթեթներ՝ կախված Ընկերության պահանջներից, գործունեության ոլորտից և առանձնահատկությունից: Ընկերությունն ունի ներքին հսկողության արդյունավետ համակարգ, որը երաշխավորում է մատուցվող ծառայությունների բարձր որակի ապահովում: «Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մատուցում է արտաքին աուդիտի, հաշվապահական հաշվառման, ֆինանսական, հարկային խորհրդատվական և այլ մասնագիտացված ծառայություններ Հայաստանում և արտերկրում: Աուդիտորական կազմակերպության տնօրենն է Ռոբերտ Մելիքյանը: Ընկերությունը գործում է ՀՀ, ք. Երևան, Ն. Գոգոլի փ., 12-14 շենք, 78 գրասենյակ հասցեում: Հեռ.՝ +(374) 95 90 19 49:

Կայք՝ <https://www.moore-armenia.am/hy/> էլ. հասցե՝ info@moore-armenia.am

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են [Հավելված 5-ում](#):

3.2 Ռիսկային գործոններ

Ցանկացած ներդրող մինչև Թողարկողի պարտատոմսերում ներդրում անելը պետք է ամբողջությամբ ուսումնասիրի Թողարկողի գործունեության հստակ ռիսկային գործոնները: Ստորև ներկայացված են այն ռիսկերը, որոնք Թողարկողը Ազդագրի ներկայացման պահի դրությամբ համարում է էական, սակայն կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք

Թողարկողին այս պահին հայտնի չեն կամ Թողարկողը դրանք համարում է ոչ էական: Ստորև նկարագրված ռիսկային գործոնների ցանկը պետք է օգտագործվի միայն որպես ուղեցույց:

SS ոլորտի հետ կապված ռիսկեր: SS ոլորտի հետ կապված ռիսկերը կարող են էական և անմիջական ազդեցություն ունենալ «ԱՏՁՄ» խմբի ֆինանսական վիճակի վրա, պայմանավորված արհեստական բանականության զարգացմամբ: ԱԲ լուծումների արագ տարածումը կարող է հանգեցնել նրան, որ ներդրումները և մարդկային ռեսուրսները կենտրոնանան առավելապես ԱԲ ուղղվածություն ունեցող նախագծերում, մինչդեռ SS ոլորտի այլ ենթաոլորտները կարող են հայտնվել երկրորդական դիրքում, ինչի արդյունքում հնարավոր է դրանցում ֆինանսավորման և տնտեսական ակտիվության կրճատում: Բացի այդ, ԱԲ տեխնոլոգիաների ներդրման հետ կապված առկա են իրավական անորոշություններ, որոնք կարող են ժամանակավորապես սահմանափակել որոշ բիզնես մոդելների զարգացումը կամ մեծացնել ծախսերը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ոլորտի ընկերությունների շահութաբերության վրա:

Միաժամանակ ԱԲ տեխնոլոգիաների արագ զարգացումը կարող է պահանջել զգալի լրացուցիչ ներդրումներ ենթակառուցվածքների վերազինման և նոր հմտությունների ձևավորման մեջ, ուստի ոչ բոլոր ընկերությունները կարող են ունենալ բավարար ռեսուրսներ այդ փոփոխություններին արագ հարմարվելու համար, ինչի հետևանքով հնարավոր է ընկերությունների մի մասի մրցունակության նվազում, շուկայից դուրս մղում կամ գործունեության ծավալի կրճատում, ինչն ընդհանուր առմամբ կարող է նվազեցնել SS ոլորտի ներգրավվածությունն ու ֆինանսական հոսքերը և այդ միջոցով բացասաբար անդրադառնալ նաև «ԱՏՁՄ» խմբի գործունեության և ֆինանսական կայունության վրա:

ՀԿ-ի գործունեությանը բնորոշ ռիսկեր: ՀԿ-ի գործունեությանը բնորոշ ռիսկերը կապված են կազմակերպության ֆինանսավորման կառուցվածքի և դրա կայունության հետ, քանի որ կազմակերպության գործունեության արդյունավետ իրականացումը մեծապես կախված է սահմանափակ թվով ֆինանսական աղբյուրներից: Պետական ֆինանսավորման հնարավոր կրճատումը կամ դրա տրամադրման պայմանների փոփոխությունը կարող է հանգեցնել ծրագրերի իրականացման ծավալի նվազման կամ որոշ նախաձեռնությունների դադարեցման: Միաժամանակ կազմակերպության կախվածությունը անդամավճարներից նշանակում է, որ անդամների թվի կրճատումը կամ նրանց ֆինանսական հնարավորությունների վատթարացումը կարող է անմիջականորեն ազդել կազմակերպության եկամտային հոսքերի վրա:

Բացի այդ դոնորական ֆինանսավորումը, որպես հիմնական աղբյուր ունենալը, ենթադրում է ֆինանսավորման ժամանակավոր բնույթ և արտաքին ազդեցություններից կախվածություն, ինչի արդյունքում հնարավոր է ֆինանսավորման անընդհատության խախտում և երկարաժամկետ ծրագրերի պլանավորման բարդացում: Նման պայմաններում կազմակերպությունը կարող է բախվել դրամական հոսքերի անկայունության, վարչարարական ծախսերի հարաբերական աճի և ֆինանսական ճկունության նվազման ռիսկերի, որոնք իրենց հերթին կարող են բացասաբար անդրադառնալ կազմակերպության գործունեության շարունակականության ռազմավարական նպատակների իրագործման և ընդհանուր կայուն զարգացման վրա: Քանի որ Ընկերության միակ մասնակիցը հասարակական կազմակերպություն է այս ռիսկը կարող է անուղղակիորեն ազդել նաև Թողարկողի վրա:

Մակրոտնտեսական ռիսկեր: Ընկերության գործունեության համար լրացուցիչ ռիսկեր կարող է առաջացնել ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը, որն իր հերթին կարող է պայմանավորված լինել ինչպես ներքին, այնպես էլ տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումներով: Թվարկված գործունեությունը պայմանավորված մակրոտնտեսական վիճակի վատթարացումը շղթայական ռեակցիայով կրեթի համախառն եկամուտների և գնողունակության անկմանը, բացասաբար կանդրադառնա նաև անշարժ գույքի պահանջարկի վրա՝ նվազեցնելով բնակարանների և օֆիսային տարածքների վաճառքների, վարձակալության ակտիվությունը ու հանգեցնելով Ընկերության եկամուտների և շահույթի կրճատման:

Բացի այդ, համախառն եկամուտների կրճատումը բացասաբար կանդրադառնա նաև բնակչության վարկունակության և վարկային պարտավորությունների, ինչպես նաև խնայողությունների մակարդակի վրա, որն էլ կհանգեցնի բանկային համակարգի կայունության խաթարման՝ բարդացնելով լրացուցիչ ֆինանսավորում ստանալու Ընկերության հնարավորությունները և վտանգներ ստեղծելով նրա բնականոն ֆինանսատնտեսական գործունեության համար:

Վարկային ռիսկ/դեֆոլտի ռիսկ: Այն առնչվում է Ընկերության կողմից իր վարկային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելուն կամ չկատարելուն:

Ընկերությունն իր պատմության ընթացքում ունեցել է 3 վարկ, որոնցից 2-ը մարված, 1-ը՝ գործող: Գործող վարկի մնացորդը կազմում է 85,523,036 (ութսունհինգ միլիոն հինգ հարյուր քսաներեք հազար երեսունվեց) ՀՀ դրամ, որի համար գրավադրված գույք առկա չէ:

Իրացվելիության ռիսկ: Այս ռիսկը պայմանավորված է Ընկերության ազատ դրամական միջոցների անբավարարությամբ, ինչի հետևանքով կարող է վտանգվել

պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարումը: Նման իրավիճակը կարող է առաջանալ մակրոտնտեսական միջավայրի վատթարացման, ֆինանսական շուկաների անկայունության, եկամուտների նվազման կամ ծախսերի աճի արդյունքում, ինչի հետևանքով սահմանափակվում է Ընկերության իրացվելիությունը և նվազում է ընթացիկ և կարճաժամկետ պարտավորությունները սպասարկելու հնարավորությունը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության ֆինանսական կայունության գործարար հարաբերությունների և գործունեության շարունակականության վրա:

30.06.2025թ.-ի դրությամբ Ընկերության իրացվելիության գործակիցները բավական ցածր են, ինչի արդյունքում առկա է իրացվելիության ռիսկ, քանի որ ընթացիկ պարտավորությունները կազմում են շուրջ 828 մլն ՀՀ դրամ, մինչդեռ ընթացիկ ակտիվները կազմում են շուրջ 85 մլն ՀՀ դրամ և այս համադրության պայմաններում ընդհանուր իրացվելիության գործակիցը կազմում է 0.10, իսկ ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ 0.07, ինչը կարող է սահմանափակել Ընկերության կարողությունը կարճաժամկետ ժամանակահատվածում պատշաճ և ժամանակին կատարելու իր ընթացիկ պարտավորությունները և ստեղծել դրամական հոսքերի լարվածության հավանականություն:

Միաժամանակ նախատեսվում է, որ թողարկվող պարտատոմսերի գումարից շուրջ 450 մլն ՀՀ դրամ ուղղվելու է նշված պարտավորություններից մի մասի վերաֆինանսավորմանը, ինչի արդյունքում ակնկալվում է իրացվելիության ցուցանիշների բարելավում, քանի որ պարտավորությունների մի մասը կտեղափոխվի ավելի երկար ժամկետով ֆինանսավորման դաշտ, և դա կարող է նվազեցնել կարճաժամկետ վճարումների ճնշումը և ավելացնել ֆինանսական ճկունությունը: Մարվելու են շուրջ 240 մլն ՀՀ դրամ գործընկերների կողմից տրված փոխառությունները, շուրջ 100 մլն ՀՀ դրամ գնումների գծով կրեդիտորական պարտավորությունները, մոտ 80 մլն ՀՀ դրամի բանկային վարկը և շուրջ 30 մլն ՀՀ դրամի այլ պարտավորություններ: Հարկ է ավելացնել, որ մարվող պարտավորություններից միայն մոտ 80 մլն ՀՀ դրամի բանկային վարկի մնացորդն է, որ գտնվում է թողարկողի հաշվեկշռում, իսկ մնացած 370 մլն ՀՀ դրամի պարտավորությունները երաշխավորի հաշվեկշռում են:

Վերը ներկայացված փաստերը առաջ են քաշում Ընկերության իրացվելիության կառավարման անհրաժեշտություն: Ընկերությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

Լևերիջի / Ֆինանսական բեռի ռիսկ: ԱՏՁՄ խումբը վերջին տարիներին աշխատել է վնասով, ինչի արդյունքում աճել են ընկերության պարտավորություններ, որոնց մի մասը՝ շուրջ 85 մլն ՀՀ դրամը վարկային միջոցներն են: Մնացած պարտավորությունները չեն

առաջացնում տոկոսային ծախսեր, դրանք կամ փոխառություններ են կամ այլ պարտավորություններ՝ գնումների գծով, ակտիվներին վերաբերող շնորհների գծով: Փոխառությունների վերաբերյալ մանրամասներին կարելի է ծանոթանալ Ընկերության Առդիտ հաշվետվության մեջ): Այս պարտավորությունների փոխարինումը պարտատոմսերով (շուրջ 450 մլն ՀՀ դրամ) ավելացնելու է ընկերության տոկոսային բեռը: Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը ընդհանուր առմամբ մեծացնելու են ընկերության ֆինանսական բեռը, սակայն քանի որ պարտատոմսերի ժամկետը 36 ամիս է, ապա դրանց թողարկումով կբարելավվեն իրացվելիության ցուցանիշները, ինչն էլ հնարավորություն կտա ընկերությանը առաջիկա 3 տարիների ընթացքում դուրս գալ դրամական միջոցների սղության հետ կապված խնդիրներից ու ներդրումներ կատարել եկամտաբեր ուղղություններում, մասնավորապես ավելացնել Դիջիթալից եկամուտները, անդամավճարներից մուտքերը, ստեղծել եկամուտների դիվերսիֆիկացիա UATE PowerHouse նախագծի միջոցով: Սպասվում է, որ Դիջիթալ նախագծում կատարվող ներդրումները իրենց արդյունքը կտան արդեն իսկ 2026 թ.-ին, Սակայն առկա է ռիսկ, որ UATE PowerHouse նախագծում կատարված ներդրումների հետզնման ժամկետը կգերազանցի 3 տարին, քանի որ տարածքների ամողջությամբ շահագործման հանձնումը կարող է տևել 12-18 ամիս, ինչն էլ կհանգեցնի ընկերության կողմից պարտավորությունների պատշաճ կատարման խնդիրների:

Տոկոսադրույքի ռիսկ: Կապված է շուկայում տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի անսպասելի և կտրուկ փոփոխությունների հետ, որոնք կարող են անդրադառնալ ֆինանսական գործիքների գների և եկամտաբերության վրա: Սա իր հերթին կարող է արտացոլվել Ընկերության տոկոսային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դրամական հոսքերի մեծության վրա: Որպես արդյունք կարող է արձանագրվել Ընկերության համախառն եկամուտների և ծախսերի բացասական փոփոխություն, որի հետևանքով կնվազի շահույթի մակարդակը: Ընկերության տնօրինությունը գործնական քայլեր է ձեռնարկում նաև ռիսկի այս տեսակի մշտադիտարկման, վերահսկման և մեղմման ուղղությամբ՝ հաշվի առնելով բոլոր հնարավոր սցենարները: Ընկերության գործող վարկի տոկոսադրույքը ֆիքսված է: Ընկերությունը նաև նախատեսում է պարտատոմսերի թողարկում, որոնց տոկոսադրույքը ֆիքսված է 13% և նույնպես փոփոխման ենթակա չէ մինչև մարման օրը: Հետագայում ֆինանսական գործիքներից օգտվելու դեպքում ընկերությունը նախատեսում է օգտվել միայն ֆիքսված տոկոսադրույքով գործիքներից:

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունն է ընկերության գործունեության վրա, որը կարող է արտահայտվել մի քանի ուղղություններով: ՀՀ-ում SS ոլորտի եկամուտների մեծ մասը արտարժույթով են ձևավորվում, ուստի դրամի արժևորումը կնպաստի SS ոլորտում ֆինանսական վիճակի վատթարացման, ինչն էլ իր

հերթին կհանգեցնի «ԱՏՁՄ» խմբի ընկերությունների ֆինանսական հոսքերի պակասեցման, մասնավորապես՝ «Դիջիտեքին» մասնակցության նվազեցման, անդամավճարների հոսքերի պակասեցման: Մեկ այլ ուղղություն էլ վերաբերում է ընկերության արտարժույթով պարտավորությունների կատարմանը: Փոխարժեքի անցանկալի փոփոխություններն ի վերջո հանգեցնելու են արտարժույթային պարտավորությունների սպասարկման թանկացմանը, քանզի միավոր արտարժույթի դիմաց պահանջվելու է ավելի շատ ծավալով ՀՀ դրամ: Ինչպես որ նախորդ ուղղության դեպքում էր, սա նույնպես բերելու է ընկերության ծախսերի մեծացմանն ու ֆինանսական ցուցանիշների վատթարացմանը Ընկերության տնօրինությունը վերահսկում է արտարժույթային ռիսկը, հարկ եղած դեպքում դիմելով անհրաժեշտ քայլերի՝ հնարավոր վատ սցենարներից խուսափելու և նվազագույն կորուստներով դուրս գալու նպատակով: Արտարժույթային ռիսկի ուղղակի ազդեցությունը մեղմվում է նրանով, որ ընկերության եկամուտները և ծախսերը հիմնականում նույն արժույթով են՝ ՀՀ դրամով, ընկերությունը խուսափում է արտարժույթով նոր պարտավորություններ վերցնելուց: Այս հանգամանքով է պայմանավորված պարտատոմսերը միայն դրամով թողարկելու առաջարկը:

Գործառնական ռիսկ: Ընկերության հիմնական գործունեությունը ենթադրում է տարատեսակ գործառնական ռիսկեր: Ընկերությունը պայմանագրային հարաբերություններ ունի մատակարար գործընկերների հետ: Հենց վերջինների կողմից իրենց պարտավորությունների պատշաճ կատարումից է զգալիորեն կախված ընկերության բնականոն գործունեությունը: Մասնավորապես, անհրաժեշտ ապրանքների ոչ ժամանակին մատակարարումը կամ ծառայությունների ոչ պատշաճ կատարումը կարող է հանգեցնել Ընկերության բնականոն գործունեության դանդաղեցման, որն էլ իր հերթին կբերի սահմանված ժամկետների խախտումների: Ընկերության հաջողությունը մեծապես կախված է բարձրակարգ մասնագետներից՝ ՏՏ, ինժեներական, ֆինանսական և մենեջմենթի ոլորտներում: Տաղանդավոր կադրերի ներգրավումը և պահպանումը մրցակցային շուկայում մարտահրավեր է, ինչը կարող է սահմանափակել ընկերության աճի և նոր նախագծերի իրագործման հնարավորությունները: Սրանք բոլորը հանգեցնելու են նախորդ պարբերության մեջ նկարագրված իրավիճակին՝ առաջ բերելով տնտեսական կորուստներ: Թվարկված գործառնական ռիսկերից խուսափելու կամ դրանց մակարդակը նվազեցնելու նպատակով ընկերության տնօրինությունը մեծ ուշադրություն է դարձնում գործընկերների հետ պայմանագրային հարաբերությունների պատշաճ կատարմանը:

3.3 Տեղեկություն Թողարկողի մասին

3.3.1 Թողարկողի պատմությունը և զարգացումը

3.3.1.1 Թողարկողի անվանումը և կազմակերպարավական ձևը

Թողարկողի անվանումն է՝

	Լրիվ ֆիրմային անվանումը	Կրճատ անվանումը
հայերեն՝	«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ
ռուսերեն՝	“Ю Ай Ти И Экспо” Общество с Ограниченной Ответственностью	“Ю Ай Ти И Экспо”ООО
անգլերեն՝	“UITExpo” Limited Liability Company	“UITExpo” LLC

Ընկերությունը գրանցվել է 2005 թվականին Պետական ռեգիստրի կողմից՝ 286.110.05729 գրանցման համարով և հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ գործելով ՀՀ օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գործունեություն է ծավալում ցուցահանդեսների և միջոցառումների կազմակերպման ոլորտում:

3.3.1.2 Թողարկողի պետական գրանցման վայրը և համարը

Թողարկողի հիմնադրման երկիր	Հայաստանի Հանրապետություն
Թողարկողի պետական գրանցման վայր	ՀՀ, Երևան, Հ.Հակոբյան 3շ. 3հ 301, 302, 318ս,
Թողարկողի պետական գրանցման համար	286.110.05729
Թողարկողի պետական գրանցման ամսաթիվ	06.06.2005թ

3.3.1.3 Ստեղծման փաստացի գործունեություն տվյալներ

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը փաստացի գործունեություն է ծավալում Երևանում: Զբաղվում է ցուցահանդեսների և միջոցառումների կազմակերպմամբ:

3.3.1.4 Գտնվելու վայրը և կապի միջոցները.

Թողարկողի գտնվելու վայրն է	ՀՀ, Երևան, Հ.Հակոբյան 3շ. 3հ 301, 302, 318ս,
----------------------------	--

Կապի միջոցներ	Հեռ՝ (+37455) 110 607 Էլ.-փոստ՝ info@uate.org Կայք՝ https://uate.org/
---------------	---

3.3.1.5 Թողարկողի զարգացման ընթացքում նշանակալի դեպքերը

Ընկերությունը 2015-2020թթ. ընթացքում իրականացրել է «Բիզնես ինովացիոն ֆորում»-ը, որը կազմակերպվել է Դիլիջան քաղաքում՝ երկու օր տևողությամբ միջոցառման ձևաչափով և հանդիսացել է յուրօրինակ հարթակ, որտեղ թեմատիկ քննարկումների և մասնագիտական շփումների միջոցով ներկայացվել է ինովացիոն զարգացման փորձը, կազմակերպվել են գործնական քննարկումներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, ձևավորվել է հետագա քայլերի ու գործողությունների պլան:

Բացի այդ 2010-2022թթ. ընթացքում իրականացվել են SS ոլորտի լիդերների «առանց փողկապների» հանդիպումներ, որոնք կազմակերպվել են տարեկան միջինում երեքից չորս անգամ և նախատեսված են եղել բացառապես «ԱՏՁՄ» խմբի ընկերությունների միության անդամների համար: Այդ հանդիպումների շրջանակում բարձրացվել են ոլորտային խնդիրներ և մշակվել են հնարավոր լուծումներ, այդ թվում՝ օրենսդրական փաթեթների մշակման և այլ մոտեցումների միջոցով:

2014-2018թթ. իրականացրել է նաև «Դիջիտեք» բիզնես ֆորումը «Մարիոթ» հյուրանոցում, որը համեմատաբար փոքր մասշտաբի էքսպո և ֆորում էր և նպատակ ուներ խթանել SS ոլորտի և հարակից էկոհամակարգերի զարգացումը՝ մասնագիտական բովանդակությամբ պանելային քննարկումների միջոցով:

3.3.1.6 Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում իրականացվել են մի շարք էական ներդրումներ, որոնք ուղղված են եղել ինչպես ենթակառուցվածքների ամրապնդմանը, այնպես էլ կազմակերպության գործունեության ընդլայնմանը և նոր ուղղությունների զարգացմանը, մասնավորապես՝ իրականացվել է «Իննիջևան» հանգույցի և «Իրական Դպրոց» Իջևանի մասնաճյուղի հիմնումը, որի շրջանակում կատարվել է շուրջ 700,000 ԱՄՆ դոլարի ներդրում:

2024թ. -ին ձևավորվել է քաղաքականություն մշակող բաժին, որի նպատակը SS ոլորտում քաղաքականության մշակումն ու պետական մակարդակով դրա առաջնորդումն է, ինչը կարող է նպաստել ոլորտային նախաձեռնությունների համակարգմանը և շահերի ներկայացվածության բարձրացմանը:

Բացի այդ ընդլայնվել է «Դիջիթեք»-ի կոնցեպտը՝ ֆեստիվալ և կոնֆերանս ձևաչափերի ավելացմամբ, ինչը նպաստել է կոնֆերանսի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը և մասնակցության աճին, որի արդյունքները տեսանելի են նաև հիմնական ցուցանիշներում: 2023թ.-ին «Դիջիթեք»-ին մասնակցել է 120 ընկերություն և արձանագրվել է շուրջ 15,000 այցելու, 2024թ.-ին մասնակցել է 180 ընկերություն և այցելուների թիվը կազմել է շուրջ 22,000, իսկ 2025թ.-ին մասնակցել է 200 ընկերություն և այցելուների թիվը հասել է շուրջ 30,000-ի:

3.4 Բիզնեսի նկարագիրը

3.4.1 Հիմնական գործունեությունը

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ներգրավված է իվենթեյնեյնթմենթի, քրնսալթինգի և հաղորդակցական ծառայությունների շուկաներում:

Ընկերության հիմնական ապրանքներն ու ծառայությունները կենտրոնացած են միջոցառումների կազմակերպման, խորհրդատվության և հաղորդակցության ուղղությունների շուրջ և ձևավորում են կազմակերպության գործունեության առանցքային բովանդակությունը: Միջոցառումների կազմակերպման շրջանակում Ընկերությունը տեխնոլոգիական համայնքի համար իրականացնում է մասնագիտացված և բազմաֆորմատ միջոցառումներ որոնցից առանցքայինն է DigiTec-ը, որը ոչ միայն Հայաստանի և տարածաշրջանի խոշորագույն տեխնոլոգիական իրադարձությունն է, այլև երկրում անցկացվող ամենամասսայական միջոցառումներից մեկը: Այն անցկացվում է ամեն տարի տեխնոլոգիական ցուցահանդեսի, կոնֆերանսի և փառատոնի եռամիասնության տրամաբանությամբ և հավաքում է տասնյակ հազարավոր այցելուներ և մասնակիցներ:

Խորհրդատվության ուղղությամբ 2026-2028 թվականներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունները փոխային կերպով փոխակերպվելու են բովանդակային ծառայությունների՝ ներառելով տեխնոլոգիական ընկերությունների համար իրավաբանական ծառայությունների ամբողջական փաթեթ, պետական աջակցության ծրագրերի և դրամաշնորհների փաստաթղթերի լիարժեք նախապատրաստում, ռեկրուտինգային ծառայություններ և տաղանդների տրանսֆեր, առաջխաղացման ծառայություններ, ինչպես նաև հատուկ ստարթափների համար նախատեսված նոր պրոդուկտների փաթեթ՝ ներդրումների արդյունավետ ներգրավման նպատակով:

Հաղորդակցության ուղղությամբ 2026-2028 թվականներին նախատեսվում է ընդլայնել ծառայությունների շարքը՝ ներառելով մեդիաարշավների կազմակերպում առաջատար

միջազգային լրատվամիջոցներում և տեխնոլոգիական առաջնորդների անձնական բրենդի ձևավորման ծառայություններ:

3.4.2 Հիմնական շուկաները և մրցակցային դիրքը

Ընկերությունը զբաղեցնում է առանձնահատուկ մրցակցային դիրք Հայաստանի տեխնոլոգիական շուկայում՝ միաժամանակ գործելով որպես ծառայություններ մատուցող տնտեսվարող և որպես էկոհամակարգի ձևավորող ու զարգացնող համակարգաստեղծ դերակատար: Այս երկակի դերը ստեղծում է մրցակցային առավելություն, որը դժվար է վերարտադրել այլ կազմակերպությունների կողմից, քանի որ հիմնված է երկարաժամկետ ներգրավվածության, վստահության կապիտալի և ոլորտային խորը ինստիտուցիոնալ հիշողության վրա:

1) Շուկայի խորքային գիտելիք և «ներսից» դիտարկում

Ընկերության հիմնական մրցակցային առավելությունը ոչ թե պարզապես տեխնոլոգիական ոլորտի մասին տեղեկացվածությունն է, այլ բացառիկ և խորքային էքսպերտիզան հենց հայկական տեխնոլոգիական էկոհամակարգի վերաբերյալ՝

- հայկական տեխնոլոգիական ընկերությունների,
- միջազգային ընկերությունների հայաստանյան մասնաճյուղերի,
- տեխնոլոգիական սփյուռքի (հայկական ծագմամբ օտարերկրյա ընկերություններ, արտասահմանում հայերի կողմից հիմնված ընկերություններ) և դրանց մատակարարների/կապալառուների աշխատանքային տրամաբանության, սպասումների և կապերի վերաբերյալ:

Այս գիտելիքը թույլ է տալիս ընկերությանը առաջարկել լուծումներ, որոնք ոչ միայն «տեղայինացված» են, այլ կառուցված են իրական դերակատարների շահերի, վարքագծի և ոլորտի շարժիչների ճիշտ ընկալման վրա:

2) Համակարգաստեղծ դերակատարի կարգավիճակ և ազդեցություն օրակարգի վրա

Ընկերությունը ոլորտում դիրքավորվում է որպես այն կառույցներից մեկը, որը ոչ միայն արձագանքում է շուկային, այլ նաև մասնակցում է շուկայի օրակարգի ձևավորմանը:

Քսանհինգ տարվա հետևողական գործունեության արդյունքում ընկերությունը (և փոխկապակցված անձինք) կուտակել են կապիտալ՝

- մասնագիտական վստահություն,
- գործընկերային երկարատև ցանց,
- ազդեցություն ոլորտային քննարկումների և լուծումների նախագծման վրա:

Սա մրցակցային առավելություն է, քանի որ շուկայում շատ կազմակերպություններ կարող են առաջարկել հաղորդակցական կամ միջոցառումների ծառայություններ, բայց քչերն են կարողանում նույն մակարդակով ձևավորել թեմաները, միավորել դերակատարներին և առաջ մղել լուծումները:

3) Վստահության և գործընկերային կապերի ենթակառուցվածք

Տեխնոլոգիական համայնքի հետ աշխատելիս հիմնական «արժույթը» վստահությունն է: Ընկերության երկարաժամկետ ներկայությունը և համակարգաստեղծ դերը ձևավորում են գործընկերների լայն և բարձրորակ ցանց, որն ապահովում է՝

- արագ հասանելիություն առանցքային անձանց/կազմակերպությունների,
- սփյուռքի հետ կապի ինստիտուցիոնալացված ուղիներ,
- համատեղ նախաձեռնությունների համար բարձր կոնվերսիա (մասնակցություն, ներգրավվածություն, համաֆինանսավորում, գործընկերային աջակցություն):

Այդ ցանցը նաև ապահովագրում է մրցակցային ճնշումներից, որովհետև հաճախորդի համար ընկերությունը դառնում է ոչ միայն մատակարար, այլ մուտքի կետ դեպի համայնք:

4) Խորհրդատվական միջոցառումներ + հաղորդակցություն՝ որպես միասնական արժեքային առաջարկ

Ընկերության դիրքն առանձնանում է նրանով, որ այն չի սահմանափակվում «միջոցառում կազմակերպելով» կամ «PR/հաղորդակցություն անելով»: Այն առաջարկում է համայնքային խորհրդատվական միջոցառումների և հաղորդակցական ծառայությունների համադրություն, որտեղ՝

- միջոցառումները ծառայում են որպես ոլորտային քննարկումների հարթակ,
- հաղորդակցությունը՝ որպես դիրքավորման և ազդեցության գործիք,
- իսկ էքսպերտիզան՝ որպես բովանդակային որակի երաշխիք:

Այս համադրությունը մրցակցային առավելություն է, քանի որ հաճախ շուկայում մատակարարները կամ «տեխնիկապես լավ կազմակերպում են», կամ «լավ հաղորդակցում են», բայց չունեն ոլորտի խորքային նյարդը և ազդեցության մեխանիզմները միասին:

5) Տեխնոլոգիականից դուրս ընդլայնվելու պոտենցիալ՝ արդեն ձևավորված մեթոդաբանությամբ

Թեև հիմնական շուկան հայկական տեխնոլոգիական էկոհամակարգն է, ընկերության մրցակցային դիրքն ուժեղանում է նաև նրանով, որ ներկայումս իրականացվում են քայլեր տնտեսության այլ ճյուղերի վրա ընդլայնվելու ուղղությամբ:

Սա կարևոր է ներկայացման մեջ, որովհետև ցույց է տալիս՝ ընկերությունն ունի՝

- փորձարկված մոտեցում (ecosystem-first),
- բովանդակություն/համայնք/հաղորդակցություն եռյակի աշխատող մոդել,
- և կարող է նույն տրամաբանությունը տեղափոխել այլ ոլորտներ՝ ստեղծելով նոր համայնքային կապեր ու ազդեցության օրակարգեր:

3.5 Թողարկողի կառուցվածքը

Ընկերությունը հանդիսանում է «ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-ի (գրանցման համար՝ 211.171.1052474, ՀՎՀՀ՝ 01226155) դուստր ընկերությունը:

3.6 Թողարկողի հիմնական միջոցները

3.6.1 Թողարկողի էական հիմնական միջոցների նկարագիր

Թողարկողը իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ որոնք ազդագրի ներակացման պահի դրությամբ ամբողջությամբ մաշված են և դրանց հաշվեկշռային արժեքը 0 հի դրամ է:

3.7 Զարգացման վերջին միտումները

«ԱՏՁՄ» խմբի հասույթը հաշվետու ժամանակահատվածներում ունեցել է դրական դինամակա՝ 2023թ-ին այն կազմել է 1,741,854 հազ ՀՀ դրամ, 2024թ-ին՝ 1,805,486 հազ. ՀՀ դրամ, իսկ 2025թ-ին, ըստ նախնական տվյալների, կազմելու է 1,680,000 հազ. ՀՀ դրամ: Հասույթի դինամիկային վրա էական ազդեցություն է ունեցել 2024թ.-ին իրականացված WCIT համաժողովը:

Խմբի ծախսերի մեջ էական մեծություն են կազմում աշխատավարձային ծախսերը և միջոցառումների կազմակերպման հետ կապված ծախսերը, որոնց մանրամասները ներկայացված են ընկերության աուդիտորական հաշվետվությունում:

Հարկ է նշել, որ ընկերությունների խումբը բոլոր հաշվետու ժամանակահատվածներում ունեցել է վնաս 2025թ.-ի առաջին եռամսյակում՝ -132,296 հազ. ՀՀ դրամ, 2024թ.-ին՝ -102,946 հազ. ՀՀ դրամ, իսկ 2023թ.ին՝ -144,253 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության գործունեության ցուցանիշների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար պոտենցիալ ներդրողները կարող են ծանոթանալ Կազմակերպության տարեկան և կիսամյակային հաշվետվություններին, կանխատեսվում է, որ 2025թ.-ին Ընկերությունը կունենա շուրջ 160 մլն ՀՀ դրամի վնաս, ինչը պայմանավորված է նրանով, որ ներդրում է կատարվել միջոցառումների, անդամակցության և օպերացիոն թիմերի մեծացման մեջ, ինչպես նաև Դիջիթալ միջոցառման կազմակերպական աշխատանքների բարելավման մեջ, ինչի վրա կատարված ծախսերը ակնկալվում է հետզնել հետագա տարիներին:

3.8 Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.8.1 Կառավարման մարմինների կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները.

Ընկերության կառավարման մարմիններն են՝

Մասնակիցների ընդհանուր ժողովը
Տնօրենների Խորհուրդ
Տնօրեն

3.8.1.1 Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, ընդհանուր ժողովի իրավասությունները

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Հերթական և արտահերթ Ընդհանուր ժողովները հրավիրվում են Գործադիր տնօրենի նախաձեռնությամբ: Ընկերության մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության Տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տավա ավարտից ոչ շուտ, քանի երկու ամիս, ոչ ուշ, քան չորս ամիս անց: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար:

Մասնակիցների ընդհանուր ժողովի/միակ մասնակցի (այսուհետև՝ ժողովի) իրավասություններն են՝

1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նորը խմբագրությամբ,
2. Ընկերության կողմից բաժնեմասի (քաժնեմասերի) ձեռքբերումը և դրանց իրացումը Օրենքով սահմանված դեպքում,
3. Ընկերության վերակազմակերպումը,
4. Ընկերության լուծարումը,
5. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների լուծարման ամփոփիչ. լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

6. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
7. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
8. կազմակերպությունների (այդ թվում՝ դուստր ն կախյալ ընկերությունների) հիմնադրումը,
9. կազմակերպություններում (այդ թվում՝ դուստրը ե կախյալ ընկերությունների) մասնակցության մասին որոշումների ընդունումը,
10. Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի լիազորությունները կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) տալու հարցերը: Խորհրդի անդամների ընտրություն և դրանց կազմի հաստատում,
11. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
12. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
13. Աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,
14. Ընկերության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,
15. Ընկերության շահույթն ու վնասները ընկերության մասնակիցների միջև բաշխման մասին որոշման ընդունումը,
16. Ընկերության մասնաճյուղերի. ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,
17. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
18. Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը.
19. Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը գերազանցում է զուտ ակտիվների մեծության 1/4-ը) կատարելու մասին որոշման ընդունումը,
20. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
21. Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Ընկերության ճերքին փաստաթղթեր) ընդունումը,
22. Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ ընհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

3.8.1.2 Տնօրենների խորհուրդ

Խորհուրդն Ընկերության ռազմավարական կառավարում իրականացնող կոլեգիալ կառավարման մարմինն է և իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը: Խորհուրդը ձևավորվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ և բաղկացած է 3 (երեք) անդամից՝ ներառյալ Խորհրդի նախագահը: Խորհրդի անդամներին նշանակում և նրանց լիազորությունները դադարեցնում է Ընդհանուր ժողովը:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը և դրանց կանոնադրությունների (Կանոնակարգերի) հաստատումը,
2. Ընկերության կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը,
3. Ընկերության ծախսերի ամենամյա նախահաշվի և դրա կատարողականի հաշվետվության հաստատումը,
4. Ընկերության աշխատանքային ծրագրերի հաստատումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների լսումը,
5. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատված՝ Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև դրանցով չկարգավորված շրջանակներում՝ Ընկերության կառավարման մարմինների գործունեությունն ու գործառնությունների կատարումը կանոնակարգող հրահանգների, մեթոդական ցուցումների, ձեռնարկների և այլ ներքին փաստաթղթերի հաստատումը:
6. Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ Ընկերության կողմից իրականացվող ակտիվային ու պասիվային գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և սպասարկման վերաբերյալ որոշումների ընդունումը,
7. ՀՀ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ Ընկերության կողմից իր զուտ ակտիվների արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակի կամ անուղղակի գույքի ձեռքբերման կամ օտարման (կամ օտարման հնարավորության) հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշումների ընդունումը,
8. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իր գործառույթների իրականացումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը Խորհրդին վերապահված,

9. Ընկերության ներքին աուդիտորի նշանակումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, վարձատրության պայմանների սահմանումը, ինչպես նաև նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
10. Ընկերության գործադիր մարմնի անդամների և ներքին աուդիտորի նկատմամբ խրախուսման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ որոշումների ընդունումը,
11. Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումը և դրանց իրականացման վերահսկումը,
12. Ընկերության աուդիտն իրականացնող անձի (արտաքին աուդիտորի) վարձատրության չափի սահմանումը:

Կազմակերպության կորպորատիվ կառավարման համակարգում իր դերն արդյունավետ կատարելու համար խորհուրդն ապահովում է հետևյալ առանցքային գործառույթների իրականացումը.

1. կազմակերպության նպատակների, գործունեության սկզբունքների, կորպորատիվ արժեքների սահմանումը,
2. կորպորատիվ ռազմավարության, հիմնական գործողությունների պլանների, տարեկան բյուջեների և գործարար ծրագրերի դիտարկումն ու ուղղորդումը, կատարողականի թիրախային ցուցանիշների սահմանումը, կորպորատիվ ծրագրերի իրագործման և գործունեության, կապիտալ ծախսերի, ձեռքբերումների և վաճառքների վերահսկումը,
3. գործադիր մարմնի ձևավորումը, գործունեության վերահսկումը, անհրաժեշտության դեպքում լիազորությունների դադարեցումը, վարձատրության և դրա պայմանների որոշումն ու համապատասխանեցումը կազմակերպության երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ կայունության թիրախներին, և սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորման վերահսկումը,
4. խորհրդի անդամների վարձատրության և դրա պայմանների վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը,
5. հաշվապահական հաշվառման և ֆինանսական ու ոչ ֆինանսական հաշվետվողականության ամբողջականության, ներառյալ՝ ներքին ու արտաքին աուդիտի անկախության, վերահսկման համապատասխան համակարգերի, մասնավորապես՝ ռիսկերի կառավարման, ֆինանսական ու գործառնական հսկողության, համապատասխանության ապահովումը,

6. կառավարման արդյունավետության մշտադիտարկումը և, ըստ անհրաժեշտության, փոփոխությունների իրականացումը,
7. Խորհրդի և գործադիր մարմնի անդամների և մասնակիցների շահերի հնարավոր բախումների, ներառյալ՝ կազմակերպության ակտիվների ոչ իրավաչափ օգտագործման և շահագրգռվածության առկայությամբ գործարքների վերահսկումն ու կառավարումը,
8. կազմակերպության մասին տեղեկատվության բացահայտման և հաղորդակցության վերահսկումը, ինչպես նաև կազմակերպության ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

3.8.1.3 Տնօրեն

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ մասնակիցների ընդհանուր ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի: Ընկերության տնօրենը՝

1. առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,
2. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսները,
3. կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
4. տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
5. բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
6. հաստատում է հաստիքներ,
7. իրականացնում է ՀՀ գործող օրենսդրությանը չհակասող, Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Ընկերության ընդհանուր ժողովի կամ Խորհրդի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

Ընկերության գործադիր մարմնի իրավասությունները պայմանագրով կարող են փոխանցվել կառավարչի: Տնօրենն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ Ընկերության: Տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերությանն իրենց մեղքով (դիտավորյալ կամ անզգուշությամբ) պատճառված վնասների համար: Տնօրենն իրավունք ունի առանց լիազորության գործարքներ կատարել Ընկերության անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում Ընկերության զուտ ակտիվների մեծության 25%-ից:

3.8.2 Թողարկողի կառավարման մարմինների անդամները

Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի կազմը ստորև բերված է աղյուսակում

Անվանումը	Բնակության վայրը/ Գրանցման հասցեն	Զբաղեցրած պաշտոնը	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը
«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ	ՀՀ, ք. Երևան	Միակ մասնակից	Հանդիսանում է այլ իրավաբանական անձանց հիմնադիր

Թողարկողի խորհրդի կազմը ստորև բերված է աղյուսակում

Անունը, ազգանունը	Բնակության վայրը/ Գրանցման հասցեն	Զբաղեցրած պաշտոնը	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը
Ալեքսանդր Հովիկի Եսայան	ՀՀ, ք. Երևան	Խորհրդի նախագահ	«ԱՏՁՄ» ՀԿ նախագահ
Սարգիս Համլետի Կարապետյան	ՀՀ, ք. Երևան	Խորհրդի անդամ	«ԱՏՁՄ» ՀԿ գործադիր տնօրեն
Կարեն Սուրենի Վարդանյան	ՀՀ, ք. Երևան	Խորհրդի անդամ	«Ֆորմուլա Վենչուրս» ՍՊԸ Ֆորմուլա Վի Սի պայմանագրային ոչ հրապարակային փակ ներդրումային փոնդ, համահիմնադիր և գլխավոր գործընկեր՝

Թողարկողի գործադիր մարմնի կազմը ներկայացված է ստորև

Անունը, ազգանունը	Բնակության վայրը/ Գրանցման հասցեն	Զբաղեցրած պաշտոնը (պաշտոնավարման սկիզբ/ազարտ)	Փորձառությունը
Խաչատուր Նվերի Հակոբյան	ՀՀ, ք. Երևան	տնօրեն	10 տարի, 2025թ հունիսից ընկերության տնօրենն է

3.8.3 Շահերի բախումը

Թողարկողի մոտ բացակայում է որևէ տեղեկատվություն, որը թույլ կտար եզրակացնել Թողարկողի և Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց շահերի բախման վերաբերյալ: Կառավարմանը մասնակցող որևէ անձ չի հայտնել շահերի բախման մասին տեղեկատվություն:

3.8.4 Կորպորատիվ կառավարման սկզբունքները

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ-ն համաձայն 09.12.2025 թվականի արտահերթ Ընդհանուր ժողովի Արձանագրության՝ միացել է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից հաստատված կորպորատիվ կառավարման կանոնագրքին (այսուհետ նաև՝ Կանոնագրք): Ընդունել և գործնականում կիրառել է Կանոնագրքի սկզբունքները, ներառյալ մասնակիցների հավասար իրավունքների ապահովումը, տնօրենների խորհրդի և ղեկավարության դերակատարությունը, ներքին հսկողությունը, ռիսկերի կառավարման համակարգերը, ինչպես նաև տեղեկության բացահայտման և թափանցիկության մեխանիզմները, որքանով որ դա հնարավոր է, ելնելով Կանոնագրքի նպատակներից՝ հաշվի առնելով Ընկերության իրավական կառուցվածքը:

Թողարկողը հետևում է իր կազմակերպարարական կառուցվածքին համապատասխանող կորպորատիվ կառավարման սկզբունքներին, մասնավորապես՝ ապահովում է արդյունավետ կորպորատիվ կառավարման միջավայր, իր մասնակիցների իրավունքների իրականացումը և հավասար վերաբերմունք վերջիններիս նկատմամբ:

Ընկերության կառավարման համակարգը մշակված է ՀՀ օրենսդրության շրջանակում և բավարարում է ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին:

3.9 Հսկող անձիք

Կանոնադրական կապիտալում մասնակցության ուժով թողարկողի հսկող անձիք ներկայացված են ստորև՝

Մասնակիցները	Բաժնեմասի չափը (%)	Բաժնեմասի չափը
«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ	100%	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

3.10 Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ

3.10.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2023-2024թթ. աուդիտորական եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են [հավելված 5](#)-ում:

3.10.2 Ֆինանսական վիճակի էական փոփոխությունների նկարագրությունը

2025թ.-ի առաջին եռամսյակի արդյունքներով «ԱՏՁՄ» խումբը ունեցել է շուրջ 132 մլն ՀՀ դրամ վնաս, ինչը ակնկալվում էր ծածկել Դիջիթեք ցուցահանդեսից ստացվող շահույթով, սակայն 2025թ-ին Դիջիթեք ցուցահանդեսը չի ունեցել բարձր շահութաբերություն, քանի որ ներդրված ծախսերի մի մասը ուղղված է եղել երկու նոր պրոդուկտներ ստեղծելուն՝ կոնֆերանս և ֆեստիվալ, ինչն էլ կնպաստի հետագա տարիների ավելի մեծ եկամուտներ բերելուն:

3.11 Լրացուցիչ տեղեկատվություն թողարկողի մասին

2025թ. հունիսի 30-ի դրությամբ թողարկողի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 50,000 դրամ, որը բաժանված է 1 բաժնեմասի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 50 000 դրամ: 2025թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կանոնադրական կապիտալը պատկանում է միակ մասնակցին, որը հանդիսանում է «ԱՏՁՄ» ՀԿ-ն: «ԱՏՁՄ» ՀԿ-ն իր հերթին կանոնադրական կապիտալ չունի:

Ընկերության կանոնադրության 2.1 և 2.2 կետերի համաձայն՝ Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որը կծառայի միակ մասնակցի կանոնադրական նպատակների իրականացմանը: Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այնպիսի գործունեությամբ, որի մասին նշված է լիցենզիայի մեջ:

3.12 Մասնագիտական կարծիք

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք:

3.13 Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում ներքոհիշյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը (կամ դրանց պատճենը) մշտապես մատչելի են հանրությանը.

- 1) Ընկերության կանոնադրությունը,
- 2) 2023-2024 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները:

Նշված փաստաթղթերի թղթային (պատճենները) կամ էլեկտրոնային տարբերակները կարող են ձեռք բերվել Ընկերության գտնվելու վայրի հետևյալ հասցեից՝ ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 32. 3 հ, 301, 302, 318 ս.: Դրանք հրապարակված են նաև <https://uate.org/> կայքում:

Բաժին 4. ԵՐԱՇԽԱՎՈՐԻ և ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1 ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

4.1.1 Ընդհանուր նկարագրություն.

Սույն ծրագրային ազդագրի շրջանակներում թողարկվող պարտատոմսերից բխող Թողարկողի պարտավորությունների կատարումը՝ ներառյալ պարտքի հիմնական գումարի (մայր գումարի) վերադարձը և կուպոնային եկամտի վճարումը պարտատոմսերի սեփականատիրոջը (ներդրողին), երաշխավորվում է «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության կողմից (այսուհետ՝ «**Երաշխավոր**»):

Երաշխավորումը տրամադրվում է Թողարկողի և Երաշխավորի միջև կնքված Պարտատոմսերից բխող պարտավորությունների երաշխավորման պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ «**Երաշխավորության պայմանագիր**»): Երաշխավորության պայմանագրով Երաշխավորը ստանձնում է պարտավորություն՝ Թողարկողի հետ համապարտ պատասխանատվություն կրել Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերով ստանձնված պարտավորությունների կատարման համար՝ սույն ծրագրային ազդագրով և պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված շրջանակում:

4.1.2 Ապահովված (երաշխավորված) պարտավորությունների ծավալը

Երաշխավորմամբ ապահովված են Թողարկողի պարտավորությունները՝ կապված.

- պարտքի հիմնական գումարի վճարման/վերադարձի հետ՝ պարտատոմսերի անվանական արժեքի չափով,
- կուպոնային եկամտի վճարման հետ՝ ամբողջ հաշվեգրված գումարի չափով՝ պարտատոմսերի թողարկման պայմաններին համապատասխան,
- տույժերի/տոկոսների վճարման հետ՝ եթե նման վճարումներ նախատեսված են պարտատոմսերի թողարկման պայմաններով և/կամ կիրառելի օրենսդրությամբ,
- ինչպես նաև պարտատոմսերի թողարկման պայմաններով նախատեսված այլ վճարումների հետ (եթե կիրառելի է), (այսուհետ՝ միասին «**Ապահովված պարտավորություններ**»)

և գործում են մինչև Ապահովված պարտավորությունների լրիվ կատարումը (ներառյալ՝ ժամկետանց պարտավորությունների ամբողջական մարումը):

4.1.3 Երաշխավորության իրավական բնույթը

Երաշխավորության պայմանագրով Երաշխավորը պատասխանատվություն է կրում պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ Թողարկողի հետ համատեղ՝ որպես համապարտ պարտապան՝ Երաշխավորության պայմանագրում նախատեսված կարգով և սահմաններում: Սա նշանակում է, որ պարտատոմսերի սեփականատերը, սահմանված դեպքերում և պայմաններով, կարող է դիմել Երաշխավորին՝ պահանջելով կատարում ապահովված պարտավորությունների մասով:

4.1.4 Երաշխավորության իրացում (Պահանջ ներկայացնելու կարգ)

Պահանջ ներկայացնելու հիմքեր

Պարտատոմսերի սեփականատերը իրավասու է դիմել Երաշխավորին, եթե Թողարկողը չի կատարել պարտատոմսերով ստանձնված որևէ վճարում սահմանված ժամկետում, և արդյունքում առաջացել է ժամկետանց պարտավորություն (օր.՝ կուպոնի կամ մայր գումարի չվճարում պարտատոմսերի պայմաններով սահմանված վճարման օրը):

Դիմումի ձևը և հասցեագրումը

Երաշխավորին ներկայացվող Պարտավորությունների կատարման պահանջը (այսուհետ՝ Պահանջ) ներկայացվում է գրավոր ձևով՝ Երաշխավորման պայմանագրի 8-րդ բաժնում նշված հասցեով (<<, ք. Երևան, Ոսկերիչների 1) (փոստային և/կամ այլ՝ պայմանագրով թույլատրելի հաղորդակցման եղանակով):

Պահանջը կարող է ներկայացվել՝

- պարտատոմսերի սեփականատիրոջ կողմից, կամ
- պարտատոմսերի սեփականատիրոջ պատշաճ լիազորված ներկայացուցչի կողմից՝ լիազորագիրը/ներկայացուցչության փաստաթուղթը կցելով:

Պահանջի բովանդակային նվազագույն պահանջներ

Պահանջը պետք է պարունակի առնվազն հետևյալը.

- Հղումներ՝ Երաշխավորման պայմանագրին և պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագրին,
- Պահանջվող գումարի հաշվարկ՝ պարտադիր տարանջատմամբ՝
 - մայր գումար (անվանական արժեք),
 - հաշվեգրված կուպոնային եկամուտ,
 - տույժեր/տոկոսներ (եթե կիրառելի են),
 - այլ վճարումներ (եթե կիրառելի են),
- Պարտատոմսերի սեփականատիրոջ տվյալներ (անուն/անվանում, նույնականացման տվյալներ՝ ըստ կիրառելի կարգի),

- Սեփականության/իրավունքի ապացույցներ՝ փաստաթղթեր կամ քաղվածքներ, որոնք հաստատում են պարտատոմսերի սեփականատիրոջ իրավունքները (օր.՝ համապատասխան հաշվառման/ռեգիստրի տվյալներ, հաշվի քաղվածք և այլն՝ ըստ կիրառելի կարգի),
- Փոխանցման ռեկվիզիտներ՝ բանկային հաշվեհամարի տվյալներ, որոնց պետք է փոխանցվի վճարումը:

4.1.5 Պահանջի կցորդների օրինակելի ցանկ

Պահանջին, որպես կանոն, կցվում են՝

- պարտատոմսերի սեփականատիրոջ իրավունքների հաստատող փաստաթուղթ(եր),
- անձի/իրավաբանական անձի նույնականացման տվյալներ,
- ներկայացուցչի դեպքում՝ լիազորագիր կամ այլ ապացույց՝ ներկայացուցչության իրավաչափության մասին,
- հաշվարկի աջակցող փաստաթուղթ (օրինակ՝ սեփականատիրոջ հաշվարկ-աղյուսակ կամ քաղվածք՝ ըստ անհրաժեշտության):

4.1.6 Պահանջի կատարումից հրաժարվելու կամ կասեցնելու սահմանափակ հիմքեր

Ընդհանուր կանոն

Երաշխավորը իրավունք չունի կասեցնել կամ մերժել Պահանջի կատարումը:

Բացառություն

Երաշխավորը կարող է չկատարել Պահանջը միայն այն դեպքերում, երբ Պահանջը ակնհայտորեն չի համապատասխանում՝

- Երաշխավորման պայմանագրին, կամ
- սույն ծրագրային ազդագրին, կամ
- ապահովված պարտավորության պայմաններին (պարտատոմսերի թողարկման պայմաններին):

Ակնհայտորեն չհամապատասխանելու դեպքեր կարող են լինել, օրինակ՝ Պահանջի մեջ բացակայում են պարտադիր տվյալներ/կցորդներ, կամ ներկայացված հաշվարկը/իրավունքի ապացույցը ակնհայտորեն չի վերաբերում տվյալ պարտատոմսերին կամ տվյալ պահանջատիրոջը:

4.2 Անկախ աուդիտորները

Երաշխավորի 2023-2024թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: «Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (նախկինում՝ «Մելիքյանս ընդ. Քո» ՍՊԸ) ստեղծվել է 1999թ. հուլիսի 20-ին՝ ք. Երևան, Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ն. Գոգոլի., 12-14 շենք, 78 գրասենյակ: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Չեյլոսկինցիների 62: Ընկերությունը աուդիտորական ծառայությունների մատուցման լիցենզիա է ստացել՝ անդամակցելով Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատին համաձայն ՀԱՊ խորհրդի 2021թ.-ի փետրվարի 17-ի 30-Ա որոշման (ՀԳԳՀ՝ 1 21 0489) և ծառայություններ է մատուցում առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև ֆինանսական ոլորտի կազմակերպություններին: Ընկերությունը աուդիտորական, հարկային և խորհրդատվական ծառայություններ է մատուցում տնտեսվարող սուբյեկտների, որոնք գործունեություն են իրականացնում տնտեսության տարբեր ոլորտներում: Ընկերությունն առաջարկում է ծառայությունները տարբեր փաթեթներ՝ կախված Ընկերության պահանջներից, գործունեության ոլորտից և առանձնահատկությունից: Ընկերությունն ունի ներքին հսկողության արդյունավետ համակարգ, որը երաշխավորում է մատուցվող ծառայությունների բարձր որակի ապահովում: «Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մատուցում է արտաքին աուդիտի, հաշվապահական հաշվառման, ֆինանսական, հարկային խորհրդատվական և այլ մասնագիտացված ծառայություններ Հայաստանում և արտերկրում: Աուդիտորական կազմակերպության տնօրենն է Ռոբերտ Մելիքյանը: Ընկերությունը գործում է ՀՀ, ք. Երևան, Ն. Գոգոլի փ., 12-14 շենք, 78 գրասենյակ հասցեում: Հեռ.՝ +(374) 95 90 19 49:

Կայք՝ <https://www.moore-armenia.am/hy/> էլ. հասցե՝ info@moore-armenia.am

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են [Հավելված 5-ում](#):

4.3 Ռիսկային գործոններ

Ցանկացած ներդրող մինչև Թողարկողի պարտատոմսերում ներդրում անելը պետք է, ի լրումն պարտատոմսերին և Թողարկողին առնչվող ռիսկերին, ու ամբողջությամբ ուսումնասիրի Երաշխավորի գործունեության հստակ ռիսկային գործոնները: Ստորև

ներկայացված են այն ռիսկերը, որոնք Երաշխավորը Ազդագրի ներկայացման պահի դրությամբ համարում է էական, սակայն կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Թողարկողին այս պահին հայտնի չեն կամ Թողարկողը դրանք համարում է ոչ էական: Ստորև նկարագրված ռիսկային գործոնների ցանկը պետք է օգտագործվի միայն որպես ուղեցույց:

SS ոլորտի հետ կապված ռիսկեր: SS ոլորտի հետ կապված ռիսկերը կարող են էական և անմիջական ազդեցություն ունենալ «ԱՏՁՄ» խմբի ֆինանսական վիճակի վրա, պայմանավորված արհեստական բանականության զարգացմամբ: ԱԲ լուծումների արագ տարածումը կարող է հանգեցնել նրան, որ ներդրումները և մարդկային ռեսուրսները կենտրոնանան առավելապես ԱԲ ուղղվածություն ունեցող նախագծերում, մինչդեռ SS ոլորտի այլ ենթաոլորտները կարող են հայտնվել երկրորդական դիրքում, ինչի արդյունքում հնարավոր է դրանցում ֆինանսավորման և տնտեսական ակտիվության կրճատում: Բացի այդ, ԱԲ տեխնոլոգիաների ներդրման հետ կապված առկա են իրավական անորոշություններ, որոնք կարող են ժամանակավորապես սահմանափակել որոշ բիզնես մոդելների զարգացումը կամ մեծացնել ծախսերը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ոլորտի ընկերությունների շահութաբերության վրա:

Միաժամանակ ԱԲ տեխնոլոգիաների արագ զարգացումը կարող է պահանջել զգալի լրացուցիչ ներդրումներ ենթակառուցվածքների վերազինման և նոր հմտությունների ձևավորման մեջ, ուստի ոչ բոլոր ընկերությունները կարող են ունենալ բավարար ռեսուրսներ այդ փոփոխություններին արագ հարմարվելու համար, ինչի հետևանքով հնարավոր է ընկերությունների մի մասի մրցունակության նվազում, շուկայից դուրս մղում կամ գործունեության ծավալի կրճատում, ինչն ընդհանուր առմամբ կարող է նվազեցնել SS ոլորտի ներգրավվածությունն ու ֆինանսական հոսքերը և այդ միջոցով բացասաբար անդրադառնալ նաև «ԱՏՁՄ» խմբի գործունեության և ֆինանսական կայունության վրա:

ՀԿ-ի գործունեությանը բնորոշ ռիսկեր: ՀԿ-ի գործունեությանը բնորոշ ռիսկերը կապված են կազմակերպության ֆինանսավորման կառուցվածքի և դրա կայունության հետ, քանի որ կազմակերպության գործունեության արդյունավետ իրականացումը մեծապես կախված է սահմանափակ թվով ֆինանսական աղբյուրներից: Պետական ֆինանսավորման հնարավոր կրճատումը կամ դրա տրամադրման պայմանների փոփոխությունը կարող է հանգեցնել ծրագրերի իրականացման ծավալի նվազման կամ որոշ նախաձեռնությունների դադարեցման: Միաժամանակ կազմակերպության կախվածությունը անդամավճարներից նշանակում է, որ անդամների թվի կրճատումը կամ նրանց ֆինանսական

հնարավորությունների վատթարացումը կարող է անմիջականորեն ազդել կազմակերպության եկամտային հոսքերի վրա:

Բացի այդ դոնորական ֆինանսավորումը, որպես հիմնական աղբյուր ունենալը, ենթադրում է ֆինանսավորման ժամանակավոր բնույթ և արտաքին ազդեցություններից կախվածություն, ինչի արդյունքում հնարավոր է ֆինանսավորման անընդհատության խախտում և երկարաժամկետ ծրագրերի պլանավորման բարդացում: Նման պայմաններում կազմակերպությունը կարող է բախվել դրամական հոսքերի անկայունության, վարչարարական ծախսերի հարաբերական աճի և ֆինանսական ճկունության նվազման ռիսկերի, որոնք իրենց հերթին կարող են բացասաբար անդրադառնալ կազմակերպության գործունեության շարունակականության ռազմավարական նպատակների իրագործման և ընդհանուր կայուն զարգացման վրա:

Մակրոտնտեսական ռիսկեր: Կազմակերպության գործունեության համար լրացուցիչ ռիսկեր կարող է առաջացնել ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը, որն իր հերթին կարող է պայմանավորված լինել ինչպես ներքին, այնպես էլ տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումներով: Թվարկված գործոններով պայմանավորված մակրոտնտեսական վիճակի վատթարացումը շղթայական ռեակցիայով կբերի համախառն եկամուտների և գնողունակության անկմանը, բացասաբար կանդրադառնա նաև անշարժ գույքի պահանջարկի վրա՝ նվազեցնելով բնակարանների և օֆիսային տարածքների վաճառքների, վարձակալության ակտիվությունը ու հանգեցնելով երաշխավորի խմբի եկամուտների և շահույթի կրճատման:

Բացի այդ, համախառն եկամուտների կրճատումը բացասաբար կանդրադառնա նաև բնակչության վարկունակության և վարկային պարտավորությունների, ինչպես նաև խնայողությունների մակարդակի վրա, որն էլ կհանգեցնի բանկային համակարգի կայունության խաթարման՝ բարդացնելով լրացուցիչ ֆինանսավորում ստանալու կազմակերպության հնարավորությունները և վտանգներ ստեղծելով նրա բնականոն ֆինանսատնտեսական գործունեության համար:

Իրացվելիության ռիսկ: Այս ռիսկը պայմանավորված է Կազմակերպության (վերջինիս խմբի) ազատ դրամական միջոցների անբավարարությամբ, ինչի հետևանքով կարող է վտանգվել պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարումը: Նման իրավիճակը կարող է առաջանալ մակրոտնտեսական միջավայրի վատթարացման, ֆինանսական շուկաների անկայունության, եկամուտների նվազման կամ ծախսերի աճի արդյունքում, ինչի հետևանքով սահմանափակվում է Կազմակերպության (վերջինիս խմբի) իրացվելիությունը և նվազում է ընթացիկ և կարճաժամկետ պարտավորությունները սպասարկելու հնարավորությունը, ինչը

կարող է բացասաբար անդրադառնալ Կազմակերպության ֆինանսական կայունության գործարար հարաբերությունների և գործունեության շարունակականության վրա: 30.06.2025թ.-ի դրությամբ Ընկերության իրացվելիության գործակիցները բավական ցածր են, ինչի արդյունքում առկա է իրացվելիության ռիսկ, քանի որ ընթացիկ պարտավորությունները կազմում են շուրջ 828 մլն ՀՀ դրամ, մինչդեռ ընթացիկ ակտիվները կազմում են շուրջ 85 մլն ՀՀ դրամ և այս համադրության պայմաններում ընդհանուր իրացվելիության գործակիցը կազմում է 0.10, իսկ ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ 0.07, ինչը կարող է սահմանափակել Ընկերության կարողությունը կարճաժամկետ ժամանակահատվածում պատշաճ և ժամանակին կատարելու իր ընթացիկ պարտավորությունները և ստեղծել դրամական հոսքերի լարվածության հավանականություն:

Միաժամանակ նախատեսվում է, որ թողարկվող պարտատոմսերի գումարից շուրջ 450 մլն ՀՀ դրամ ուղղվելու է նշված պարտավորություններից մի մասի վերաֆինանսավորմանը, ինչի արդյունքում ակնկալվում է իրացվելիության ցուցանիշների բարելավում, քանի որ պարտավորությունների մի մասը կտեղափոխվի ավելի երկար ժամկետով ֆինանսավորման դաշտ, և դա կարող է նվազեցնել կարճաժամկետ վճարումների ճնշումը և ավելացնել ֆինանսական ճկունությունը: Մարվելու են շուրջ 240 մլն ՀՀ դրամ գործընկերների կողմից տրված փոխառությունները, շուրջ 100 մլն ՀՀ դրամ գնումների գծով կրեդիտորական պարտավորությունները, մոտ 80 մլն ՀՀ դրամի բանկային վարկը և շուրջ 30 մլն ՀՀ դրամի այլ պարտավորություններ: Հարկ է ավելացնել, որ մարվող պարտավորություններից միայն մոտ 80 մլն ՀՀ դրամի բանկային վարկի մնացորդն է, որ գտնվում է թողարկողի հաշվեկշռում, իսկ մնացած 370 մլն ՀՀ դրամի պարտավորությունները երաշխավորի հաշվեկշռում են:

Վերը ներկայացված փաստերը առաջ են քաշում Ընկերության իրացվելիության կառավարման անհրաժեշտություն: Ընկերությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

Լևերիջի / Ֆինանսական բեռի ռիսկ: ԱՏՁՄ խումբը վերջին տարիներին աշխատել է վնասով, ինչի արդյունքում աճել են ընկերության պարտավորություններ, որոնց մի մասը՝ շուրջ 85 մլն ՀՀ դրամը վարկային միջոցներն են: Մնացած պարտավորությունները չեն առաջացնում տոկոսային ծախսեր, դրանք կամ փոխառություններ են կամ այլ պարտավորություններ՝ գնումների գծով, ակտիվներին վերաբերող շնորհների գծով: Փոխառությունների վերաբերյալ մանրամասներին կարելի է ծանոթանալ Ընկերության Աուդիտ հաշվետվության մեջ: Այս պարտավորությունների փոխարինումը պարտատոմսերով (շուրջ 450 մլն ՀՀ դրամ) ավելացնելու է ընկերության տոկոսային բեռը: Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը ընդհանուր առմամբ մեծացնելու են ընկերության

Ֆինանսական բեռը, սակայն քանի որ պարտատոմսերի ժամկետը 36 ամիս է, ապա դրանց թողարկումով կբարելավվեն իրացվելիության ցուցանիշները, ինչն էլ հնարավորություն կտա ընկերությանը առաջիկա 3 տարիների ընթացքում դուրս գալ դրամական միջոցների սղության հետ կապված խնդիրներից ու ներդրումներ կատարել եկամտաբեր ուղղություններում, մասնավորապես ավելացնել Դիջիթալից եկամուտները, անդամավճարներից մուտքերը, ստեղծել եկամուտների դիվերսիֆիկացիա UATE PowerHouse նախագծի միջոցով: Սպասվում է, որ Դիջիթալ նախագծում կատարվող ներդրումները իրենց արդյունքը կտան արդեն իսկ 2026 թ.-ին: Սակայն առկա է ռիսկ, որ UATE PowerHouse նախագծում կատարված ներդրումների հետզնման ժամկետը կգերազանցի 3 տարին, քանի որ տարածքների ամողջությամբ շահագործման հանձնումը կարող է տևել 12-18 ամիս, ինչն էլ կհանգեցնի ընկերության կողմից պարտավորությունների պատշաճ կատարման խնդիրների:

Տոկոսադրույքի ռիսկ: Կապված է շուկայում տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի անսպասելի և կտրուկ փոփոխությունների հետ, որոնք կարող են անդրադառնալ ֆինանսական գործիքների գների և եկամտաբերության վրա: Սա իր հերթին կարող է արտացոլվել Կազմակերպության խմբի անդամ հանդիսացող ընկերությունների տոկոսային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դրամական հոսքերի մեծության վրա: Որպես արդյունք կարող է արձանագրվել համախառն եկամուտների և ծախսերի բացասական փոփոխություն, որի հետևանքով կնվազի շահույթի մակարդակը: Ընկերության տնօրինությունը գործնական քայլեր է ձեռնարկում նաև ռիսկի այս տեսակի մշտադիտարկման, վերահսկման և մեղմման ուղղությամբ՝ հաշվի առնելով բոլոր հնարավոր սցենարները Ֆինանսական գործիքներից օգտվելու դեպքում ընկերությունը նախատեսում է օգտվել միայն ֆիքսված տոկոսադրույքով գործիքներից:

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունն է ընկերության գործունեության վրա, որը կարող է արտահայտվել մի քանի ուղղություններով: ՀՀ-ում SS ոլորտի եկամուտների մեծ մասը արտարժույթով են ձևավորվում, ուստի դրամի արժևորումը կնպաստի SS ոլորտում ֆինանսական վիճակի վատթարացման, ինչն էլ իր հերթին կհանգեցնի «ԱՏՁՄ» խմբի ընկերությունների ֆինանսական հոսքերի պակասեցման, մասնավորապես՝ «Դիջիտալի» մասնակցության նվազեցման, անդամավճարների հոսքերի պակասեցման: Այդ պարագայում, ՀՀ դրամի փոխարժեքի անկումը հանգեցնելու է դրանց գնի բարձրացմանը, հետևաբար նաև ընկերության ծախսերի աճին: Մեկ այլ ուղղություն էլ վերաբերում է ընկերության արտարժույթով պարտավորությունների կատարմանը: Փոխարժեքի անցանկալի փոփոխություններն ի վերջո հանգեցնելու են արտարժույթային պարտավորությունների սպասարկման թանկացմանը, քանզի միավոր արտարժույթի դիմաց պահանջվելու է ավելի շատ ծավալով ՀՀ դրամ: Ինչպես որ նախորդ ուղղության դեպքում էր,

սա նույնպես բերելու է ընկերության ծախսերի մեծացմանն ու ֆինանսական ցուցանիշների վատթարացմանը: Ընկերության տնօրինությունը վերահսկում է արտարժույթային ռիսկը, հարկ եղած դեպքում դիմելով անհրաժեշտ քայլերի՝ հնարավոր վատ սցենարներից խուսափելու և նվազագույն կորուստներով դուրս գալու նպատակով: Արտարժույթային ռիսկի ուղղակի ազդեցությունը մեղմվում է նրանով, որ ընկերության եկամուտները և ծախսերը հիմնականում նույն արժույթով են՝ ՀՀ դրամով, ընկերությունը խուսափում է արտարժույթով նոր պարտավորություններ վերցնելուց:

4.4 Տեղեկություն Երաշխավորի մասին

4.4.1 Երաշխավորի պատմությունը և զարգացումը

4.4.1.1. Երաշխավորի անվանումը և կազմակերպատիրական ձևը

Երաշխավորի անվանումն է՝

	Լրիվ ֆիրմային անվանումը	Կրճատ անվանումը
հայերեն՝	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն	«ԱՏՁՄ» ՀԿ
ռուսերեն՝	Общественная организация «Союз компаний передовых технологий»	ОО «СКПТ»
անգլերեն՝	Non-Governmental Organization “Union of Advanced Technology Enterprises”	NGO “UATE”

Երաշխավորը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված և գործող հասարակական կազմարպություն:

ԱՏՁՄ-ն հանդես է գալիս որպես Հայաստանի տեխնոլոգիական ասոցիացիա՝ միավորելով տեխնոլոգիական ոլորտում գործունեություն իրականացնող ընկերություններին և հանդես գալով որպես ոլորտային համագործակցության հարթակ:

Թողարկողի հիմնադրման երկիր	Հայաստանի Հանրապետություն
----------------------------	---------------------------

Թողարկողի պետական գրանցման վայր	Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կենտրոն, Ոսկերիչների փողոց 1
Թողարկողի պետական գրանցման համար	211.171.1052474,
Թողարկողի պետական գրանցման ամսաթիվ	09.01.2019

4.4.1.2. Ստեղծման փաստացի գործունեություն տվյալներ

Երաշխավորը ստեղծվել է և գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետությունում՝ որպես հասարակական կազմակերպություն: ԱՏՁՄ-ի գործունեության առանցքային նպատակը Հայաստանի տեխնոլոգիական էկոհամակարգի զարգացումն ու երկրի գիտատեխնիկական արդիականացմանն աջակցելն է՝ ոլորտային նախաձեռնությունների, ծրագրերի և համագործակցային ձևաչափերի միջոցով:

4.4.1.3. Գտնվելու վայրը և կապի միջոցները.

Գտնվելու վայրն է	Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կենտրոն, Ոսկերիչների փողոց 1,
Կապի միջոցներ	Հեռ՝ (+37455) 110 607 Էլ.-փոստ՝ info@uate.org Կայք՝ https://uate.org/

4.4.1.4. Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում իրականացվել են մի շարք էական ներդրումներ, որոնք ուղղված են եղել ինչպես ենթակառուցվածքների ամրապնդմանը, այնպես էլ կազմակերպության գործունեության ընդլայնմանը և նոր ուղղությունների զարգացմանը, մասնավորապես՝ իրականացվել է «Իննիջևան» հանգույցի և «Իրական Դպրոց» Իջևանի մասնաճյուղի հիմնումը, որի շրջանակում կատարվել է շուրջ 700,000 ԱՄՆ դոլարի ներդրում:

2024թ. -ին ձևավորվել է քաղաքականություն մշակող բաժին, որի նպատակը ՏՏ ոլորտում քաղաքականության մշակումն ու պետական մակարդակով դրա առաջնորդումն է, ինչը կարող է նպաստել ոլորտային նախաձեռնությունների համակարգմանը և շահերի ներկայացվածության բարձրացմանը:

Բացի այդ ընդլայնվել է «Դիջիթեք»-ի կոնցեպտը՝ ֆեստիվալ և կոնֆերանս ձևաչափերի ավելացմամբ, ինչը նպաստել է կոնֆերանսի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը և մասնակցության աճին, որի արդյունքները տեսանելի են նաև հիմնական ցուցանիշներում: 2023թ.-ին «Դիջիթեք»-ին մասնակցել է 120 ընկերություն և արձանագրվել է շուրջ 15,000 այցելու, 2024թ.-ին մասնակցել է 180 ընկերություն և այցելուների թիվը կազմել է շուրջ 22,000, իսկ 2025թ.-ին մասնակցել է 200 ընկերություն և այցելուների թիվը հասել է շուրջ 30,000-ի:

4.5 Բիզնեսի նկարագիրը

4.5.1 Հիմնական գործունեությունը

«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպությունը հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն, որի գործունեությունը նպատակաուղղված է հանրային և ոլորտային շահերի սպասարկմանը: ԱՏՁՄ-ն առևտրային (շահույթ հետապնդող) գործունեություն չի իրականացնում և վերջինիս հիմնական գործունեությունը ուղղված է ծրագրերի նախաձեռնմանը, համակարգմանը, իրականացմանը և համադրմանը (curation)՝ Հայաստանի տեխնոլոգիական էկոհամակարգի զարգացման նպատակով:

ԱՏՁՄ-ի կողմից իրականացվող ծրագրերը և նախաձեռնությունները հիմնականում կրում են հանրային-մասնավոր համագործակցության, կրթական, էկոհամակարգային զարգացման, ինչպես նաև քաղաքականությունների մշակման և շահերի պաշտպանության բնույթ և իրականացվում են պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, դոնորների, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և այլ գործընկերների հետ համագործակցությամբ: Սույն բաժնում ներկայացված ծրագրերը չեն հանդիսանում առևտրային ծառայությունների մատուցում և ուղղված չեն եկամուտ ստանալուն, այլ արտացոլում են ԱՏՁՄ-ի ծրագրային և համակարգող գործունեությունը:

Գործարար էկոհամակարգի զարգացում

Քաղաքականությունների մշակում և շահերի պաշտպանություն

2022–2025 թվականներին ԱՏՁՄ-ն շարունակել է մասնակցել պետական քաղաքականությունների մշակման և բարելավման գործընթացներին՝ ներկայացնելով տեխնոլոգիական համայնքի դիրքորոշումները ինչպես պետություն-մասնավոր փոխգործակցությունն ապահովող մասնագիտացված հարթակների, այնպես էլ պատասխանատու մարմինների հետ ուղղակի և անմիջական աշխատանքի շրջանակում:

Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ԱՏՁՄ կառուցվածքում գործարկվել է Քաղաքականությունների մշակման և շահերի պաշտպանության դեպարտամենտ, որը շարունակական աշխատանք է իրականացրել ՀՀ Կառավարության, ՀՀ Ազգային ժողովի, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների,

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Էկոնոմիկայի նախարարությունների, Պետական եկամուտների կոմիտեի, Ռազմարդյունաբերության կոմիտեի և ոլորտին առնչվող այլ գերատեսչությունների հետ:

Դեպարտամենտը ակտիվորեն մասնակցել է ՀՀ վարչապետին, փոխվարչապետին և նախարարներին կից գործող խորհրդակցական մարմինների աշխատանքներին: Հաշվետու շրջանում ներգրավվածություն է ապահովվել տեխնոլոգիական ընկերությունների համար պետական աջակցության ծրագրերի, կիբերանվտանգության, կրիպտոակտիվների, բարձրագույն կրթության և գիտության, ինչպես նաև աշխատանքային և հարկային օրենսդրության և այլ կարգավորումների մշակմանն ու բարելավմանը:

«ԱՏՁՄ կարողությունների զարգացում՝ նախաձեռնողական և արդյունավետ շահերի պաշտպանության ռազմավարություն մշակելու համար» ծրագիր

2025 թվականից ԱՏՁՄ-ն Ռազմավարական զարգացման գործակալության հետ համատեղ՝ Reconomy ծրագրի շրջանակում, գործարկել է «ԱՏՁՄ կարողությունների զարգացում՝ ավելի նախաձեռնողական և արդյունավետ շահերի պաշտպանության ռազմավարություն մշակելու համար» ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել քաղաքականության այնպիսի փոփոխությունների նախաձեռնմանն ու խթանմանը, որոնք նպաստում են ՏՏ ծառայություններ մատուցող ընկերությունների համար առավել բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմանը:

ICT Leaders Meeting / «Առանց փողկապների հանդիպում»

2023 թվականին ԱՏՁՄ-ն GIZ-ի հետ համագործակցությամբ իրականացրել է պետություն-մասնավոր փոխգործակցության ծրագրերի, ինչպես նաև բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված պետական քաղաքականությունների գույքագրում և վերլուծություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով պետական գնումների համակարգում առկա խնդիրներին և դրանց լուծման հնարավոր մեխանիզմներին:

Կրթության և աշխատուժի զարգացում

«Արմաթ» ճարտարագիտական կրթության ազգային ծրագիր

2022–2025 թվականներին ԱՏՁՄ-ն շարունակել է իրականացնել և զարգացնել «Արմաթը»՝ ճարտարագիտական կրթության հայկական ազգային ծրագիրը: Ծրագիրն այսօր հասանելի է ՀՀ յուրաքանչյուր երկրորդ դպրոցում, ներառում է ավելի քան 630 ճարտարագիտական աշխատանոց, որտեղ շուրջ 17,000 դպրոցական ստանում է առաջնային տեխնոլոգիական կրթություն: «Արմաթ»-ն ունի շուրջ 9,000 շրջանավարտ, որոնցից 51%-ը շարունակում է կրթությունը ԲՈՒՀ-երի տեխնոլոգիական ֆակուլտետներում: Ծրագիրն իրականացվում է ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ և հանդիսանում է պետություն-մասնավոր համագործակցության խոշոր նախաձեռնություններից մեկը Հայաստանում:

«Իննոհիջևան» հանգույց

«Իննոհիջևան հանգույցը» ԱՏՁՄ-ի կողմից իրականացված և ներկայում շարունակվող նախաձեռնություն է, որը գործարկվել է Իջևանի համայնքապետարանի և COWO

կազմակերպության հետ համատեղ՝ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի նպատակն է Իջևանի տարածաշրջանի տնտեսական զարգացման խթանումը՝ հանրային-մասնավոր փոխգործակցության ընդլայնման և տեղական նորարարական էկոհամակարգի ձևավորման միջոցով:

Հանգույցի շրջանակում իրականացվում են՝

- «Իրական դպրոց» ՄԿՈՒ-ի և բարձր տեխնոլոգիական աշխատանոցների համար ենթակառուցվածքների ձևավորում,
- մասնագիտական միջոցառումների կազմակերպում և ներվորքինգի հնարավորությունների ընդլայնում,
- բիզնես ինկուբատորի և արքեթերատորի զարգացում,
- քո-վորքինգային ենթակառուցվածքի ստեղծում տեղական ֆրիլանսերների և տեխնոլոգիական թիմերի համար:

ArmRobotics, DigiCode և Armath TechnoCamp

2022–2025 թվականներին ԱՏՁՄ-ն շարունակել է իրականացնել և զարգացնել ArmRobotics ոռքոտաշինական առաջնությունը, DigiCode կիրառական ծրագրավորման առաջնությունը, ինչպես նաև «Արմաթ Տեխնոճամբար» ամառային տեխնոլոգիական ճամբարը՝ ուղղված դպրոցականների տեխնոլոգիական կարողությունների զարգացմանը:

ATF, Armenian Technological Future

2022–2023 թվականներին ԱՏՁՄ-ն իրականացրել է «Հայկական տեխնոլոգիական ապագա» (ATF) նախաձեռնությունը՝ համագործակցելով Երևանի պետական համալսարանի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Ռուս-հայկական համալսարանի և Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ: Նախաձեռնությունը կենտրոնացած է եղել արհեստական բանականության, առաջնորդության զարգացման, STEM կրթության և նորարարական գործընթացների ուղղություններով:

TechWeek

2025 թվականից ԱՏՁՄ-ն հանդիսանում է TechWeek միջոցառման համակազմակերպիչ: TechWeek-ը իրականացվում է որպես Երևանից դուրս անցկացվող եռօրյա տեխնոլոգիական միջոցառում՝ ներառելով կոնֆերանս, հեքթեթոններ, փիթչինգ սեսիաներ, ցուցահանդեսային և մշակութային ծրագրեր:

Միջազգային շուկաների զարգացում

2022–2025 թվականների ընթացքում ԱՏՁՄ-ն աջակցել է տեխնոլոգիական համայնքի ընկերությունների միջազգային ներգրավվածությանը՝ կազմակերպելով մասնակցություն արտասահմանյան մասնագիտացված ցուցահանդեսների, ֆորումների և ճանաչողական

այցերի (օր.՝ VivaTech, Japan IT Week և այլն): ԱՏՁՄ-ն նաև ընդունել է արտասահմանյան բիզնես պատվիրակություններ՝ նպաստելով միջազգային համագործակցության ընդլայնմանը:

Այս շրջանակում շարունակվել է նաև DigiTec միջոցառման իրականացումը, ինչպես նաև 2024 թվականին նախաձեռնվել և անցկացվել է WCIT՝ Նորարարության և տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսը Երևանում:

Տեխնոլոգիաների կիրառում

2025 թվականին ԱՏՁՄ-ն Ռազմավարական զարգացման գործակալության հետ համատեղ՝ Reconomy ծրագրի շրջանակում, մեկնարկել է «Թվայնացվող ոլորտներ՝ մրցունակության համար» նախագիծը, որը կենտրոնացած է Հայաստանի զբոսաշրջության ոլորտի ՓՄՁ-ների թվային փոխակերպման վրա: Ծրագրի շրջանակում իրականացվել է ոլորտային կարիքների գնահատում, թվային լուծումների պահանջարկի բացահայտում և համապատասխան լուծումների հարմարեցում, ներառյալ 372 հարցման իրականացում:

4.5.2 Հիմնական շուկաները և մրցակցային դիրքը

ԱՏՁՄ-ի և դրա փոխկապակցված կառույցների կողմից իրականացվող ծառայությունների և ծրագրերի հիմնական թիրախային շուկան հանդիսանում է **Հայաստանի տեխնոլոգիական էկոհամակարգը**: Այն ներառում է հայկական տեխնոլոգիական ընկերությունները, օտարերկրյա և միջազգային ընկերությունների Հայաստանի Հանրապետությունում գործող մասնաճյուղերը, ինչպես նաև այսպես կոչված «տեխնոլոգիական սփյուռքը»՝ հայկական ծագմամբ օտարերկրյա ընկերությունները և արտասահմանում հայերի կողմից հիմնված տեխնոլոգիական կազմակերպությունները:

Բացի նշվածից, ԱՏՁՄ-ի գործունեության շրջանակում ընդգրկվում են նաև տվյալ ընկերությունների մատակարարներն ու կապալառուները՝ տեխնոլոգիական և հարակից ոլորտներից:

Միևնույն ժամանակ, ԱՏՁՄ-ի գործունեությունը չի սահմանափակվում միայն տեխնոլոգիական էկոհամակարգով: Վերջին շրջանում ձեռնարկվում են քայլեր՝ գործունեության շրջանակը Հայաստանի տնտեսության այլ ճյուղեր ընդլայնելու ուղղությամբ, հատկապես այն ոլորտներում, որտեղ տեխնոլոգիական լուծումների կիրառումը կարող է էական դեր ունենալ արդյունավետության և մրցունակության բարձրացման գործում:

ԱՏՁՄ-ի մրցակցային հիմնական առավելությունը Հայաստանի տեխնոլոգիական էկոհամակարգի վերաբերյալ տարիների ընթացքում ձևավորված **խորը և համակարգային փորձառությունն** է: Կառույցը ոչ միայն տիրապետում է ոլորտի խնդիրներին և զարգացումներին, այլև հանդիսանում է տեխնոլոգիական էկոհամակարգի ձևավորման և զարգացման գործընթացների անմիջական մասնակից և համակարգաստեղծ դերակատար:

Տեխնոլոգիական ոլորտի զարգացումը ԱՏՁՄ-ի կանոնադրական նպատակներից է, և Հայաստանի տեխնոլոգիական միջավայրի ներկայիս պատկերը մեծապես ձևավորվել է կառույցի երկարամյա գործունեության արդյունքում: Այս հանգամանքը ԱՏՁՄ-ին ապահովում է առանձնահատուկ դիրք տեխնոլոգիական համայնքին խորհրդատվական, շահերի պաշտպանության, միջոցառումների կազմակերպման և հաղորդակցական ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների համեմատ:

Փորձագիտական խորհրդատվության, շահերի պաշտպանության և քաղաքականությունների ձևավորման ոլորտներում ԱՏՁՄ-ն տարիների ընթացքում ակտիվ մասնակցություն է ունեցել տեխնոլոգիական ոլորտի գործունեությունը կարգավորող պետական բազմաթիվ իրավական ակտերի մշակման և բարելավման գործընթացներին: Մի շարք դեպքերում ԱՏՁՄ-ն հանդես է եկել նախաձեռնողի դերում՝ նպաստելով ոլորտի համար առավել արդյունավետ և հավասարակշռված կարգավորումների ձևավորմանը:

Միջոցառումների կազմակերպման ուղղությամբ ԱՏՁՄ-ն արդեն շուրջ երկու տասնամյակ իրականացնում է Հայաստանի խոշորագույն տեխնոլոգիական իրադարձությունը՝ **Դիջիթեքը**, որը առանձնանում է մասնակից ընկերությունների, այցելուների և միջազգային ճանաչում ունեցող բանախոսների լայն ներգրավվածությամբ: Բացի այդ, ԱՏՁՄ-ն տարբեր տարիներին հանդես է եկել նաև միջազգային նշանակության խոշոր միջոցառումների, այդ թվում՝ **Նորարարության և տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսի (WCIT)** կազմակերպչի դերում: Տարիների ընթացքում ԱՏՁՄ-ի կազմակերպած միջոցառումներին մասնակցել են հարյուր հազարավոր անձինք՝ սկսած պետական և բիզնես ղեկավարներից մինչև դպրոցականներ և ուսանողներ:

Հաղորդակցության ոլորտում ԱՏՁՄ-ն տարիների ընթացքում ձևավորել է ամուր և վստահելի կապեր տեղական և միջազգային լրատվամիջոցների հետ, ինչի արդյունքում կառույցի նախաձեռնությունները լայնորեն լուսաբանվում են տեղեկատվական դաշտում: Բացի այդ, ԱՏՁՄ-ն ստեղծել և զարգացնում է սեփական մեդիա հարթակներ՝ ներառյալ շաբաթական տեղեկագիր, ռադիոհաղորդումներ, փողքաստ և պաշտոնական էջեր սոցիալական ցանցերում:

Տեղեկատվական և հաղորդակցական այս կարողությունները, համապատասխան ձևաչափերով, ԱՏՁՄ-ն առաջարկում է նաև որպես ծառայություն՝ տեխնոլոգիական էկոհամակարգի մասնակիցների և գործընկեր կառույցների համար:

4.6 Երաշխավորի կառուցվածքը

Երաշխավորը հանդիսանում է Թողարկողի միակ մասնակիցը և օրենքով սահմանված կարգով իրականացնում է մասնակցի բոլոր իրավունքներն ու լիազորությունները:

Միննույն ժամանակ, Երաշխավորը հանդիսանում է «ԻՏՁՄ ԱՐԴԻ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցման համար՝ 264.110.995494, ՀՎՀՀ՝ 00173852) միակ մասնակիցը և «Իրական Դպրոց» կրթամշակութային հիմնադրամի (գրանցման համար՝ 222.160.930201, ՀՎՀՀ՝ 00901108) համահիմնադիրներից մեկը, իսկ հիմնադրամի մյուս համահիմնադիրը հանդիսանում է ««Ինստիտյուտ» ուսումնական կենտրոն» հիմնադրամը (գրանցման համար՝ 222.160.01344, ՀՎՀՀ՝ 01009356):

Երաշխավորի խմբի կառուցվածքը ձևավորվում է ոչ առևտրային կազմակերպության շուրջ և ներառում է ինչպես կրթական ու հանրային ուղղվածության հիմնադրամներ, այնպես էլ առանձին առևտրային կազմակերպություններ: Խմբի ներսում գոյություն ունեցող մասնակցային և հիմնադիր կապերը, ինքնին, չեն ենթադրում խմբի անդամների միջև ֆինանսական կամ պայմանագրային պարտավորությունների ավտոմատ փոխանցում, եթե նման փոխանցում հստակորեն նախատեսված չէ համապատասխան պայմանագրերով կամ կիրառելի օրենսդրությամբ:

4.7 Երաշխավորի հիմնական միջոցները

Երաշխավորի էական հիմնական միջոցների նկարագիր

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց հաշվեկշռային արժեքների համագումարը չի գերազանցում Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի **10 տոկոսը**:

2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է **5,464 հազ. ՀՀ դրամ** և ամբողջությամբ ներկայացված է արտադրական և տնտեսական նշանակության գույքով ու գործիքներով:

Կազմակերպության հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ առկա չեն: Նշված ակտիվները գրավադրված չեն և դրանց նկատմամբ երրորդ անձանց իրավունքներ չեն սահմանված:

4.8 Զարգացման վերջին միտումները

«ԱՏՁՄ» խմբի հասույթը հաշվետու ժամանակահատվածներում ունեցել է դրական դինամակա՝ 2023թ-ին այն կազմել է 1,741,854 հազ ՀՀ դրամ, 2024թ-ին՝ 1,805,486 հազ. ՀՀ դրամ, իսկ 2025թ-ին, ըստ նախնական տվյալների, կազմելու է 1,680,000 հազ. ՀՀ դրամ: Հասույթի դինամիկային վրա էական ազդեցություն է ունեցել 2024թ.-ին իրականացված WCIT համաժողովը:

Խմբի ծախսերի մեջ էական մեծություն են կազմում աշխատավարձային ծախսերը և միջոցառումների կազմակերպման հետ կապված ծախսերը, որոնց մանրամասները ներկայացված են ընկերության աուդիտորական հաշվետվությունում:

Հարկ է նշել, որ ընկերությունների խումբը բոլոր հաշվետու ժամանակահատվածներում ունեցել է վնաս 2025թ.-ի առաջին եռամսյակում՝ -132,296 հազ. ՀՀ դրամ, 2024թ.-ին՝ -102,946 հազ. ՀՀ դրամ, իսկ 2023թ.ին՝ -144,253 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության գործունեության ցուցանիշների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար պոտենցիալ ներդրողները կարող են ծանոթանալ Կազմակերպության տարեկան և կիսամյակային հաշվետվություններին:

4.9 Երաշխավորի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

4.9.1 Կառավարման մարմինների կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները.

«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի կառավարման և վերահսկողության կառուցվածքը ներառում է հետևյալ մարմիններն ու պաշտոնատար անձանց՝

Բարձրագույն ղեկավար մարմինը	Համաժողովը
Բարձրագույն պաշտոնատար անձը	Նախագահ
Մշտական գործող ղեկավար և ներկայացուցչական մարմինը	Վարչությունը
Գործադիր մարմնի ղեկավարը	Միության գործադիր տնօրենը
Վերահսկող մարմինը	Միության վերստուգողը

4.9.2 Համաժողովը Համաժողովի իրավասությունները

Կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմինը հանդիսանում է **Կազմակերպության Համաժողովը**, որը լիազորված է կայացնելու Կազմակերպության գործունեության հետ կապված բոլոր հիմնարար և ռազմավարական հարցերի վերջնական որոշումները:

Հերթական Համաժողովը գումարվում է տարեկան մեկ անգամ՝ **Կազմակերպության Վարչության** կողմից: Համաժողովի գումարման օրը, վայրը և օրակարգը Կազմակերպության անդամներին հայտարարվում են նախապես՝ ոչ ուշ, քան Համաժողովի գումարման օրվանից 14 օր առաջ:

Արտահերթ Համաժողով կարող է գումարվել Վարչության կամ **Կազմակերպության Նախագահի** նախաձեռնությամբ, ինչպես նաև գործադիր տնօրենի, վերստուգողի կամ Կազմակերպության լիիրավ անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով: Արտահերթ Համաժողովի գումարման մասին անդամները ծանուցվում են ոչ ուշ, քան դրա անցկացման օրվանից 5 օր առաջ:

Համաժողովը իրավազոր է, եթե ներկա են Կազմակերպության լիիրավ անդամների կեսից ավելին: Որոշումները, որպես կանոն, ընդունվում են ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշումները՝ ներկա անդամների առնվազն երկու երրորդի ձայներով:

Համաժողովի բացառիկ իրավասությանը, ի թիվս այլոց, պատկանում են՝

- Կազմակերպության կանոնադրության ընդունումը և փոփոխումը,
- Կազմակերպության ռազմավարության հաստատումը,
- Կազմակերպության Վարչության անդամների թվի և կառուցվածքի հաստատումը,
- Համաժողովի քարտուղարի ընտրությունը,
- Կազմակերպության Նախագահի, Վարչության անդամների և վերստուգողի ընտրությունը և լիազորությունների դադարեցումը,
- վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումների ընդունումը,
- այլ իրավաբանական անձ ստեղծելու կամ այլ կազմակերպություններին մասնակցելու վերաբերյալ որոշումների կայացումը:

Համաժողովի նիստերը արձանագրվում են և ստորագրվում նիստը նախագահողի և քարտուղարի կողմից:

4.9.3 Կազմակերպության Նախագահը

Կազմակերպության Նախագահը հանդիսանում է Կազմակերպության բարձրագույն պաշտոնատար անձը: Նա ընտրվում է Համաժողովի կողմից մեկ տարի ժամկետով՝ փակ գաղտնի քվեարկությամբ և միաժամանակ հանդիսանում է Կազմակերպության Վարչության անդամ:

Նախագահը նախագահում է Համաժողովի և Վարչության նիստերը, ներկայացնում է Կազմակերպությունը պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև միջազգային հարաբերություններում՝ առանց լիազորագրի:

Կազմակերպության Նախագահը հաշվետու է Համաժողովին և Վարչությանը, իսկ նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը լուծվում է Համաժողովի կողմից:

4.9.4 Կազմակերպության Վարչությունը

Կազմակերպության Վարչությունը հանդիսանում է Կազմակերպության մշտական գործող ղեկավար և ներկայացուցչական մարմինը: Վարչությունն ընտրվում է Համաժողովի կողմից մեկ տարի ժամկետով և գործում է նիստերի միջոցով:

Վարչությունը որոշում է Կազմակերպության ընթացիկ գործունեության հիմնական ուղղությունները, հաստատում է ծրագրերը, ընդունում է անդամակցության հետ կապված որոշումներ, սահմանում է անդամավճարների չափն ու վճարման կարգը, ինչպես նաև հաստատում է Համաժողովների գումարման օրերը, վայրերը և օրակարգերը:

Վարչության նիստերը իրավազոր են, եթե ներկա են անդամների առնվազն կեսը: Որոշումները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Վարչությունը նաև լիազորված է ստեղծելու Կազմակերպության մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

4.9.5 Կազմակերպության գործադիր տնօրենը

Կազմակերպության գործադիր տնօրենը հանդիսանում է Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը և իրականացնում է Կազմակերպության գործունեության ընթացիկ կառավարումը: Նա նշանակվում է Կազմակերպության Վարչության կողմից:

Գործադիր տնօրենը ապահովում է Համաժողովի և Վարչության որոշումների կատարումը, տնօրինում է Կազմակերպության գույքը և դրամական միջոցները հաստատված բյուջեի շրջանակում, ներկայացնում է Կազմակերպությունը առանց լիազորագրի, կնքում է պայմանագրեր, բացում և փակում է բանկային հաշիվներ, ձևավորում է աշխատակազմը և հաստատում ներքին կանոնակարգերը:

Գործադիր տնօրենը հաշվետու է Կազմակերպության Վարչությանը և Կազմակերպության Նախագահին:

4.9.6 Կազմակերպության Վերստուգողը

Կազմակերպության Վերստուգողը հանդիսանում է Կազմակերպության գլխավոր վերահսկողական մարմինը: Նա ընտրվում է Համաժողովի կողմից մեկ տարի ժամկետով:

Վերստուգողը իրականացնում է Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումներ, իրավունք ունի ծանոթանալու Կազմակերպության

գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին և ներկայացնելու պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ:

Վերստուգողը իր եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացնում է Կազմակերպության Նախագահին, Կազմակերպության Վարչությանը և Համաժողովին և գործում է անկախ կարգով: Կազմակերպության վերստուգողն է հանդիսանում Ռեմ Դարբինյանը:

4.9.7 Երաշխավորի կառավարման մարմինների անդամները

Կազմակերպության Համաժողովի կազմը ներկայացված է Հավելված 6-ում

Երաշխավորի կառավարման մյուս մարմինների կազմին և վերջիններիս՝ այլ ընկերությունների հետ փոխկապակցվածության վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ՝ հետևելով սույն հղմանը <https://uate.org/blog-2/>:

3.13.1 Շահերի բախումը

Երաշխավորի մոտ բացակայում է որևէ տեղեկատվություն, որը թույլ կտար եզրակացնել Երաշխավորի և Երաշխավորի կառավարմանը մասնակցող անձանց շահերի բախման վերաբերյալ: Կառավարմանը մասնացող որևէ անձ չի հայտնել շահերի բախման մասին տեղեկատվություն:

3.13.2 Կորպորատիվ կառավարման սկզբունքները

Թողարկողը հետևում է իր կազմակերպարավական կառուցվածքին համապատասխանող կորպորատիվ կառավարման սկզբունքներին, մասնավորապես՝ ապահովում է արդյունավետ կառավարման միջավայր, իր անդամների իրավունքների իրականացումը և հավասար վերաբերմունք վերջիններիս նկատմամբ:

Ընկերության կառավարման համակարգը մշակված է ՀՀ օրենսդրության շրջանակում և բավարարում է ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին:

3.14 Հսկող անձիք

Բացակայում են այնպիսի անձինք, ում/որոնց կարելի է որակել որպես հսկող անձ ՀՀ

կիրառելի օրենսդրությամբ դրան վերագրված իմաստով

3.15 Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ

3.10.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Կազմակերպության 2023-2024թթ. աուդիտորական եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են [հավելված 5](#)-ում:

3.10.2 Ֆինանսական վիճակի էական փոփոխությունների նկարագրությունը

2025թ.-ի առաջին եռամսյակի արդյունքներով «ԱՏՁՄ» խումբը ունեցել է շուրջ 132 մլն ՀՀ դրամ վնաս, ինչը ակնկալվում էր ծածկել Դիջիթեք ցուցահանդեսից ստացվող շահույթով, սակայն 2025թ-ին Դիջիթեք ցուցահանդեսը չի ունեցել բարձր շահութաբերություն, քանի որ ներդրված ծախսերի մի մասը ուղղված է եղել երկու նոր պրոդուկտներ ստեղծելուն՝ կոնֆերանս և ֆեստիվալ, ինչն էլ կնպաստի հետագա տարիների ավելի մեծ եկամուտներ բերելուն:

3.16 Մասնագիտական կարծիք

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք

Բաժին 5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (իրավաբանական անձանց համար)

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ թողարկված դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև

(իրավաբանական անձանց համար)

- Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, ժամ, րոպե)
- Իրավաբանական անձի անվանումը _____
(Ֆիրմային անվանումը, կազմակերպարավական ձև)
- Պետոեզիստրի գրանցման տվյալները _____
(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)
- Գրանցման վայրի հասցեն _____
- ՀՎՀՀ _____
- Ռեզիդենտությունը _____

Պարտատոմսերի ձեռքբերման սույն հայտ-հանձնարարականով ցանկություն ենք հայտնում ձեռք բերել «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսեր հետևյալ/ներքոնշյալ պայմաններով՝

- Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)
- Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ _____
հատ քանակը թվերով (տասերով)
- Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով
- Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____
Ընդհանուր գումարը թվերով (տասերով)
- Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____
- Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի
անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսերի թողարկման որոշմանը և Ազդագրին, ինչպես նաև սույն հայտ-հանձնարարականի կից ներկայացված Տեղեկատվական Թերթիկին, համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստական ենք ստանձնել «ՆՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ թողարկված պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ թողարկված պարտատոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր
քանակ _____
քանակը թվերով (տառերով)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանուն)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները այդ նպատակով բացված հաշվեհամարին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փոխադրման օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (Ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ թողարկված դրամային արժեկտրոնային պարտատոմսերի
ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև
(Ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

Հայտ-հանձնարարականի ներկայացման
ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, ժամ, րոպե)

Հայտ-հանձնարարական ներկայացնողի
անվանումը _____
(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի
տվյալները _____
(փաստաթղթի համար)

Անձը հաստատող փաստաթղթի տրման
ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Գրանցման վայրի հասցեն _____

Ռեզիդենտությունը _____

Պարտատոմսերի ձեռքբերման սույն հայտ-հանձնարարականով ցանկություն ենք հայտնում
ձեռք բերել «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ կողմից թողարկված կորպորատիվ
պարտատոմսեր հետևյալ/ներքոնշյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ _____
հատ քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի
ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի
ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր
գումարը _____
Ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի
համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի
անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականով, ըստ էության, հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ ծանոթացել եմ պարտատոմսերի թողարկման որոշման և Ազդագրի, ինչպես նաև սույն հայտ-հանձնարարականի կից ներկայացված Տեղեկատվական Թերթիկի հետ, համաձայն եմ դրանցում նշված պայմաններին և պատրաստական եմ ստանձնել «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ թողարկված պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա իմ և «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ թողարկված պարտատոմսերի՝ իմ կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

_____ քանակը թվերով (տառերով)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

_____ (ստորագրող անձի անուն, ազգանուն)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները այդ նպատակով բացված հաշվեհամարին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30, ապա այդ դրամական միջոցները **մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:**

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ակտիվների շահութաբերություն (ROA) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ
Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)

Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը):

ՀԱՎԵԼՎԱԾ 4: ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2025թ.

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել Ծրագրային Ազդագիրը (գրանցված է--- -----20--թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ում ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փող. 26/1, Էրեբունի Պլազա, տարածք 812 հասցեում:

<p>Ընդհանուր տեղեկություններ</p> <p><i>(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»։ Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթերն են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված)։</i></p>		
1	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ
2	Երաշխավորողը	«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ
3	Սերիան (տվյալ Ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
4	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի	Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Ազդագրի 2.3.6 կետում

	<p>պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության</p>	
6	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
7	Առաջարկի գինը	<p>հաշվարկելու է հետևյալ կերպ՝</p> $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ <p>Որտեղ՝</p> $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>DP - Պարտատոմսի գինն է,</p> <p>DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,</p> <p>DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,</p> <p>f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4- եռամսյակային վճարումների համար),</p>

		<p>Անվանական արժեք</p> <p>N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,</p> <p>C - տարեկան արժեկտրոնը մեկ պարտատոմսի անվանական արժեքի դիմաց,</p> <p>γ - մինչև մարում եկամտաբերություն:</p> <p>Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում:</p>
8	Անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
9	Քանակը	Համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին:
10	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
11	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
12	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	

13	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
15	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
16	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

17	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
18	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
19	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
20	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21	Մարման ժամկետը	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
22	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
23	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	«ոչ կիրառելի»

24	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
	ժամկետ(ներ)ը	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	«ոչ կիրառելի»
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	«ոչ կիրառելի»
	Այլ տեղեկություններ	
25	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փուֆ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«ՍԻՐԻՈՒՍ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ Երևան 0010, Վ. Սարգսյան փող.26/1, Էրեբունի Պլազա, տարածք 812
27	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն Ազդագրում)	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Այլ տեղեկություններ		
28	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի
29	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրի թույլտվություն ստանալու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում (բացառությամբ անհատույց գործարքների): Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունը: Բորսայում պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվության հայտի մերժման դեպքում, տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:
30	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

	մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	
--	--	--

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են Ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

_____	_____	_____	_____
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
_____	_____	_____	_____
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
_____	_____	_____	_____
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ

Ստորագրությունները հավաստում են՝

_____	_____	_____	_____
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ

**ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկողի 2023թ և 2024թ Ֆինանսական հաշվետվությունները
և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները**

«Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միություն» Հասարակական կազմակերպություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
և Անկախ աուդիտորի եզրակացություն

31 դեկտեմբերի 2022թ.
31 դեկտեմբերի 2023թ.
31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Եկամտի և ծախսերի մասին համախմբված հաշվետվություն	9
Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	11
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միություն» Հասարակական կազմակերպության անդամներին

Վերապահումով Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միություն» Հասարակական կազմակերպության (Կազմակերպություն) և Նրա դուստր կազմակերպությունների (միասին՝ Խումբ, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամտի և ծախսերի մասին համախմբված հաշվետվություն, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են խմբի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և Նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

1. Մենք նշանակվել ենք «Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միություն» Հասարակական կազմակերպության աուդիտոր 2025թ. դեկտեմբերի 3-ին և այդ պատճառով ներկա չենք եղել Կազմակերպության պաշարների տարեվերջի գույքագրումներին, որոնք համապատասխանաբար ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում 31 դեկտեմբեր 2024թ.-ի դրությամբ՝ 19,487 հազար դրամի, 31 դեկտեմբեր 2023թ.-ի դրությամբ՝ 19,844 հազար դրամի և 1 հունվար 2023թ.-ի դրությամբ՝ 18,001 հազար դրամի չափով: Մենք հնարավորություն չենք ունեցել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 31 դեկտեմբեր 2024թ.-ի, 31 դեկտեմբեր 2023թ.-ի, 1 հունվար 2023թ.-ի դրությամբ պաշարների առկայության և արժևորման վերաբերյալ:
2. Ընկերությունը ունի ստացված փոխառություններ, որոնց մի մասը ժամկետանց է: Վերոնշյալ փոխառության պայմանագրերով սահմանված են տույժեր ժամկետանց օրերի համար: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը Նույնպես սահմանում է տույժեր ժամկետանց օրերի համար: Ընկերությունը չի հաշվեգրել ժամկետանց փոխառությունների գծով վճարման ենթակա հնարավոր փոխառության տույժերը: Այդ պատճառով մենք հնարավորություն չենք ունեցել աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 31 դեկտեմբեր 2024թ.-ի, 31 դեկտեմբեր 2023թ.-ի, 1

հունվար 2023թ.-ի դրությամբ վարկեր և փոխառություններ հոդվածում հաշվառվող համապատասխանաբար՝ 267,882 հազար դրամ, 237,697 հազար դրամ և 235,197 հազար դրամ փոխառության մնացորդների ճշգրտության վերաբերյալ:

3. Մենք հնարավորություն չենք ունեցել աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 31 դեկտեմբեր 2024թ.-ի, 31 դեկտեմբեր 2023թ.-ի, 1 հունվար 2023թ.-ի Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր հոդվածում հաշվառվող համապատասխանաբար 176,861 հազար դրամ, 86,359 հազար դրամ և 139,463 հազար դրամ կրեդիտորական պարտքեր ստացված ապրանքների և ծառայությունների գծով գումարների ամբողջականության վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Մենք հաստատում ենք որ աուդիտորական աշխատանքների ընթացքում մենք աուդիտի ենք եկթարկել 2024թ.-ին համեմատական ներկայացված 2023 թվականի դեկտեմբերի 31-ին, 1 հունվար 2023թ.-ին ավարտված տարիների համապատասխան հաշվետվությունները ևս:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ

ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա

դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ռոբերտ Մելիքյան, ACCA

Տնօրեն

Ղեկավար գործընկեր՝



25 դեկտեմբեր 2025թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ և ոչ կյութական ակտիվներ	4	1,928	4,325	7,460
Երկարաժամկետ փոխառություններ	5	185,187	154,744	195,133
		187,115	159,069	202,593
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ		19,487	19,844	18,001
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	38,510	27,308	43,565
Կարճաժամկետ փոխառություններ		5,000	5,835	835
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	81,254	27,166	66,261
		144,251	80,153	128,662
Ընդամենը ակտիվներ		331,366	239,222	331,255
Չուտ ակտիվներ և արտավորություններ				
Կուտակված արդյունք		(434,899)	(334,577)	(188,171)
		(434,899)	(334,577)	(188,171)



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Պարտավորություններ				
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	9	33,000	-	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	352	366	652
Եկամուտներին վերաբերող շնորհներ	8	108,516	500	-
		<u>141,868</u>	<u>866</u>	<u>652</u>
Ընթացիկ պարտավորություններ				
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	9	284,882	287,697	235,197
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	339,515	285,236	283,577
		<u>624,397</u>	<u>572,933</u>	<u>518,774</u>
		<u>766,265</u>	<u>573,799</u>	<u>519,426</u>
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		<u>331,366</u>	<u>239,222</u>	<u>331,255</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 25 դեկտեմբերի 2025թ. -ին

Գործադիր տնօրեն՝



Սարգիս Կարապետյան

Գլխավոր հաշվապահ՝



Դրոսես Կարոյան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 13-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Եկամտի և ծախսերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ.	2022թ.
Եկամուտներ	12	1,805,486	1,741,854	1,261,701
		1,805,486	1,741,854	1,261,701
Ծրագրերի գծով ծախսեր	13	(1,588,018)	(1,589,890)	(1,110,385)
Վարչական և այլ ծախսեր	14	(350,748)	(253,987)	(254,819)
Գործառնական գործունեությունից վնաս		(133,280)	(102,023)	(103,503)
Ֆինանսական եկամուտ/(ծախս)	15	20,212	(50,248)	4
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		12,746	5,865	(2,331)
Վնաս մինչև հարկերը		(100,322)	(146,406)	(105,830)
Շահութահարկի գծով ծախս		-	-	-
Տարվա արդյունք		(100,322)	(146,406)	(105,830)

Եկամտի և ծախսերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 13-ից 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	(188,171)	(188,171)
Տարվա վնաս	(146,406)	(146,406)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(146,406)	(146,406)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(334,577)	(334,577)
Տարվա վնաս	(100,322)	(100,322)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(100,322)	(100,322)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(434,899)	(434,899)

Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 13-ից 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ.	2022թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր				
Ստացված դրամաշնորհներ		1,098,585	992,250	1,142,263
Դրամական մուտքեր միջոցառումներից և համաժողովներից		746,103	655,062	51,860
Ստացված անդամավճարներ		123,467	72,668	64,799
Դրամական արտահոսքեր կատարված նվիրաբերություններից		-	(12,840)	(55,369)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ		(664,889)	(690,292)	(302,809)
Անձնակազմին վճարված դրամական միջոցներ		(1,272,047)	(1,108,164)	(977,153)
Վճարված տոկոսներ		(3,664)	(2,095)	-
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		27,555	(93,411)	(76,409)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր				
Հիմնական միջոցների և ոչ կյուրաբան ակտիվների ձեռքբերում		(449)	(1,307)	(5,012)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(449)	(1,307)	(5,012)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր				
Վարկերի Ստացում		-	50,000	-
Փոխառությունների ստացում		28,064	4,565	12,000
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		28,064	54,565	12,000

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Չափար դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ.	2022թ.
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ / (սվազում)		55,170	(40,153)	(69,421)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		(1,082)	1,058	(23,965)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		27,166	66,261	159,647
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	7,23	81,254	27,166	66,261

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 13-ից 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Կազմակերպության գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միություն» Հասարակական կազմակերպությունը ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չիետապնդող կազմակերպություն է: Միության անդամները տեղեկատվական ու հեռահաղորդակցական տեխնոլոգիաների և Բարձր տեխնոլոգիաների (հետագայում՝ ՏՀՏ և ԲՏ), կրթական ոլորտում և հարակից ոլորտներում գործող իրավաբանական անձինք են, որոնք Հայաստանի Հանրապետությունում ՏՀՏ և ԲՏ ոլորտը առաջանցիկ տեմպերով զարգացնելու, Միության անդամների ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու, զարգացմանն օժանդակելու նպատակներով ստեղծել են «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» Հասարակական կազմակերպություն:

Միությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենսդրությանը, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սույն Կանոնադրությամբ ամրագրված սկզբունքներին համապատասխան:

Միության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ոսկերիչների փողոց, շենք 1:

Միության բարձրագույն ղեկավար մարմինը Միության Համաժողովն է, բարձրագույն պաշտոնատար անձը՝ Միության Նախագահն է, մշտական գործող ղեկավար և ներկայացուցչական մարմինը՝ Միության Վարչությունն է, Միության գործադիր մարմինը՝ Միության գործադիր տնօրենն է:

Գործարար միջավայր

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը Էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա՝ հանգեցնելով հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Չնայած դժվարին մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը շարունակում է դրսևորել բավականին բարձր դիմադրողականություն շնորհիվ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար իրականացվող արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականությունների և համարժեք գործողությունների: Հայաստանի տնտեսությունը 2024թ.-ին շարունակել է աճել, թեպետ աճի դինամիկան համեմատաբար նվազել է:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Խմբի ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում

Է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն խմբի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ
- ՀՀՄՍ 18 ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում
- Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ
- Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ
- Փոփոխություններ ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 ստանդարտներում

2.6 Դուստր կազմակերպություններ

31 դեկտեմբերի 2024թ.

Դուստր կազմակերպություն	Մասնաբաժին %	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Յու Այ Թի Ի Էքսպո» ՍՊԸ	100%	06.06.2005թ.	Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում	06.06.2005թ.

31 դեկտեմբերի 2023թ.

Դուստր կազմակերպություն	Մասնաբաժին %	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Յու Այ Թի Ի Էքսպո» ՍՊԸ	100%	06.06.2005թ.	Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում	06.06.2005թ.

31 դեկտեմբերի 2022թ.

Դուստր կազմակերպություն	Մասնաբաժին %	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Յու Այ Թի Ի Էքսպո» ՍՊԸ	100%	06.06.2005թ.	Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում	06.06.2005թ.

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 ՀՀՄՍ-ների առաջին անգամ ընդունումը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համախմբված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) համաձայն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ-ներին անցման ազդեցությունը խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա էապես չի տարբերվում խմբի հաշվապահական հաշվառման ստանդարտներով պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվություններից:

3.2 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

3.3 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	2024թ.	2023թ.
ԱՄՆ դոլար	396.56	404.79
Եվրո	413.89	447.90
Ռուբլի	3.71	4.50

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը, բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի արդյունքում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն գուտ ակտիվներում:

Խմբի ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը:

3.4 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ, սարքավորումներ և տնտեսական գույք	1-3 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-5 տարի

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է Եկամտի և ծախսերի մասին հաշվետվությունում կիրառելով գծային մեթոդը՝ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային

իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում և շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 17.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները

բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունը աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ

վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիան ներառում է նաև ներդրումը սեփական կապիտալում: Խումբը հաշվառում է ներդրումը իրական արժեքով: Իրական արժեքը որոշվել է ՖՅՄՍ 9-ի պահանջներին համապատասխան, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՅՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՅՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՅՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են

պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, համաձայն որի Պահուստավորման սանդղակը հիմնվում է Խմբի պատմական կորստի դրույքաչափերի վրա՝ ճշգրտված ապագա սպասվող դեպքերով: Խումբը դեբիտորական պարտքերի արժեզրկումները ճանաչում է ներքնաշաղկապ դրույքներով, որոնք կարող են հետագայում փոխվել՝ դեբիտորական պարտքերի հետագա արժեզրկումների արդյունքում:

Դեբիտորական պարտքերի ժամկետայնության օրեր	պայմանագրային	Արժեզրկման տոկոս
Մինչև 90 օր		10%
91-180 օր		20%
181-270 օր		50%
271 և ավել		100%

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 17.2-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն

դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտ-
նի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք
ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի
ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են
համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված
վճարովի արձակուրդները,
- (գ) քաղաքացիաիրավական հիմունքներով վճարված եկամուտները

3.9 Շնորհներ և նվիրատվություններ

Դրամաշնորհների մի մասը ստացվում են որոշակի նպատակներով և նախատեսված
չեն Խմբի ընդհանուր օգտագործման համար: Այս դրամաշնորհները չեն ճանաչվում,
քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր
պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը,
կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին
հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն
փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար
ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն
ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան
ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհը, որը հատկացվում է Կազմակերպությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի
կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա
համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու
ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Դրամաշնորհների մի մասը հասանելի են ընդհանուր նպատակների համար, ինչպես
սահմանված է Խմբի կառավարման փաստաթղթերում: Սույն դրամաշնորհները
ճանաչվում են որպես հասույթ, երբ դառնում են ստացման ենթակա:

4 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	9,458	8,765	23,593	1,624	-	43,440
Սկեւացում	2,853	-	1,425	734	-	5,012
Օտարում	(3,502)	-	(8,894)	(508)	-	(12,904)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,809	8,765	16,124	1,850	-	35,548
Սկեւացում	984	-	-	38	235	1,257
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,793	8,765	16,124	1,888	235	36,805
Սկեւացում	-	-	-	419	30	449
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,793	8,765	16,124	2,307	265	37,254
Կուտակված մաշվածություն						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	8,543	8,765	18,087	1,020	-	36,415
Տարվա հաշվարկ	1,499	-	2,350	348	-	4,197
Օտարման հետևանքով դուրսագրում	(3,502)	-	(8,545)	(477)	-	(12,524)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,540	8,765	11,892	891	-	28,088
Տարվա հաշվարկ	2,311	-	1,846	235	-	4,392
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,851	8,765	13,738	1,126	-	32,480
Տարվա հաշվարկ	594	-	1,983	269	-	2,846
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,445	8,765	15,721	1,395	-	35,326
Հաշվեկշռային արժեք						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	2,269	-	4,232	959	-	7,460
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	942	-	2,386	762	235	4,325

*Առաջատար Տեխնոլոգիաների Չափանիշային Կրիտերիումները Հասարակական Լազրակերպություն
 Համախմբված Ֆինանսական Հաշվետվություններ
 31 դեկտեմբերի 2024թ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	348	-	403	912	265	1,928

Արժույթությամբ մաշված ակտիվներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված արժույթությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 24,221 հազար դրամ (2023թ. 21,419 հազար դրամ, 2022թ. 21,182 հազար դրամ):

5 Երկարաժամկետ փոխառություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Տրված փոխառություններ կապակցված կողմերին	185,187	154,744	195,133
	185,187	154,744	195,133

Կապակցված կողմերին տրված փոխառությունները անտոկոս են և ունեն 1.5 տարի մարման ժամկետ (2023թ.՝ անտոկոս և 2.5 տարի մարման ժամկետ, 2022թ.՝ անտոկոս և 3.5 տարի մարման ժամկետ): Տրված փոխառությունների ամորտիզացված արժեքը բերվել է իրական արժեքի: Չեղջման դրույքը կիրառվել է՝ օգտագործելով շուկայում գործող նմանատիպ պրոդուկտի տոկոսադրույքը, ԱՄՆ դոլարի համար 7.93%, միջինը 2 տարի ժամկետով:

Տե՛ս ծանոթագրություն 18(ա)՝ Երկարաժամկետ փոխառություններ արժույթների բացահայտման համար:

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Դեբիտորական պարտքեր անդամավճարներից	27,138	21,608	22,900
Դեբիտորական պարտքեր միջոցառումների և համաժողովների գծով	2,452	1,726	7,091
Այլ դեբիտորական պարտքեր	54	54	108
	29,644	23,388	30,099
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>			
Տրված կանխավճարներ	3,767	3,006	12,511
Դեբիտորական պարտքեր բյուջեից	5,099	914	955
	8,866	3,920	13,466
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	38,510	27,308	43,565

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի գուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Տե՛ս ծանոթագրություն 18(ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

7 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	81,254	27,166	66,261
	81,254	27,166	66,261

Տե՛ս ծանոթագրություն 18(ա) դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

8 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
	Եկամուտներին վերաբերող շնորհներ	108,516	500
	108,516	500	-

Դրամաշնորհների մի մասը ստացվում են հատուկ նպատակով և մատչելի չեն ընկերություն ընդհանուր օգտագործման համար:

9 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		
	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր	50,000	50,000	-
	50,000	50,000	-
<i>Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>			
Ստացված փոխառություններ	234,882	237,697	235,197
	234,882	237,697	235,197
	284,882	287,697	235,197

Հազար դրամ	Ոչ ընթացիկ		
	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>			
Ստացված փոխառություններ	33,000	-	-
	33,000	-	-

Բանկային վարկերը, վարկային գիծ են և ունեն 1 տարի մարման ժամկետ և տարեկան 14% տոկոսադրույք (2023թ.՝ նույնը):

Ստացված փոխառությունների ամորտիզացված արժեքը բերվել է իրական արժեքի: Զեղչման դրույքը կիրառվել է՝ օգտագործելով շուկայում գործող նմանատիպ պրոդուկտի տոկոսադրույքը, ՀՀ դրամի համար միջինը՝ 13%, միջինը 2 տարի ժամկետով:

Խմբի տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 18-ում:

10 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
	<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր ստացված ապրանքների և ծառայությունների գծով	176,861	86,359	139,463
Կրեդիտորական պարտքեր ծրագրերի գծով	52	19,842	46,555
	176,913	106,201	186,018
<i>Ոչ ֆինանսական պարտավորություններ</i>			
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին ծրագրերի գծով	37,483	-	8,937
Ստացված կանխավճարներ այլ ծրագրերի իրականացման գծով	20,504	22,926	10,122
Ստացված կանխավճարներ «Արմաթ» ինժեներական լաբարատորիաների գծով	38,346	38,054	28,999
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	43,931	43,575	32,963
Վճարվելիք հարկեր և տուրքեր	22,333	74,472	15,953
Այլ	5	8	585
	162,602	179,035	97,559
	339,515	285,236	283,577

Տե՛ս ծանոթագրություն 18(ա) առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

11 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ տարվա համար	352	366	652
	352	366	652

12 Եկամուտներ

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Պետական դրամաշնորհներ «Արմաթ» ինժեներական լաբարատորիաների գծով	848,637	848,637	829,203
Եկամուտներ համաժողովներից և միջոցառումներից	636,761	622,946	32,848
Անդամավճարներից եկամուտ	142,439	70,955	65,088
Այլ դրամաշնորհներ «Արմաթ» ինժեներական լաբարատորիաների գծով	132,990	76,546	108,169
Այլ դրամաշնորհներ	44,659	122,770	226,393
	1,805,486	1,741,854	1,261,701

13 Ծրագրերի գծով ծախսեր

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Ծրագրերի խմբավարների վարձատրություն	895,280	882,137	828,022
«Արմաթ» ինժեներական լաբարատորիաների՝ աշխատանոցների և կրթական ծրագրերի շրջանակում կատարված ծախսեր	132,900	118,121	153,904
Կազմակերպչական ծառայությունների գծով ծախսեր	109,299	44,879	4,753
Մարքեթինգային և գովազդային ծախսեր	84,655	25,085	-
Ուղևորափոխադրման և բեռնափոխադրումներ	81,593	512	-
Շինարարական աշխատանքներ	61,333	25,400	-
Կրթական նորարարական կենտրոնների գծով ծախս	37,577	62,597	32,464
Տպագրական ծառայություններ	33,126	12,692	-
Վարձակալության գծով ծախս	25,800	10,967	-
Բանախոսների ներգրավման գծով ծախսեր	24,796	-	-
Հատուցում աշխատակիցներին	21,743	43,322	7,215
Մենդի ապահովման գծով ծառայություն	21,611	2,388	-
Հյուրանոցային, հյուրերի հետ կապված այլ ծախսեր	13,527	349	-
Նվիրատվություն	11,130	14,450	250
«Արմաթ» ինժեներական լաբարատորիաների գծով այլ ծախսեր	10,832	5,180	8,535
Լուսանկարահանման և տեսանկարահանման ծառայություններ	7,567	1,250	-
Սարքավորումների ձեռքբերում	2,795	12,221	9,568
Հիմնական միջոցների մաշվածություն	1,743	-	1,756
Միջոցառումների կառավարման ծրագրային հարթակի օգտագործման գծով ծախսեր	1,231	3,816	-
Միջոցառման անցկացման թույլտվություն	-	303,593	-
Նվիրատվություն	-	12,840	55,148
Ֆիլմի նկարահանում	-	-	8,770
Այլ ծախսեր	9,480	8,091	-
	1,588,018	1,589,890	1,110,385

14 Վարչական և այլ ծախսեր

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Հատուցում աշխատակիցներին	262,380	183,773	157,787
Աուդիտորական և խորհրդատվական ծառայության ծախսեր	17,761	4,443	1,450
Վարչական տարածքի վարձակալություն	15,376	10,761	12,678
Մարքեթինգային և գովազդային ծախսեր	13,875	17,945	53,631
Դեբիտորական պարտքի դուրսգրում	12,761	1,000	645
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	6,173	6,274	7,830

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Չփոխհատուցվող հարկերի գծով ծախսեր	4,153	239	1,947
Արտարժույթի փոխարկման ծախսեր	2,933	3,925	2,270
Համաժողովների գծով ծախսեր	2,633	-	-
Բանկային և ապահովագրական ծախսեր	2,483	202	186
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,093	11,406	5,711
Միջոցառման կազմակերպման ծախսեր	1,409	1,144	3,381
Մաշվածություն	1,103	4,392	2,441
Այլ վարչական ծախսեր	5,615	8,483	4,862
	350,748	253,987	254,819

15 Ֆինանսական եկամուտ/(ծախս)

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Տոկոսային եկամ.՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	12,609	11,210	4
Իրական արժեքի ճշգրտումից եկամուտ/ծախս	12,828	(59,363)	-
Տոկոսային ծախս.՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	(1,561)	-	-
Վարկային գծի տոկոսային ծախս	(3,664)	(2,095)	-
	20,212	(50,248)	4

16 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

16.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Դեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում (տե՛ս ծանոթագրություն 19):

17 Ֆինանսական գործիքներ

17.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

17.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ			
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>			
Երկարաժամկետ փոխառություններ	185,187	154,744	195,133
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	29,644	23,388	30,099
Կարճաժամկետ փոխառություններ	5,000	5,835	835
Մնացորդներ դրամարկում և բանկերում	81,254	27,166	66,261
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	301,085	211,133	292,328
Ֆինանսական պարտավորություններ			
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր	50,000	50,000	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	176,913	106,201	186,018
<i>Ընդամենը ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>	<i>226,913</i>	<i>156,201</i>	<i>186,018</i>
<i>Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>			
Ստացված փոխառություններ	267,882	237,697	235,197
	267,882	237,697	235,197
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	494,795	393,898	421,215

18 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Խումը ենթարկվում է զանազան ռիսկերի, որոնք կապված են ֆինանսական գործիքների հետ: Այս ռիսկերն են

- շուկայական ռիսկը,
- պարտքային ռիսկը
- իրացվելիության ռիսկը:

Խումը ենթարկված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքովաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

1) Ծուկայական ռիսկ

Ծուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Ծուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա

պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

ա) Արտարժույթային ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ խմբի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով հիմնականում ԱՄՆ դոլարով, եվրոյով արտահայտված գնումների, վարկերի և փոխառությունների հետ:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին խմբի ենթարկվածությունը.

Հազար դրամ		2024թ.				
Հոդված	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Ընդամենը	
<i>Ֆինանսական ակտիվներ</i>						
Երկարաժամկետ փոխառություններ	-	185,187	-	-	185,187	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	29,504	-	140	-	29,644	
Ավանդներ և փոխառություններ	5,000	-	-	-	5,000	
Մնացորդներ դրամարկիդում և բանկերում	49,648	828	-	30,778	81,254	
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	84,152	186,015	140	30,778	301,085	
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>						
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	173,232	3,528	153	-	176,913	
Բանկային վարկեր	50,000	-	-	-	50,000	
Ստացված փոխառություններ	71,268	196,614	-	-	267,882	
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	294,500	200,142	153	-	494,795	
Զուտ ենթարկվածություն	(210,348)	(14,127)	(13)	30,778	(193,710)	

2023թ.						
Հազար դրամ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Ընդամենը	
Հողված						
<i>Ֆինանսական ակտիվներ</i>						
Երկարաժամկետ փոխառություններ	-	154,744	-	-	-	154,744
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	23,379	9	-	-	-	23,388
Ավանդներ և փոխառություններ	5,835	-	-	-	-	5,835
Մնացորդներ դրամարկիտում և բանկերում	9,526	-	17,640	-	-	27,166
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	38,740	154,753	17,640	-	-	211,133
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>						
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	82,130	4,160	19,911	-	-	106,201
Բանկային վարկեր	50,000	-	-	-	-	50,000
Ստացված փոխառություններ	42,565	195,132	-	-	-	237,697
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	174,695	199,292	19,911	-	-	393,898
Զուտ ենթարկվածություն	(135,955)	(44,539)	(2,271)	-	-	(182,765)
Հազար դրամ						2022թ.
Հողված	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Ընդամենը	
<i>Ֆինանսական ակտիվներ</i>						
Երկարաժամկետ փոխառություններ	-	195,133	-	-	-	195,133
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	30,099	-	-	-	-	30,099
Ավանդներ և փոխառություններ	835	-	-	-	-	835
Մնացորդներ դրամարկիտում և բանկերում	5,812	10,588	49,861	-	-	66,261
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	36,746	205,721	49,861	-	-	292,328
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>						
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	140,469	44	45,505	-	-	186,018
Փոխառություններ	40,065	195,132	-	-	-	235,197
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	180,534	195,176	45,505	-	-	421,215
Զուտ ենթարկվածություն	(143,788)	10,545	4,356	-	-	(128,887)

«Առաջատար Տեխնոլոգիաների» ձեռնարկությունների և յուրօրինակ հասարակական նազմաներազատում հաստատված ֆինանսական հաշվառություններ 31 դեկտեմբերի 2024թ.

Չգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամիտ հնարավոր արժևորումը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացվել է ենթադրելով, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չառնելով կանխատեսվող առք ու վաճառքի ազդեցությունը:

Հազար դրամ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	ԱՄՆ դոլարի ազդեցությունը		
		2024թ.	2023թ.	2022թ.
Շահույթի վրա	10%	(1,413)	(4,454)	1,055
	-10%	1,413	4,454	(1,055)

Հազար դրամ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Եվրոյի ազդեցությունը		
		2024թ.	2023թ.	2022թ.
Շահույթի վրա	10%	(1)	(227)	436
	-10%	1	227	(436)

Հազար դրամ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ռուբլու ազդեցությունը		
		2024թ.	2023թ.	2022թ.
Շահույթի վրա	10%	3,078	-	-
	-10%	(3,078)	-	-

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել խմբի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

2) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

ա) Առևտրային դեբիտորական պարտքեր

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՀՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում

ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են ելնելով ժամկետանց օրերից:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրո է և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրո է:

3) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Խմբի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Խմբի հեղինակությունը վտանգի ենթարկելու:

Այս նպատակով Խումբը կատարում է դրամական միջոցների հոսքերի կարճաժամկետ կանխատեսումներ՝ հիմք ընդունելով գործառնական և ներդրումային գործունեության բնույթով պայմանավորված ֆինանսական պահանջները: Որպես կանոն, այս պահանջները կանխատեսվում են տարեկան և ամսական կտրվածքով: Խումբը ձգտում է ապահովել դրամական միջոցների և դրանց համարժեքների այնպիսի չափ, որը կգերազանցի ֆինանսական պարտավորություններից (բացառությամբ առևտրական կրեդիտորական պարտքերի) ակնկալվող դրամական միջոցների արտահոսքը հաջորդող 60 օրերի ընթացքում:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները:

							2024թ.		
							Ընդամենը	համախառն	Հաշվեկշռային
							հոսքեր	հոսքեր	արժեք
Հազար դրամ	Մինչև 1 ամիս	1-12 ամիս	1-3 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	հոսքեր	Հաշվեկշռային արժեք	
Վարկեր և փոխառություններ	50,307	6,000	261,882	-	-	318,189	318,189	317,882	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	176,913	-	-	-	-	176,913	176,913	176,913	
	227,220	6,000	261,882	-	-	495,102	495,102	494,795	

2023թ.

							2023թ.		
							Ընդամենը	համախառն	Հաշվեկշռային
							դրամական	հոսքեր	արժեք
Հազար դրամ	Մինչև 1 ամիս	1-12 ամիս	1-3 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	հոսքեր	Հաշվեկշռային արժեք	
Վարկեր և փոխառություններ	50,326	-	237,697	-	-	288,023	288,023	287,697	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	106,201	-	-	-	-	106,201	106,201	106,201	
	156,527	-	237,697	-	-	394,224	394,224	393,898	

2022թ.

							2022թ.		
							Ընդամենը	համախառն	Հաշվեկշռային
							դրամական	հոսքեր	արժեք
Հազար դրամ	Մինչև 1 ամիս	1-12 ամիս	1-3 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	հոսքեր	Հաշվեկշռային արժեք	
Վարկեր և փոխառություններ	-	-	-	235,197	-	235,197	235,197	235,197	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	186,018	-	-	-	-	186,018	186,018	186,018	
	186,018	-	-	235,197	-	421,215	421,215	421,215	

«Առաջատար Տեխնոլոգիաների Ցանկադրամային Ըրթթրոն» Հասարակական կազմակերպություն
Համախառն ֆինանսական հաշվետվություններ
31 օգոստոսի 2024թ.

19 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Խմբի պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի, և 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. հունվարի 1-ի դրությամբ գտնվում են Իրական արժեքի չափման հիերարխիայի 2-րդ մակարդակում:

19.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Չետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում 2024թ. դեկտեմբերի 31-ի, 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. հունվարի 1-ի դրությամբ:

Չափար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	Չափվելի շուկային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Երկարաժամկետ փոխառություններ	185,187	-	185,187	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	29,644	-	29,644	-
Ավանդներ և փոխառություններ	5,000	-	5,000	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	81,254	-	81,254	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Բանկային վարկեր	50,000	-	50,000	-
Կրեդիտորական և այլ պարտքեր	176,913	-	176,913	-
Փոխառություններ	267,882	-	267,882	-
Չափար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	Չափվելի շուկային արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				

Չափար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	Հաշվեկշռային արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
Երկարաժամկետ փոխառություններ	154,744	-	154,744	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	23,388	-	23,388	-
Ավանդներ և փոխառություններ	5,835	-	5,835	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	27,166	-	27,166	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Բանկային վարկեր	50,000	-	50,000	-
Կրեդիտորական և այլ պարտքեր	106,201	-	106,201	-
Փոխառություններ	237,697	-	237,697	-

Չափար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	Հաշվեկշռային արժեքը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Երկարաժամկետ փոխառություններ	195,133	-	195,133	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	30,099	-	30,099	-
Ավանդներ և փոխառություններ	835	-	835	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	66,261	-	66,261	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Կրեդիտորական և այլ պարտքեր	186,018	-	186,018	-
Փոխառություններ	235,197	-	235,197	-

Բանկային հաշիվների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

20 Պարտավորվածություններ

20.1 Իրավական պարտավորվածություններ

Առդիտի եզրակացության օրվա դրությամբ Խումբը հանդես չի գալիս որպես պատասխանող և հայցվոր որևէ դատական գործընթացում:

21 Պայմանականություններ

21.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության համաձայն:

21.2 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ Էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են Էական պարտավորություններ առաջացնել:

21.3 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

22 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	81,254	27,166	66,261

23 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են վարչության անդամները, նախագահը և այլն: Միությունը վերահսկող մարմին չունի:

23.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Գործարքներ			
<i>Գործարքներ կապակցված կազմակերպությունների հետ</i>			
Ծրագրերի մասով ծախսեր	-	1,800	-

Հազար դրամ			
Գործարքներ	2024թ.	2023թ.	2022թ.
Եկամուտներ համաժողովներից և միջոցառումներից	11,690	4,698	2,750
Անդամավճար	28,302	24,454	11,000
Փոխառությունների մարում	3,000	-	-
<i>Գործարքներ Վարչության կազմի հետ</i>			
Փոխառությունների ստացում	-	-	20,000
Փոխառությունների մարում	20,000	-	-

Հազար դրամ			
Մնացորդներ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Կապակցված կազմակերպություններ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	990,815	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	22,670	19,679
<i>Վարչության կազմ</i>			
Տրված փոխառություններ	185,187	154,744	195,133
Ստացված փոխառություններ	-	23,000	20,000

23.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	54,245	39,493	39,256

24 ՖՀՄՍ-ների կիրառումն առաջին անգամ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս խումբը կիրառել է ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը»: ՖՀՄՍ-ների պարտադիր ճշգրտումները էական չեն խմբի համար: Խմբի նկատմամբ այլընտրանքային ճշգրտումները կիրառելի չէին:

Ընդհանուր դրույթներ

ՖՀՄՍ-ներով առաջին անգամ պատրաստված ֆինանսական հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին երեք տարիների հաշվետվություն (նախկին անվանումը՝ Հաշվապահական հաշվեկշիռ), շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին երկու տարիների հաշվետվություն (նախկին անվանումը՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն), դրամական

միջոցների հոսքերի մասին երկու տարիների հաշվետվություն և ծանոթագրություն երկու տարվա համար:

Դրամական միջոցների մասին հաշվետվություն

ՖՀՄՍ-ների համաձայն՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը առաջին անգամ պատրաստվել է անուղղակի մեթոդով, ըստ որի, բացահայտվում են համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական դասերը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ՖՀՄՍ-ների առաջին անգամ կիրառման արդյունքում խումբը որդեգրել է նոր և վերանայված ստանդարտները, որոնք ներկայացված են ծանոթագրություն 2.5-ում, ինչպես նաև, առաջին անգամ բացահայտել է ֆինանսական գործիքների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կատեգորիաները՝ ներառյալ խմբի ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը (տե՛ս ծանոթագրություններ 18):

«Յու Այ Թի Ի Էքսպո»
Սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններ

31 դեկտեմբերի 2022թ.

31 դեկտեմբերի 2023թ.

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Եկամտի և ծախսերի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Յու Այ Թի Ի Էքսպո» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնետիրոջը

Վերապահումով Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Յու Այ Թի Ի Էքսպո» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա Եկամտի և ծախսերի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

1. Ընկերությունը 2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ունի երկարաժամկետ տրված փոխառություններ 88 մլն դրամի չափով, որը անտոկոս է և ներկայացված չէ իրական արժեքով: Իրական արժեքով ներկայացնելու դեպքում սույն ակտիվների մնացորդային արժեքը կլիներ 56 մլն դրամ 2024 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ և 52 մլն դրամ 2023 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք Էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ Էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Մենք հաստատում ենք որ աուդիտորական աշխատանքների ընթացքում մենք աուդիտի ենք ենթարկել 2024թ.-ին համեմատական ներկայացված 2023 թվականի

դեկտեմբերի 31-ին, 1 հունվար 2023թ.-ին ավարտված տարիների համապատասխան հաշվետվությունները ևս:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՅՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Քնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերության և դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Քնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ռոբերտ Մելիքյան, ACCA

Տնօրեն

Ղեկավար գործընկեր



25 դեկտեմբեր 2025թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	-	-	158
Երկարաժամկետ փոխառություններ	5	88,486	88,596	29,827
		88,486	88,596	29,985
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ		-	-	426
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	1,118	1,118	7,640
Մացորդներ դրամարկղում և բանկերում	7	132	926	171
		1,250	2,044	8,237
Ընդամենը ակտիվներ		89,736	90,640	38,222
Սեփական կապիտալ				
Կանոնադրական կապիտալ		50	50	50
Կուտակված շահույթ/(վնաս)		39,482	40,322	(12,881)
Ընդամենը սեփական կապիտալ		39,532	40,372	(12,831)

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Պարտավորություններ				
Ընթացիկ պարտավորություններ				
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	8	50,000	50,000	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	204	268	51,053
		50,204	50,268	51,053
		50,204	50,268	51,053
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		89,736	90,640	38,222

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 25 դեկտեմբերի 2025թ. -ին

Տնօրեն՝



Խաչատուր Հակոբյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Եկամտի և ծախսերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ.	2022թ.
Եկամուտներ	10	6,847	103,038	-
		6,847	103,038	-
Ծրագրերի գծով ծախսեր	11	(1,908)	(40,510)	(6,937)
Վարչական և այլ ծախսեր	12	(2,115)	(7,231)	(5,867)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		2,824	55,297	(12,804)
Ֆինանսական ծախս	13	(3,664)	(2,093)	-
Փոխարժեքային տարբերությունից վնաս		-	(1)	(77)
Շահույթ/ (վնաս) մինչև հարկերը		(840)	53,203	(12,881)
Շահութահարկի գծով ծախս		-	-	-
Տարվա շահույթ/(վնաս)		(840)	53,203	(12,881)

Եկամտի և ծախսերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 9-ից 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	50	(12,881)	(12,831)
Տարվա շահույթ	-	53,203	53,203
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	53,203	53,203
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	40,322	40,372
Տարվա վնաս	-	(840)	(840)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(840)	(840)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	39,482	39,532

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 9-ից 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ.	2022թ.
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>				
Դրամական մուտքեր միջոցառումներից և համաժողովներից		6,821	55,544	50,236
Ստացված անդամավճարներ		-	2,620	1,026
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ		(1,853)	(38,166)	(22,429)
Անձնակազմին վճարված դրամական միջոցներ		(2,209)	(7,797)	(6,325)
Վճարված տոկոսներ		(3,664)	(2,095)	-
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ		(905)	10,106	22,508
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>				
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		-	-	(237)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		-	-	(237)
<i>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>				
Վարկերի Ստացում		50,000	50,000	-
Վարկերի մարում		(50,000)	-	-
Փոխառությունների մարում		-	(580)	-
Տրված փոխառություններ		(69,175)	(60,404)	-
Տրված փոխառությունների մարում		69,286	1,635	8,000
Շահաբաժնի վճարում		-	-	(55,700)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		111	(9,349)	(47,700)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ.	2022թ.
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ / (նվազում)		(794)	757	(25,429)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		-	(2)	(138)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		926	171	25,738
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	7,20	132	926	171

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 9-ից 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Կազմակերպության գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Յու Այ Թի Ի Էքսպո» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է Ընկերությունը հիմնադրվել է 2005թ.-ին, որպես Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի միջոցառումների կազմակերպման մասնագիտացված ընկերություն:

Ընկերության նպատակներն համատեքստում են.

- Հայաստանում կազմակերպել միջազգային, բարձր մակարդակի միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, համաժողովներ, սեմինարներ, կոնֆերանսներ և այլն
- Աջակցել և կազմակերպել Հայաստանի ՏՀՏ ընկերությունների մասնակցությունը միջազգային միջոցառումներին
- Ներկայացնել ՀՀ ՏՀՏ ոլորտն արտերկրում որպես բիզնեսի, համագործակցության և ներդրումների համար գրավիչ դաշտ

Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հակոբ Հակոբյան փող., 3 շենք:

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա՝ հանգեցնելով հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Չնայած դժվարին մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը շարունակում է դրսևորել բավականին բարձր դիմադրողականություն շնորհիվ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար իրականացվող արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականությունների և համարժեք գործողությունների: Հայաստանի տնտեսությունը 2024թ.-ին շարունակել է աճել, թեպետ աճի դինամիկան համեմատաբար նվազել է:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ
- ՀՀՄՍ 18 ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում
- Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ
- Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ
- Փոփոխություններ ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 ստանդարտներում

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 ՀՀՄՍ-ների առաջին անգամ ընդունումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) համաձայն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ-ներին անցման ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էապես չի տարբերվում Ընկերության հաշվապահական հաշվառման ստանդարտներով պատրաստված ֆինանսական հաշվետվություններից:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	2024թ.	2023թ.
ԱՄՆ դոլար	396.56	404.79
Եվրո	413.89	447.90
Ռուբլի	3.71	4.50

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը, բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի արդյունքում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն Սեփական կապիտալում:

Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ, սարքավորումներ և տնտեսական գույք	1-3 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-5 տարի

3.3 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.4 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապահանջվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՅՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում և շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 17.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները

բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝

շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիան ներառում է նաև ներդրումը սեփական կապիտալում: Ընկերությունը հաշվառում է ներդրումը իրական արժեքով: Իրական արժեքը որոշվել է ՖՅՄՍ 9-ի պահանջներին համապատասխան, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեքը

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՅՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՅՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՅՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները

հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, համաձայն որի Պահուստավորման սանդղակը հիմնվում է Ընկերության պատմական կորստի դրույքաչափերի վրա՝ ճշգրտված ապագա սպասվող դեպքերով: Ընկերությունը դեբիտորական պարտքերի արժեզրկումները ճանաչում է ներքոնշյալ դրույքներով, որոնք կարող են հետագայում փոխվել՝ դեբիտորական պարտքերի հետագա արժեզրկումների արդյունքում:

Դեբիտորական պարտքերի ժամկետայնության օրեր	պայմանագրային Արժեզրկման տոկոս
Մինչև 90 օր	10%
91-180 օր	20%
181-270 օր	50%
271 և ավել	100%

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 17.2-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.5 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.6 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
- (գ) քաղաքացիաիրավական հիմունքներով վճարված եկամուտները

3.7 Շնորհներ և նվիրատվություններ

Դրամաշնորհների մի մասը ստացվում են որոշակի նպատակներով և նախատեսված չեն Ընկերության ընդհանուր օգտագործման համար: Այս դրամաշնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհը, որը հատկացվում է Կազմակերպությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Դրամաշնորհների մի մասը հասանելի են ընդհանուր նպատակների համար, ինչպես սահմանված է Ընկերության կառավարման փաստաթղթերում: Սույն դրամաշնորհները ճանաչվում են որպես հասույթ, երբ դառնում են ստացման ենթակա:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,800	4,341	155	7,296
Ավելացում	237	-	-	237
Օտարում	(2,278)	(2,736)	(107)	(5,121)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	759	1,605	48	2,412
Ավելացում	-	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	759	1,605	48	2,412
Ավելացում	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	759	1,605	48	2,412
Կուտակված մաշվածություն				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,797	4,341	111	7,249
Տարվա հաշվարկ	82	-	21	103
Օտարման հետևանքով դուրսգրում	(2,278)	(2,736)	(84)	(5,098)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	601	1,605	48	2,254
Տարվա հաշվարկ	158	-	-	158
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	759	1,605	48	2,412
Տարվա հաշվարկ	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	759	1,605	48	2,412
Հաշվեկշռային արժեք				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	158	-	-	158
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 2,412 հազար դրամ (2023թ. 2,412 հազար դրամ, 2022թ. 2,175 հազար դրամ):

5 Երկարաժամկետ փոխառություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Տրված փոխառություններ կապակցված կողմերին	88,486	88,596	29,827
	88,486	88,596	29,827

Կապակցված կողմերին տրված փոխառությունները անտոկոս են և ունեն 6 տարի մարման ժամկետ (2023թ.՝ անտոկոս և 7 տարի մարման ժամկետ, 2022թ.՝ անտոկոս և 8 տարի մարման ժամկետ):

Տե՛ս ծանոթագրություն 16(ա)՝ Երկարաժամկետ փոխառություններ արժույթների բացահայտման համար:

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Դեբիտորական պարտքեր միջոցառումների և համաժողովների գծով	150	150	6,018
Այլ դեբիտորական պարտքեր	54	54	108
	204	204	6,126
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>			
Տրված կանխավճարներ	-	-	600
Դեբիտորական պարտքեր բյուջեից	914	914	914
	914	914	1,514
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,118	1,118	7,640

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Տե՛ս ծանոթագրություն 16(ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

7 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	132	926	171
	132	926	171

Տե՛ս ծանոթագրություն 16(ա) դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

8 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ
------------	---------

	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր	50,000	50,000	-
	50,000	50,000	-

Բանկային վարկերը, վարկային գիծ են և ունեն 1 տարի մարման ժամկետ և տարեկան 14% տոկոսադրույք (2023թ. նույնը):

9 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Կրեդիտորական պարտքեր ստացված ապրանքների և ծառայությունների գծով	100	100	50,373
	100	100	50,373
<i>Ոչ ֆինանսական պարտավորություններ</i>			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	79	-	78
Վճարվելիք հարկեր և տուրքեր	20	160	21
Այլ	5	8	581
	104	168	680
	204	268	51,053

Տես ծանոթագրություն 16(ա) առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

10 Եկամուտներ

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Եկամուտներ համաժողովներից և միջոցառումներից	6,847	103,038	-
	6,847	103,038	-

11 Ծրագրերի գծով ծախսեր

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Հատուցում աշխատակիցներին	1,828	3,414	2,217
«Արմաթ» ինժեներական լաբորատորիաների` աշխատանոցների և կրթական ծրագրերի շրջանակում կատարված ծախսեր	-	-	753
Կազմակերպչական ծառայությունների գծով ծախսեր	-	36,938	3,770
Հիմնական միջոցների մաշվածություն	-	158	103
Այլ ծախսեր	80	-	94

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
	1,908	40,510	6,937

12 Վարչական և այլ ծախսեր

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	1,200	1,315	4,060
Չփոխհատուցվող հարկերի գծով ծախսեր	342	5,152	498
Բանկային և ապահովագրական ծախսեր	327	134	45
Աուդիտորական և խորհրդատվական ծառայության ծախսեր	246	219	436
Այլ վարչական ծախսեր	-	411	828
	2,115	7,231	5,867

13 Ֆինանսական եկամուտ/(ծախս)

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Վարկային գծի տոկոսային ծախս	(3,664)	(2,093)	-
	(3,664)	(2,093)	-

14 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

14.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար դեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեն գործիքը: Դեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում դեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում (տե՛ս ծանոթագրություն 19):

15 Ֆինանսական գործիքներ

15.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

15.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ			
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>			
Երկարաժամկետ փոխառություններ	88,486	88,596	29,827
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	204	204	6,126
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	132	926	171
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	88,822	89,726	36,124
Ֆինանսական պարտավորություններ			
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր	50,000	50,000	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	100	100	50,373
<i>Ընդամենը ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>	50,100	50,100	50,373
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	50,100	50,100	50,373

16 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի, որոնք կապված են ֆինանսական գործիքների հետ: Այս ռիսկերն են

- շուկայական ռիսկը,
- պարտքային ռիսկը
- իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

1) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

ա) Արտարժույթային ռիսկ

Ընկերության գործարքների ամբողջական մասն իրականացվում է հայկական դրամով:

2) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

ա) Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրո է և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրո է:

3) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգի ենթարկելու:

Այս նպատակով Ընկերությունը կատարում է դրամական միջոցների հոսքերի կարճաժամկետ կանխատեսումներ՝ հիմք ընդունելով գործառնական և ներդրումային գործունեության բնույթով պայմանավորված ֆինանսական պահանջները: Որպես

կանոն, այս պահանջները կանխատեսվում են տարեկան և ամսական կտրվածքով: Ընկերությունը ձգտում է ապահովել դրամական միջոցների և դրանց համարժեքների այնպիսի չափ, որը կգերազանցի ֆինանսական պարտավորություններից (բացառությամբ առևտրական կրեդիտորական պարտքերի) ակնկալվող դրամական միջոցների արտահոսքը հաջորդող 60 օրերի ընթացքում:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումներ:

2024թ.

Հազար դրամ	Մինչև 1 ամիս	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Վարկեր և փոխառություններ	50,307	50,307	50,000
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	100	100	100
	50,407	50,407	50,100

2023թ.

Հազար դրամ	Մինչև 1 ամիս	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Վարկեր և փոխառություններ	50,326	50,326	50,000
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	100	100	100
	50,426	50,426	50,100

2022թ.

Հազար դրամ	Մինչև 1 ամիս	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	50,373	50,373	50,373
	50,373	50,373	50,373

17 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ընկերության պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի, և 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. հունվարի 1-ի դրությամբ գտնվում են Իրական արժեքի չափման հիերարխիայի 2-րդ մակարդակում:

17.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի, 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Սկարագրություն				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Երկարաժամկետ փոխառություններ	88,486	-	88,486	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	204	-	204	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	132	-	132	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Բանկային վարկեր	50,000	-	50,000	-
Կրեդիտորական և այլ պարտքեր	100	-	100	-
Հազար դրամ				
Սկարագրություն				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Երկարաժամկետ փոխառություններ	88,596	-	88,596	-

Չափար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	Չափվելիք շաբաթվա արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	204	-	204	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	926	-	926	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Բանկային վարկեր	50,000	-	50,000	-
Կրեդիտորական և այլ պարտքեր	100	-	100	-

Չափար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	Չափվելիք շաբաթվա արժեքը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Երկարաժամկետ փոխառություններ	29,827	-	29,827	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,126	-	6,126	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	171	-	171	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Կրեդիտորական և այլ պարտքեր	50,373	-	50,373	-

Բանկային հաշիվների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

18 Պարտավորվածություններ

18.1 Իրավական պարտավորվածություններ

Աուդիտի եզրակացության օրվա դրությամբ ընկերությունը հանդես չի գալիս որպես պատասխանող և հայցվոր որևէ դատական գործընթացում:

19 Պայմանականություններ

19.1 Չարկեր

Չայաստանի Չանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Չաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Չարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Չարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Չայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության համաձայն:

19.2 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

19.3 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	132	926	171

21 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են բաժնետիրոջը և այլն:

21.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Գործարքներ			
<i>Գործարքներ կապակցված կազմակերպությունների հետ</i>			
Անդամավճար	-	8,554	-
<i>Գործարքներ կապակցված կողմերի հետ</i>			
Փոխառությունների ստացում	69,176	60,404	-
Փոխառությունների մարում	69,286	1,635	9,087

Հազար դրամ			
Մնացորդներ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Կապակցված կազմակերպություններ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-	47
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	1,890
<i>Կապակցված կողմեր</i>			
Տրված փոխառություններ	88,486	88,596	29,827

21.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2024թ.	2023թ.	2022թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	1,202	1,194	1,217

22 \$ՀՄՍ-ների կիրառումն առաջին անգամ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը կիրառել է ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը»: ՀՀՄՍ-ների պարտադիր ճշգրտումները էական չեն Ընկերության համար: Ընկերության նկատմամբ այլընտրանքային ճշգրտումները կիրառելի չէին:

Ընդհանուր դրույթներ

ՀՀՄՍ-ներով առաջին անգամ պատրաստված ֆինանսական հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին երեք տարիների հաշվետվություն (նախկին անվանումը՝ Հաշվապահական հաշվեկշիռ), շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին երկու տարիների հաշվետվություն (նախկին անվանումը՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն), դրամական միջոցների հոսքերի մասին երկու տարիների հաշվետվություն և ծանոթագրություն երկու տարվա համար:

Դրամական միջոցների մասին հաշվետվություն

ՀՀՄՍ-ների համաձայն դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը առաջին անգամ պատրաստվել է անուղղակի մեթոդով, ըստ որի, բացահայտվում են համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական դասերը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ՀՀՄՍ-ների առաջին անգամ կիրառման արդյունքում Ընկերությունը որդեգրել է նոր և վերանայված ստանդարտները, որոնք ներկայացված են ծանոթագրություն 2.5-ում, ինչպես նաև, առաջին անգամ բացահայտել է ֆինանսական գործիքների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կատեգորիաները՝ ներառյալ Ընկերության ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը (տես ծանոթագրություններ 18):

**ՀԱՎԵԼՎԱԾ 6: «ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
Հասարակական կազմակերպության Համաժողովի կազմը**

Ընկերության իրավաբանական անուն	Ընկերության ներկայացուցչի անուն-ազգանուն
2գիս.ամ ՍՊԸ	Ստանիսլավ Ստեպանով
Բուստ-իթ ՍՊԸ	Ռաֆայել Միքայելյան
Աքյումեն թեքնոլոջիս ՍՊԸ	Դավիթ Ավետիսյան
Ադոբ դիվելոպմենթ արմ ՍՊԸ	Էմմա Կոստանյան
Աէրոդինամիքս ՓԲԸ	Աստղիկ Վարդանյան
Դևարտ ՍՊԸ	Քսենիա Կոռնիլովա
Ըլայն թեքնոլոջի ՍՊԸ	Նատալյա Մուվորովա
Արդի կրթության ակադեմիա հիմնադրամ	Հայկ Դավեյան
Ամբրեյն ՍՊԸ	Արթուր Հարությունյան
Զայլինքս արմենիա ՍՊԸ	Ռաֆֆի Կասարջյան
Շիրակացու ճեմարան միջազգային գիտակրթական համալիր ՓԲԸ	Լուսինե Մկրտչյան
Աոբայթ ՍՊԸ	Տիգրան Սարգսյան
Քեյ փոինթ ՍՊԸ	Լուսինե Նալբանդյան
Areg technologies inc.	Մարինե Պետրոսյան
Արիդես ՍՊԸ	Սեդա Բադալյան
Հայկական աերոտիեզերական գործակալություն ՓԲԸ	Միեր Մեհրաբյան
Բուրքամի ՍՊԸ	Նարեկ Ասիկյան
Արթ-գրուպ ՍՊԸ	Կարինե Եգոյան
Ավրոմիկ ՍՊԸ	Միքայել Ավագյան
Աքսելլեկտ Հայաստան ՍՊԸ	Եվգենիա Խոխլովա
Սելյս հաուս ՍՊԸ	Նվեր Ստեփանյան
Պալեանս ՍՊԸ	Շանթ Խայալյան
Բալիստիք ՓԲԸ	Արմեն Ասատրյան
Բարդինեն էյ այ ՍՊԸ	Արտեմ Հարությունյան
Բետա ֆտ ՍՊԸ	Արարատ Մկրտչյան
Բլուայփի ՓԲԸ	Մաթի Կասարջյան
Ալթահաբ ՍՊԸ	Ռոբերտ Ենոքյան
Վիեմուեր իսթերն յուրոպի ՍՊԸ	Գոհար Ավագյան
Բայ էլ էմ ՓԲԸ	Վահե Բաբայան
Չեսմուդ ՍՊԸ	Ավետիք Գրիգորյան
Սիֆոռա ՓԲԸ	Լևոն Հովհաննիսյան
Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամ	Գուրգեն Հակոբյան
Քոդեքս ՓԲԸ	Արման Խաչատրյան
Քոզնայզ Էնջինիրինգ ՍՊԸ	Լիլիթ Աղասանյան
Քրաուդֆանդինգ ֆորմուլա ՍՊԸ	Նարեկ Վարդանյան
Դանիամ ՍՊԸ	Կարեն Մարտիրոսյան
Տուտոր պլատֆորմ ՍՊԸ	Լուսինե Միրումյան
Դատաարտ.ամ ՍՊԸ	Քսենյա Պողոսյան
Դատանեքթ ՍՊԸ	Արման Դանիելյան
Դեվսֆտ էլեմ ՍՊԸ	Դավիթ Գրիգորյան
Դիջիֆենս ՍՊԸ	Ինա Գևորգյան
Դիջիթալ փոմբրանեթ ՍՊԸ	Արթուր Դանդիլյան
Դիջիթեք այ են թի էլ ՍՊԸ	Մոնթե Հակոբջանյան

Դիսքո էջ էմ ՓԲԸ	Մոնա Գրիգորյան
Դոնոս ամ ՍՊԸ	Միքայել Դոնիկյան
Ի վորկա ՍՊԸ	Խաչատուր Բաղայան
Իզի փեյ ՍՊԸ	Վահե Խաչատրյան
Էպամ սիսթեմզ ՍՊԸ	Բենիամին Գյուրջյան
Էսենշլ սոլյուշնս ՍՊԸ	Գարիկ Պետրոյան
Էվոլվեր ՍՊԸ	Վլադիմիր Մոֆյան
Ֆայմթեք ՍՊԸ	Աննա Մուրադյան
Ֆայվերեյն լաբս ՍՊԸ	Տիգրան Գևորգյան
Ֆորմուլա վենչուրս ՍՊԸ	Գրիգոր Հովհաննիսյան
Գեթ ռիզալթ ՍՊԸ	Արթուր Իսահակյան
Ջիջի ՓԲԸ	Քնարիկ Գրիգորյան
Գլոբալ շիֆֆինգ ՍՊԸ	Արփինե Համբարձումյան
Գրանատուս վենչուրս ՓԲԸ	Լիլիթ Խաչիկյան
Գրանթ թորնթոն քնսալթինգ ՓԲԸ	Անի Հակոբյան
Ջի դի էմ ՍՊԸ	Միհրան Մինասյան
Հաքթեք ՍՊԸ	Մարիամ Զոջյան
Հելիքս կոնսալտինգ ՍՊԸ	Քրիստինա Մազմանյան
Ջերո էյ-էմ ՍՊԸ	Գևորգ Կարապետյան
Ուանգառդ ՍՊԸ	Հայկ Քոսյան
Էյչ աբ դրոն ՍՊԸ	Դիանա Մանուկյան
Հիպերիոն էյալ ՍՊԸ	Մոհամեդ Ռաշադ
Այդունաու ՍՊԸ	Անի Ավոյան
Իդեա թեքնոլոջիզ ՍՊԸ	Վերա Կարապետյան
Իմ այդի ՓԲԸ	Արմեն Ավագյան
Ինո-թեքնոլոջի ՍՊԸ	Սերգեյ Աղազումյան
Ինոբեյն ՍՊԸ	Արմեն Հակոբյան
Ինթելիճեյր էյեմ ՓԲԸ	Աննա Ակուլյան
Այ իքս-թեք ՍՊԸ	Գոհար Գևորգյան
Ջեթթբեյնս էյեմ ՍՊԸ	Օֆելիա Եփրեմյան
Սվտ ՍՊԸ	Վահան Վարդանյան
Կրիսպ ՍՊԸ	Մանե Դիլոյան
Լանար սերվիս ՍՊԸ	Սևակ Հարությունյան
Լայմ տեխ ՍՊԸ	Գևորգ Սաֆարյան
Լինիէյթ էյեմ ՍՊԸ	Լիլիթ Միմոնյան
Լուփեքս ՍՊԸ	Վահան Պողոսյան
Լուս սի առ էմ ՍՊԸ	Արսեն Մխիթարյան
Մակադամիան առ ՓԲԸ	Տաթև Մելիքսեթյան
Օկտոհաբ ՍՊԸ	Տաթևիկ Հովսեփյան
Մետրիկ ՍՊԸ	Հրանտ Դավթյան
Մայքրոչիֆ արմենիա ՓԲԸ	Մաթեն Ավագյան
Մոդելֆրոնտ.քոմ ՍՊԸ	Արթուր Ալեքսանյան
Էնֆիֆի լաբս ՍՊԸ	Գևորգ Մարգարյան
Մյունիք վենչուրս ՍՊԸ	Հրայր Շահբազյան

Նաիրի-թեք ՄՊԸ	Անի Թոսունյան
Նուռլոջիք ՄՊԸ	Շուշանիկ Ղազարյան
Նյուվե քնթրոլս ար ընդ դի ՄՊԸ	Սերգո Օզանով
Էնվիդիա արմենիա ՄՊԸ	Դմիտրի Դուկա
Օգմա ափլիքեյշնս ՓԲԸ	Կարեն Ազատյան
Օպտիմում փարթներս իվիէն ՄՊԸ	Թագուհի Թումանյան
Քոլ հաբ ՄՊԸ	Մանե Գևորգյան
Օրին էյայ ՄՊԸ	Արամ Հարությունյան
Օսենսուս արմ ՄՊԸ	Մուրեն Աբրահամյան
Փիսիվյու ՄՊԸ	Մարինա Կուդրյավցևա
Փի էմ դի սըլուշընս ՄՊԸ	Մանե Արզումանյան
Ֆիլիպ մորրիս արմենիա ՄՊԸ	Վիկտորիա Պողոսյան
Աուդիոսոֆթ ՄՊԸ	Արսեն Համբարձումյան
Քվանտորի ամ ՄՊԸ	Արսեն Խոզայնով
Քուեստգլոբալ արմենիա ՄՊԸ	Ռուբինա Առաքելյան
Ռեբլոքս ՄՊԸ	Հայկ Մնացականյան
Ռեգթեքֆլոու ՄՊԸ	Սեդա Մխիթարյան
Ռենդերֆորեստ ՄՊԸ	Նարեկ Սաֆարյան
Ռոքթթս ՄՊԸ	Գարիկ Խաչանյան
Արթին տեխնոլոջիս ՄՊԸ	Վազգեն Գրիգորյան
Սադա գլոբալ դելիվերի սենթըր ՄՊԸ	Անուշ Քիսիբեկյան
Նայնթի ՄՊԸ	Գեորգի Մամաջանյան
Սենայան ՄՊԸ	Լուսինե Կասարջյան
Սերվիսթայթան արևելք ՄՊԸ	Վահե Ավետյան
Սիմենս ինդասթրի սոֆթվեր ՓԲԸ	Արաքսյա Աղաջանյան
Սմարթ քլիք ՄՊԸ	Էմմա Բոջուկյան
Սոֆթ կոնստրակտ ՓԲԸ	Ռոման Բադալյան
Սոֆտշարկ ՄՊԸ	Կարլեն Մկրտչյան
Քիոտորդս սփերասոֆթ ՄՊԸ	Անատոլի Դեմիդով
Սփորթիքն էյ էմ ՄՊԸ	Էմմա Թաշչյան
Սպոուտ ՄՊԸ	Համլետ Մանուկյան
Ստեմար ՓԲԸ	Հովհաննես Գարոյան
Հայաստանի հանրապետությունում սիներջի ինթերնեշնըլ սիսթըմզ քաժնետիրական ընկերության մասնաճյուղ	Աննա Ստեփանյան
Թիմ ՓԲԸ	Մարգարիտա Կուցանյան
Թիմ սոլյուշնս ՓԲԸ	Տաթևիկ Ավագյան
Թիմ սիսթեմս ՓԲԸ	Լիլիթ Խաչատրյան
Թիմվյուվեր արմենիա ՓԲԸ	Վարդուհի Մեյմարյան
Թեքնոլոջիստ ՓԲԸ	Արսեն Թորոսյան
Տերաքլասուդ ՄՊԸ	Հովհաննես Իսպիրյան
Թեսթինգ հաբ ՄՊԸ	Արթուր Մկրտչյան
Տեսվան ՄՊԸ	Արմեն Գրիգորյան
Տիրսոֆթ ՄՊԸ	Արման Թորոսյան
Թոփսոֆտ ՄՊԸ	Տիգրան Թոփչյան

Տրիադա ստուդիա ՍՊԸ	Արա Աղամյան
Սիմոնյան կրթական հիմնադրամ	Բելլա Վասիլյան
Վոլո ՍՊԸ	Արմեն Քոչարյան
Վեյվաքսես ամ ՍՊԸ	Լևոն Նիկողոսյան
Վի-կոնստրակտ ՍՊԸ	Տարոն Համբարձումյան
Վեբ երեք զարգացման հիմնադրամ	Մետաքսե Ղամբարյան
Վեբբ ֆոնտեն հոլդինգ ՍՊԸ	Մարիամ Սարգսյան
Վայթթոն էքսպերիենս ՍՊԸ	Շուշանիկ Ղալթախչյան
Սմարթ սենդեր ՍՊԸ	Սուրեն Հայրապետյան
Տեխ սերվիսես ՍՊԸ	Տիգրան Գասպարյան
Զելլու ՓԲԸ	Արտակ Զոփուրյան
Զուս ափս ՍՊԸ	Դավիթ Գրիգորյան